ԵԿԱՏԵՐԻՆՈՊԱՐԻ
ԵՐԿԱՆԵՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՆԱՅԻ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
թ. 260
ՂՈՒԿՈՎԱ-ՂՈՒԿՈՑՅԱՆԱԿԱ
68

N160

Հրատարակութիւն «Մեղու» Հայասանեաց լուսոյի

# ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

# ԿՈՎԿԱՍՈՒ ՀԱՅՈՑ ՄԷՋ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԾԻՒՐԹԵՐ)

Հ. ՂՈՒԿԱՍԵԱՆՑ

Հայոց գրականության
Ազգային գրադարան
Ստանձնեալ է

ԹԻՖԼԻՍ
Մ. ՈՍՏԻՆԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ ՊՈԼՈՎ. ՊՐՈՍՊԵԿՏ. ՏՈՒՆ. № 41
1886

A 1/12,971

*Дозволено цензурою Тифлисъ. 4-го Октября 1886 года.*

# ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԻԼԸ ԿՈՎԿԱՍՈՒ ՀԱՅՈՑ ՄԷՋ.

—

(Պ ա տ մ ա կ ա ն ա ն ա ն ա ն ա ն)

—

## Ա.

Ն ա խ ա ծ ա ն ա ն ա ն ա ն ա ն — Բազելեան Ընկերութեան ձեռնարկութիւնը. Ֆելիցիան Զարեմբա և իւր խումբը. Քարոզչաց մուտքը՝ Կովկասեան երկիր. Նոցա հրահանգները. Տեղերի ընտրութիւն և ծրագիր. Շեղումն ծրագրից. Նկատողութիւն այս մասին. Քարոզչաց պատճառաբանութիւնը։

—

Այս նիւթերը ժողովելիս առանձին խնամքով աշխատեցայ, որ ընտրած աղբիւրներս հաւատարիմ լինեն։ Շատ քան քաղեցի պաշտօնական ըստոյգ վաւերագրերից թէ տպած, թէ անտիպ, ինչպիսիք են օրինակ՝ «Акты Кавказской Археографической Коммисіи ТТ. VI, VII և VIII. Շամախու Հայոց թեմական ատենի հնագարանի գործերն, թեմական առաջնորդների գործերն, որոնք քարեհանեցաւ շնորհել ինձ կարդալու գերապատիւ Թադէոս Եպիսկոպոսն Զիլնական, և այլ գրաւոր տեղեկութիւններ, շատ եղելութեանց, մանաւանդ Շամախում անցածներից, անձամբ ականատես եմ եղած. կան դէպքեր, որ յիշում եմ մանկական տարիների տպաւորութիւններով, և կան, որ հասակաւոր և տեղեակ անձներից հարցնելով գիտեմ։ Կարող եմ հաւատացնել ընթերցողներիս, որ եթէ ներկայ արձանագրութեանս մէջ պատահին անճշ-

գութիւններ, այդպիսիք պատահական և յանկամայիցս յառաջացած կը լինին և ոչինչ իրողութեանց կամածին աղաւաղմունք։

Այս էլ յաւելացնեմ, որ իմ անձնական զգացումներս, կարծիքներս ու խորհրդածութիւններս ըստ կարելւոյն չափաւորեցի, թոյլ տալով սակայն, որ փաստն ինքը խօսի իրան համար։

—

1821 թուականի հոկտեմբերի ամսին Շուէյցարիոյ Բազէլ քաղաքի Աւետարանական Բարոյչական Ընկերութեանց յանձնարարութեամբ Աւգուստ Դիտրիխ և Ֆելիցիան Զարեմբա քարոզիչները Պետերբուրգի մէջ գրաւորապէս խնդրում են Ռուսիոյ կառավարութիւնից թոյլատրութիւն՝ հիմնել Անդր-Կովկասում, Սև և Կասպից ծովերի մէջ տեղերում, գերմանական գաղթականութիւններ բարեպաշտ գերդաստաններից բաղկացած, և բանալ յիշեալ գաղթականութեանց մէջ ուսումնարաններ ու տպարաններ, այն նպատակով, որ նոյն երկրի հեթանոս և մահմէդական ժողովրդոց մէջ տարածեն գիտութիւն բանին Աստուծոյ։ Քարոզիչները խնդրում են ընդ նմին շնորհել իրանց էլ այն արտօնութիւններն, որ վայելում է Կովկասեան նահանգում հաստատուած Շուայանդական գաղթականութիւնը *)։ Ալէքսանդր Ա. Կայսեր բարեհաճու-

*) Շուայանդացի գաղթականք 1802—1808 թ. հիւսիսային Կովկասում Պետրոսկ քաղաքին մօտիկ եկել հիմնել էին վերոյիշեալ գաղթականութիւնը, մի գիւղ Կարրաս անունով։

թեամբ Նոքա ստացան իրանց խնդրած իրաւունքը 1822 թ. յունուարին՝ մանաւոր փոփոխութիւններով, որի համար յայտնուեցաւ կոմկասու գլխաւոր կառավարիչ Երմօլովին, և սա հրամանագրեց նահանգապետներին ամեն կերպ օգնելու յիշեալ քահանաներին, որպէս զի Նոքա կարողանան ապահովապէս շրջել ու դնել Դէրբէնդի, Բաղուի և Ղուբայի սահմաններն, ուր դեռ ես կատարեալ իշխանութիւն չէր տիրել՝ նոր նուաճուած լինելու պատճառով։

Սոյն միջոցին վերոյիշեալ երկու քարոզիչներին Պետերբուրգում գալիս միանում են ուրիշ երկուքն էլ՝ Բենց և Հօհենակեր. բայց այս խմբի ղեկավարն և հոգին էր Ֆելիցիան Զարեմբան։ Սա ի ծնէ Լեհացի էր և ազնուական տանից, կոմսի տիտղոսով. ուսած էր Դորպատու համալսարանում և ստացած փիլիսոփայութեան դոկտորի աստիճան, յետոյ դարձած էր քարտուղար սենատի մէջ. վերջը կրօնական գրուածների, մանաւանդ Լուսնդ Շոիլլինդի հեղինակութեան ընթերցմամբ՝ հակամիտեցաւ կրօնաւորութեան և անձնատուր եղաւ քարոզչութեան գործին։

Գիտնական պաշարով Զարեմբայից յետ չէին մնում նորա ընկերակիցներն ևս, որոնցից մինը՝ Դիտրիխ մինչև անգամ Մոսկվայում Սալլանթեան Միք. վարդապետի մօտ սովորել էր Հայոց գրաբար լեզուն։

Այսպէս՝ գործին հարկաւոր համութիւններով զինուորուած՝ քարոզչական խումբը ճանապարհ

ընկաւ Պետերբուրգից և Հաչտարխանի վերայով մտաւ հիւսիսային Կովկաս, որտեղից մտադիր էին անցնել Անդր-Կովկաս և, իրանց ասելով, թերևս և հիւսիսային Պարսկաստան՝ մահմէդականների տրամադրութիւնն իմանալու համար... ապա Ղարաբաղ և այլ տեղեր։ Բազելեան ընկերութիւնը քարոզիչներին տուել էր հետևեալ հրահանգները. 1. «Տարածել Աստուծոյ խօսքը նոյն կողմերի ազգաց և լեզուաց մէջ», առաջնորդ ունենալով Մեծ-Բրիտանիոյ և Այլասերից Աստուածաշնչի ընկերութեան իմաստնաբար յօրինած կանոններն ու հաստատութիւնը։ 2. սովորել տեղական նշանաւոր և Աստուծոյ խօսքը տարածելու համար կարևոր լեզուներից մի քանիսը — արաբերէն, պարսկերէն, թաթարերէն, թուրքերէն և նոր-յունարէն։ Զնզանից մինն, ասած է հրահանգների մէջ, գիտէ սպառնական լեզուներն և նոր-յունարէնի տարերքը. միւսն արաբերէնի և պարսկերէնի սկզբունքը։ 3. Հիմնել մի յարմարաւոր տեղ տպարան՝ Ս. գիրքը զանազան լեզուներով տպելու համար. տպելու նմանագրեանք իրանց հիմնած ուսումնարանների համար։

Մենք տեսանք, որ քարոզիչներն սկզբում մուտ գործեցին հիւսիսային Կովկաս. այստեղ միքանի ժամանակից յետոյ նոցա բռնած ընթացքը կասկածների տեղիք տուաւ. — մի գուցէ Աստուծոյ բանի քարոզիչներն եկած լինեն այն նորանուաճ մահմէդական աշխարհներում աւելի քաղաքական նպատակների ծառայող քարոզութիւններ անելու.

այս պատճառով տեղական կառավարութիւնն ըստկսաւ աչք պահել նոցա վերայ։ Շատ չ'անցած՝ քարոզիչները պատրաստուեցան Ղուրայի կողմերով անցնել դէպի Բաքու, Շիրվան, Ղարաբաղ, և այլն, բայց Կովկասու կառավարութեան կողմից հրաւէր ստացան Մոզդոկով և Վլադիկաւկասով գալ Տրփիխիս, ըստ որում, ասուած էր, նոցա ընտրած ճանապարհները շատ վտանգաւոր են։

Այս կամ այն ճանապարհով շրջելով և գընելով Գանձակի, Ղարաբաղի, Շամախու և Բաքուի գաւառները՝ պատուելի քարոզիչները յարմարագոյն համարեցին սկզբում դեռ հաստատուել Շուշի քաղաքում, յետոյ Շամախում և յետոյ կարելի է թէ Գանձակում։ Շուշի քաղաքում, գրում են նոքա Կովկասու գլխաւոր կառավարիչ գեներալ Երմօլովին 1823 թ. Նոյեմբերի 21 ին, ուր շատ մեծ տարաձութեամբ ազատ հոգ կայ, Իշխան Մադաթովի թոյլտուութեամբ մենք զննութիւն արինք և գտանք մի բաւականին ընդարձակ և մեր անհրաժեշտ չինութեանց ու բանջարանոցների համար պատշաճաւոր գետին...Անհրաժեշտապէս հարկաւոր և կարեւոր է մեզ ազատութիւն՝ մկրտել և ընդունել 'ի թիւ քրիստոնէից այն մահմեդականներին, որոնք իրանց աւետարանուած Աստուծոյ խօսքի ազդեցութեամբ կը հաւատան մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որպէս զի կարողանանք հասնել մեր նախորոշեալ նպատակին, երբ այս երկրում բնակելու լինենք։ Վասն զի թէպէտ մենք մտադիր ենք սկզբում մի քանի տարի շարունակ առանձին

ուշադրութիւն դարձնել Աստուծոյ խօսքը տարածելու ՀԻՄԻՆ Հայոց մէջ և հաստատելու սոցա համար ուսումնարաններ, այլ սակայն մեր իսկական նպատակն է այն, որ գալուց ժամանակներում առաւելապէս մահմէդականներին քարոզենք աշխարհի փրկիչ Քրիստոսի աւետարանը» (Акты Кавк. Арх. Ком. Т. VI ст. 469).

Այսպէս կարճ միջոցում յարգելի քարոզիչները մոռացել էին այն ծրագիրն, որ բարձրագոյն իրաւունք ինդրելու ժամանակ՝ իրանց համար առաջնորդող էին ցոյց տուել. մոռացել էին, որ իրանց քարոզութիւնը պիտի կատարուէր միայն մահմէդական և հեթանոս ժողովրդոց մէջ։ Եւ երբ նոցա այդ մոռացկոտութեան մասին նկատողութիւն արաւ գեներալ Վելիամինովը, զգալ տալով նրան, որ Հայերին կրօնափոխ անելը չէ կարող թոյլատրուել պետական օրէնքներով, որոնց համաձայն քրիստոնեայ ժողովրդոց կրօնափոխ անելու իրաւունքը վերապահուում է միմիայն Յունա Ռուսական տիրող դաւանութեանը,—այն ժամանակ քարոզիչները ձգձգուն դարձուածներով սկսան արդարացնել իրանց, պատասխանելով, թէ «իրանց նպատակն է ընկերութեան կանոններին համաձայն քրիստոնէից մէջ առ հասարակ տարածել Աստուծոյ խօսքը. իսկ կրօնափոխ կը դարձնեն միայն մահմէդականներին, հեթանոսներին և հրէաներին։ Քրիստոնէից համար, ասում են, մենք կը հիմնենք ուսումնարաններ, ուր կ՚աւանդուի Աստուծոյ խօսքն, որ հաստատապէս ամեն քրիստոնեաներինն է։ Մենք

գիտենք, շարունակում են. որ մարդ ինչ եկեղեցու էլ պատկանելիս լինի՝ կը փրկուի, եթէ սիրան Աստուծուն նուիրէ...» (Акты Кавк. Арх. Ком. Т. VI ст. 469).

Քարոզչաց համար անկասկածելի էր ուրեմն, որ Հայաստանեայց եկեղեցու որդւոց սրտերը չեն նուիրուած Աստուծուն. ապացոյց կարող է լինել իրանց վկայութիւնն, որ բառ առ բառ յառաջ եմ բերում ազգային լուսաւորութեան նախարարին մատուցած նոցա մէկ զեկուցագրից. «Մեր շրջակայութեան ժամանակ, ասում են, Հայոց ազգը գտանք յոյժ աբուսաուելի տգիտութեան մէջ. նոքա իրանց բարքով մահմէդականաց մէջ զգուանք էին յարուցանում դէպի քրիստոնէութիւնն, այն ինչ մենք ցանկանում ենք նոյնը տարածել մահմէդականաց մէջ»

Ահա այս տեսակ հիմքեր պատճառարանելով ժրաջան քահանաներն որոշեցին իրանց սկզբնական գործունէութիւնը կենդրոնացնել Հայոց մէջ.

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅՈՑ
ԳՐԱԴԱՐԱՆ

Բ.

Քարոզիչների գործունէութեան սկիզբն Շուշիում. Մտերմական յարաբերութիւններ. Բարեյաջող հանգամանքներ քարոզիչների համար։ Միրզա-Ֆարուխն իբրև գործակից քարոզիչներին. Ո՞վ է սա. Ի՞նչպէս են ներկայացնում քարոզիչներն իրանց գործունէութիւն։

—

Այսպէս ուրեմն՝ քարոզիչները Շուշին պարարտ և բեղմնաւոր հող համարելով աւետարանական սերմնացանութեան համար՝ 1823 թուականին հաստատուեցան այս քաղաքում և իսկոյն ձեռնարկեցին կառուցանել հարկաւոր շինութիւններն ուսումնարանի, տպարանի և այլոց համար,— երեք քարուկիր կրկնայարկ տուն ամենայն յարմարութիւններով, շուրջը պարտէզ, ջուր, ծաղկոցներ մինչև յիշեալ շինութեանց պատրաստուիլը տեղաւորուեցան Արդուման անունով մի հայ վաճառականի տանը։

Առաջին տարիներում քարոզիչներն իրանց ընտելական վարմունքով ու լեզուով, իրանց հրմտութիւններով շատ հաճելի եղան ամեն դասակարգի ժողովրդեան համար։ Տեղական կառավարիչներից շատերի խելքը գնում էր նոցա մարդասիրական գործունէութեանց և ընդարձակ գիտութեանց վերայ, որ այն պատուելիներն աշխատում էին լրացնել տեղական լեզուների ուսումնասիրութեամբ. օրինակի համար քարոզիչներից մէկը՝ Հաաց սովորեցաւ Ղարաբաղու Հայոց ժողովրդական բարբառը։

1827 թ. արդէն բացուած էին Շուշիում քարոզչաց թէ ուսումնարանը, թէ տպարանը։ Գործը շատ յաջող էր ընթանում։ Հայ մանկունք, ծարաւիք ուսման, սկսան լցուել այս ուսումնարանը. Հայ ծնողները չէին խորշում իրանց զաւակներին ուղարկել այդտեղ. և ոմանք էլ պէտք է ուղարկէին, քանի որ ուրիշ փոքր ի շատէ բաւական դպրոց չը կար։ Երկիրը դեռ վաղուց չէր որ նուաճուել էր Ռուսաց իշխանութեան տակ **). պատերազմական երկարատև յուզմունքները դեռ չէին հանդարտուած, մանաւանդ թէ պատրաստւում էր նոր իրարանցումն Ռուսաց, Պարսից և Ցաճկաց մէջ. Հայոց թեմական դպրոցի մասին խօսք անգամ չէր կարող լինել, քանի որ ինքը հոգևոր իշխանութիւնը դեռ երերուն և անկազմ վիճակի մէջ էր. Էջմիածնայ աթոռը տակաւին հեծում էր ժամանակի խառնակ ու ձախորդ հանգամանքների երեսից։ Թեմական առաջնորդութիւն ևս դեռ չէր հաստատուած Շուշիում, այլ այս քաղաքը կազմում էր մի վիճակն Աղուանից կաթուղիկոսութեան, որ մետրապոլտութեան էր փոխուած։ Մետրապոլտի աթոռն էլ Գանձասարու վանքն էր, ուր այդ ժամանակ աթոռակալում էր վշտահար Սարգիս մետրապոլիտն, որ իւր զառամելութեան պատ-

**) Դիւրիստանի դաշնադրութեան համաձայն՝ Ղարաբաղի, Գանձակի, Շէքի, Շիրվանի, Դէրբէնդի, Ղուբայի, Բաքուի և Թալիշի խանութիւնները երկար կռիւներից յետոյ վերջնականապէս մնացին Ռուսաց ձեռքը 1813 թ. հոկտեմբեր ամսին։

հառով ոչ միայն չէր կարող հոգի մտաւոր և բարոյական պահանջների մասին հոգալ, այլ աթոռին վերաբերեալ վարչական գործերն անգամ յանձնել էր իւր եղբօրորդի Բաղդասար վարդապետին։ Իսկ երբ, 1828 թ., Յարգիս մեսրոպոլտի մահուանից յետոյ, արդէն եպիսկոպոս Բաղդասարն ստանձնեց Գանձասարու մեսրոպոլտութիւնն՝ սա էլ այնքան զբաղուած էր վանքի բազմահարուստ կալուածների խնամուած գործերով և վանական բարեկարգութիւններով, որ միջոց չունէր Շուշու վերայ առանձին ուշադրութիւն դարձնելու։

Այսպէս անտէր Շուշին ժրաջան մշակների համար ներկայանում էր իրրև մի կուսական ուժով և արգաւանդ հող։

Քարոզիչներն աշխատում էին իրանց կողմը գրաւել ամենայն անձի, որ գիրքով, կամ ազդեցութեամբ, կամ հմտութեամբ կարող էր նպաստել իրանց ձեռնարկութեանցը։ Նոքա յարաբերութիւններ հաստատեցին Բաղդասար մեսրոպոլտի հետ, որ ամենևին չէր խորշում սկզբներում նոցա ցոյց տուած մտերմութիւնից, շատ անգամ ընդունում էր իւր մօտ և զրուցարութեամբ ժամեր էր անցկացնում հետները։ Քարոզիչներն իրանց կողմից զուրգուրանք էին ցոյց տալիս նրան, թէ և իհարկէ չէին ճանաչում նորա մէջ հոգեւորական արժանաւորութիւններ, մարդերում ծիծաղում էին նորա պարզութեան վերայ և չէին հաւանում նրա հաւատքը։ Ինքը Զարեմբան շատ անգամ ասում էր. «Լաւ մարդ է մեսրոպոլիտը, բայց հաւատք

չունիս. ի հարկէ խօսքը քարոզչի իրան հաւանած հաւատքի մասին է։

Նկուղը մշակները ջանք էին անում, թէև ապարդիւն, մտերմութիւն հաստատել նման գիտնական Յովսէփի վարդապետի հետ, որ մի սրբակրօն և ճգնազգեաց մարդ էր, առանձնացած Թառթառ գետի ափին գտնուող Ս. Յակոբայ վանքում։ Սա նոյն Յովսէփի վարդապետն է, որ մի հայերէնի բառգիրք էլ ունի յօրինած՝ գրաբարից աշխարհաբար, 1830 թ. Շուշիում տպուած։ Սորա անունը պատկառանքով և ակնածութեամբ էր յիշւում բոլոր շրջակայքում։

Շուշուայ մէջ կար մի բաւականին բանիրուն վարդապետ ևս, Պօղոս Ղարաբաղցի, որ հայերէն գրաբարի քերականութիւն էլ ունի յօրինած *)։ Սկզբներում ոչ միայն հակառակ չէր բողոքական քարոզիչներին, այլ մինչև անգամ դասեր էր յանձն առել նոցա հաստատած դպրոցում։

Ամենից աւելի գործակցութիւն, թէ գրաւոր և թէ բանաւոր աշխատութեանց մէջ, գտան քարոզիչները Միրզա-Ֆարուխ անուանեալ հայի կողմից։

*) Համառօտութիւն հայկական քերականութեան աշխատասիրութեամբ տեառն Պօղոսի գերիմաստ վարդապետի Ղարաբաղցւոյ՝ ի միաբանութենէ սրբոյ Յակոբէ։ Ի Հայրապետութեան Տ. Եփրեմի Սրբազնասուրբ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց։ Հրամանաւ Աստուածարեալ քահանայապետութեան Տ. Ներսիսի Առաքելազարդ Սրբազան Արքի episkopոսի և վիճակաւոր առաջնորդի ամենայն Հայոց Վրաստանի և այլոց։ 1829 —ԹՎ ՀԸ։ ի Շուշի։

Սա բաւականին հետաքրքրելի մի անձնաւորութիւն է. ուստի ընթերցողի համար աւելորդ չեմ համարում հետեւեալ համառօտ կենսագրական տեղեկութիւնը նրա մասին. —

— Միրզա-Ֆարուխն է Շուշուայ գաւառի Թազաս գիւղի բնակիչ Մինաս Գաբրիելեանի որդին։ Իւր իսկական անունն էր Յարութիւն։ Երբ 1805 թ. ամառան առաջին անգամ Իրանները գրաւում են Ղարաբաղի խանութիւնը, և յետոյ Պարսիկները նոր օգնական ստանալով մտնում են նոյն խանութեան սահմանները, արքայազն Աբաս-Միրզայի և գնդապետ Կարեագինի փոփոխակի յաջողութեամբ վարած կռիւների ժամանակ, պարսիկ ձիաւորները յարձակվում գերի են տանում մի քանի հայ արքաներ, ի թիւս որոց և Յարութիւնին, որ այն ժամանակ 5—6 տարեկան մանուկ էր։ Գերիները գերի վարած մանկանց ընծայ էին մատուցանում իրանց իշխանաւորներին կամ մերձաւորներին։ Յարութիւնն ընծայուեցաւ պարսից զորավարներից մէկին՝ Ամիրխան ասրդարին, որ Աբաս-Միրզայի քեռին էր. սա էլ իւր կողմից փէշքէշ ուղարկեց իւր կնոջը՝ Ֆաթ-Ալի շահի գաւերը։ Սորա հովանաւորութեամբ Յարութիւնն, որին տուել էին Ֆարուխ անունն, ի հարկէ արդէն իրրև մահմէդական, դաստիարակվում էր շահի որդուց հետ ի միասին. ուսումնում էր Պարսից և Արաբացոց լեզուներն և մեծ յառաջադիմութիւն էր ցոյց տալիս։ Բաւական տարեկան եղած չեղած՝ Ֆարուխը մեծ միրզա էր և ասրդարի քարտուղարը թէ հրան

քաղաքում (Միրզա-Ֆարուխի հետ գտնվում էր այդտեղ և Միրզա-Նուսուֆ հայ երիտասարդը, Մասկվայի համալսարանի պրոֆեսոր Ղևերսեանցի հայրը, նոյնպէս մահմէդական դարձած)։

1826 թուականին Պարսիկները նորէն մտին Կովկասեան երկիրները. զորքի առաջնորդներից մէկն էր դարձեալ Ամիրխան սարդարը. նրա բանակումն էր և Միրզա-Ֆարուխը։ Սեպտեմբեր ամսին Շամքորի և Գանձակի մօտ Պարսիկները սաստիկ ջարդ կրեցին գեներալ Մադաթեանից և Պասկևիչից. Ամիրխան սարդարն սպանուեցաւ. Պարսից զորքը ցրուեցաւ փախաւ մինչև Արտաշատկան։ Այստեղ Ամիրխան սարդարի յաջորդն այլ ևս երես չէր ցոյց տալիս Միրզա-Ֆարուխին, և խրատութեամբ էր վարում հետը։ Այս հանգամանքն առիթ տուաւ նրան երևան գարձնել դէպի իւր ծննդավայրը։ Միրզան գիտէր, որ իւր ծնողները հայ են. գիտէր նոցա անունը. գիտէր որ ինքը թաղուած գիւղիցն է. բայց սորանից աւելի էլ ոչինչ չը գիտէր. Հայոց կրօնից ոչինչ չէր հասկանում. Հայոց լեզուից մի բառ չէր մնացել մտքում, և ինքը ջերմեռանդ մահմէդական էր։ Նոր սարդարի կողմա վարմունքը շատ էր վիրաւորել նրան, նա հնարք էր որոնում ժամուկ փախչելու։ Բանակի մէջ նրան վիճակակից և նոյն ձգտումն ունեցող մարդիկ շատ կային. բայց նա ամենքից թաքցնում էր իւր դիտաւորութիւնը, վախենալով, որ միգուցէ գաղտնիքը յայտնուի։ Վերջապէս մի յաջող դէպքից օգուտ քաղելով նա փախաւ դէպի

Ղարաբաղ, գիշերելով Երասխ գետի կղզեակներից մեկի վերայ։ Կարճ ժամանակից յետոյ հասաւ իւր ծնողական յարկի տակ, իւր ծնողների գիրկը. սակայն դեռ շարունակում էր մնալ իրրև մահմէդական։ Հօր հետ միասին նա պէտք է պարապէր երկրագործութեամբ. բայց այս տեսակ պարապման ընդունակ չէր։ Նա գնաց Շուշի քաղաք աւելի յարմար գործ ճարելու։ Հայերը նրան համոզում էին իւր նախնեաց կրօնքին դառնալու։ Այս բանի համար բաւականին աշխատեցաւ Պօղոս վարդապետը։ Ի վերջոյ Միրզան վճռեց քրիստոնէութիւնն ընդունել և ցանկանում էր այս կրօնքի մասին լիուլի, գոհացուցիչ բացատրութիւններ լսել։ Նա լսում էր Պօղոս վարդապետին. գնաց և Յովսէփ վարդապետի մօտ. բայց ամենից համոզական մեկնութիւններ, ընդ սին և արդիւնաւոր պաշտօն նա գտաւ միայն աւետարանական քարոզիչների մօտ, որոնց համար նա մի թանգագին գիւտ էր։

Այսպէս արդէն քրիստոնեայ Միրզա-Ֆարուխը շատ օգնեց քարոզիչներին նոցա զանազան թարգմանութեանց մէջ. նա հիանալի կերպով գիտէր Պարսկերէն, արաբերէն և Ադերբէջանի թուրքերէն։ Սորա օգնութեամբն էր, որ քարոզիչները ապագրեցին իրանց տպարանում, ի թիւս այլ գրքոյկների, որ ունէին կրօնական-բարոյական բովանդակութիւն, դուրանի մի քանի հատուածները հայերէն գրերով և հայերէն թարգմանութեամբ՝ մեկնութիւններով հանդերձ։

Բացի Միրզա-Ֆարուխից քարոզիչները գրաւել էին և ուրիշ անձանց, որոնց թւում կային երկու սարկաւագներ՝ Բարսեղ և Մովսէս։ Եւ առհասարակ նոքա ամենայն ջանք գործ էին դնում իրանց ոյժերն ու ազդեցութիւնը մեծացնել նորանոր և տեղական պարագայներին նպաստաւոր օժանդակներով։

Թէ ինչպէս էին վարում պատուիրները Աստուծոյ բանի տարածման գործը, թէ ինչ ջանքեր էին գործ դնում հայոց «ամենաողբալի ոգիտութիւնը» փարատելու՝ խոստովանում եմ, որ մանրամասնութեամբ չը գիտեմ։ Իրանք քարոզիչներն այն զեկուցագրի մէջ, որ գերմաներէն լեզուով մատուցին ազգ. լուս. նախարարին 1831 թ. յունիսին՝ իրանց դէմ յարուցուած բողոքների առաջ արդարանալու համար, հետևեալ կերպով են նկարագրում իրանց աշխատութիւնն.

«Մեր կարեկցութիւնն առ Հայս, որպէս և նոցա խնդիրքն, ասում են, հարկադրեցին մեզ միջոց տալ նոցա կարդալու Աստուածաշունչ գիրքն, որի համար չը խնայեցինք ոչ ջանք, ոչ ծախք. իսկ մենք մտադիր էինք տարածել նոցա մէջ Աստուածաշունչն, որի օրինակներն ունէինք Բիբլիական ընկերութիւնից։ Մեր նպատակն էր քաջալերել Հայերին ուսումնարան բանալով, որպէս զի նոքա էլ սկսեն բանալ, ինչպէս որ Աստուծոյ խօսքը նոցա մէջ տարածելիս՝ մեր գլխաւոր նպատակներից մէկն այն էր, որ սուրբ եռանդ զարթեցնենք նոցա մէջ դէպի ճշմարտութիւնն և նոցանով օգնա-

կաններ գտնենք մեզ՝ Քրիստոսի Աւետարանը մահ-
մէդականների մէջ տարածելու ժամանակ։ Ցետոյ
յայտնում են, որ ուսումնարանը հիմնել են 1827
թուին, ուր մի տարի յետոյ եղել են մինչև 130
աշակերտ։ Սկզբում ուսուցիչ են ընդունել Հայե-
րից մէկին, որ ուսել էր Մոսկվայի Լազարեան
ճեմարանում (?)։ Քիչ ժամանակից յետոյ ուսում-
նարանն ունեցել է երկու դասարան, որոնցից
բարձրի մէջ դասատու է եղել նաև Պօղոս վար-
դապետն։ Մինչև 1830 թուականի կէսն, երբ 70 ի
չափ աշակերտ ունէին, իրանց ուսումնարանում
դասատու էր Մովսէս սարկաւագն, որին յետոյ
փոխարինել է մի ուրիշ հայ երիտասարդ՝ վերին-
ներին աշակերտ։ «Մենք հսկում էինք, ասում են,
դասատուութեան մեթոդին, բարոյականութեանը,
կարգապահութեանն ու աշխատութեանը։ Ներկ-
բալի էր, բացագանչում են, նայել մանկանց վե-
րայ, թէ ինչպիսի եռանդով ու յառաջադիմու-
թեամբ ուսանում էին նոքա...։ Մանկունք զանա-
զան դասակարգերից էին, բայց մենք աշխատում
էինք, որ չքաւորներ չլինին։ Նոքա հասակով 10—
18 տարեկան էին, մեծ մասամբ Ղարաբաղցի
Հայք։ Սովորում էին հայերէն գրել և կարդալ,
ընթեռնում էին Նոր Կտակարան, մասամբ և Հի-
նը. վարժվում էին թարգմանութեան մէջ՝ գրա-
բարից աշխարհաբար և հակադարձօրէն։ Մեզանից
մինն ուսուցանում էր թուաբանութիւն և աշխար-
հագրութիւն, կազմելով ծոցի համար և հայերէն
դասագրքեր։ Մի ժամանակ աշակերտներից ոմանց

ուսուցանում էին նաև Աստուած լեզու... Բացի Ս. Գրքից՝ մնացած գրքերը սովորաբար էին — Հայերէն այբբենարան, որ մեզանից մէկը մշակել էր լաւագոյն ադիւսակներով, Սաղմոսի առաջին կանոնը՝ վանկերով, քերականութիւն՝ Պօղոս վարդապետի, քերականութիւն՝ Միքայէլի (Պարանթեանց), որ Մոսկվայումն է, Արքագան Պատմութիւն, որ վաղուց ի վեր յայտնի էր Հայոց մէջ և որ մենք նորէն տպագրեցինք, և վերջապէս հայերէն Հրահանգ (քրիստոնէական հաւատոց) տպեալ ի Տփխիս 1825 թուականին։

Երկու տարկաւագունք սովորում էին մեզանից մէկի մօտ յունարէն և իբրև տարան օժանդակ լատիներէն. իսկ մէկը սովորում էր անգլիերէն։ Որա էլ օգնում էին իրանց ուսուցչին թարգմանելու նոր Կտակարանը գրաբարից աշխարհաբար *)։ Որքա միտք ունէին երբայերէն էլ սովորել, որ Ս. Գիրքը բնագրով կարդան։ (Акты Кавк. Арх. Ком. У. VII, ст. 308).

Ցառաջ բերելով քարոզիչների իրանց անձն արդարացնելու համար գրուած պաշտօնական գրութիւնից այս հատուածը՝ թողնում եմ ընթերցողին ինքնին գաղափար կազմելու նոցա գործունէութեան չափի ու եղանակի մասին։

*) Այս թարգմանութիւնը տպուեցաւ Մոսկվայում 1831 թուին («Հիւսիսափայլ» 1862 թ. № 2. «Սուրբ թարգմանիչների գարը»։

ԱՆԱԿՍՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ

## Գ.

Գայթակղութեանց սկիզբն. Կասկածներ քարոզչաց ընթացքի վերաբերմամբ. Յուզումն ժողովրդեան. Հոգևոր իշխանութեան միջամտութիւնը քարոզչաց կրօնափոխական գործունէութիւնը դադարացնելու համար. Երկու կրօնափոխ սարկաւագները և նոցա պաշտպան Զարեմբան. Իշխան Ռևերսեանի կարծիքը քարոզչաց նկատմամբ. Ռնեիչ Զաքարիա վարդապետը Շուշիում. Մի հատուած քարոզչաց զեկուցագրից. Նոցա յարատևութիւնը գործունէութեան մէջ։

—

Նախընթաց գլխում յառաջ բերած զեկուցագրի հատուածից կարելի էր տեսնել, որ Շուշուայ Հայ ժողովուրդը 1830 թ. սկզբում արդէն սկսել էր կասկածել քարոզիչների մարդասիրական նպատակների անկեղծութեան վերայ և նկատում էր նոցա բռնած ընթացքի մէջ ձգտումն Հայերին խորթացնելու մայրենի եկեղեցու ծոցից։ Մովսէս և Բարսեղ սարկաւագները, որ ծառայում էին քարոզիչների ուսումնարանում և իրանք էլ ուսանում էին նոցա մօտ, ոչ միայն չէին յաճախում Հայոց եկեղեցին իրանց պաշտօնը կատարելու, այլ և յայտնի կերպով առանց ամաչելու քամահրում էին եկեղեցու նուիրական արարողութիւնները։ Ժողովրդի մէջ էլ սկսան երևել թուլամտութեանց գայթակղութեան նշաններ։ Կասկածներն ու զրդռումները հետզհետէ աւելացան, մանաւանդ երբ Ղարաբաղցի Գէորգ վարդապետն, որ դիտնական մարդ էր ճանաչուած ժողովրդի աչքում, թողեց իւր դասերը քարոզիչների ուսումնարանում և ըս-

կաւ հանկացնել ժողովրդին թէ որքան վնասակար են Հայ եկեղեցւոյ համար «Աստուծոյ խօսքի» այդ եկուոր մշակների խմական նպատակները։ Ինոզներ հետզհետէ դուրս էին անում իրանց որդւոց քարոզիչների ուսումնարանից. նոցա ուսման կարօտը լցուցանելու համար Պօղոս վարդապետը բացարաւ առանձին դպրոց։ Յուզմունքը քանի գնաց մեծացաւ։

Այս յուզմանց լուրն երբ հասաւ Էջմիածին՝ Եփրեմ Կաթուղիկոսը նշանակեց Զաքարիա վարդապետին՝ գնալ ստուգել գործերի դրութիւնը Շուշիում, և պահանջեց երկու մոլորուած սարգաւանկներին՝ ներկայանալու հոգեոր դատարանին բացատրութեանց համար։ Սակայն այս պարոնները, քաջալերուելով իրանց ուսուցիչների խրատներից՝ չը կամեցան անսալ իշխանութեան պատուիրանին, մանաւանդ երբ տեսնում էին, որ քարոզիչներին սաստիկ պաշտպան և նոցա գործողութեանց ջատագով էր տեղական միւսլիման նահանգների կառավարիչ գնդապետ Միկլաշևսկին։

Այսու ամենայնիւ սարկաւագները չը կարողացան խուսափել դատաստանից. նոքա ուղարկվեցան Էջմիածին մարմնաւոր իշխանութեան կարգադրութեամբ և, չը գիտեմ ինչու, առաջ պէտք էր Թիֆլիս գնային։ Նոցա հետ միասին և նոցա դատը պաշտպանելու համար Թիֆլիզ եկաւ նաև միսիոնար Ֆ. Զարեմբան, ըստ ասութեան վերոյիշեալ Միկլաշևսկու, «միմիայն ծայրագոյն մարդասիրութիւնից ստիպուած, որ պաշտպանէ նոցա և

միջնորդութիւն խնդրէ։ Թիֆլիզում նա մի պաշտպանողական գրութիւն մատոյց գեներալ Ստրնկալովին, տեղեկացրելով ընդ սին Շուշիում ունեցած իրանց գործողութեանց և տեղական Հայոց հոգեորականների արարմանց մասին։ Ընկերութեան նպատակն է, յաւելում է նա այս տեղեկագրի մէջ, ոչ այլ ինչ երբէք, եթէ ոչ միայն Հայոց լուսաւորութիւնն, որոնք ցաւ ի սիրտ ասել թագուած են տգիտութեան մէջ։ և նա (ընկերութիւնն) իւր գլխաւոր ուշադրութիւնը միշտ դարձրած է եղել մանմղականաց վերայ։

Զարեմբայի խորհրդով սարկաւագները խընդրեցին դատել իրանց Թուսաց պետութեան դատաստանով և չ՝ուզարկել Էջմիածին, ուր իրր թէ կարող էին զոհ գնալ կրքերի և կողմնապահութեան։ Ղոցա խնդիրն անկատար մնաց, և պէտք էր ճանապարհուէին Էջմիածին։ Սակայն նոցանից մէկը դեռ չ՝ուզեորուած մնաց Թիֆլիզում։ Միւսը տարուեցաւ Էջմիածին։ Թէ ինչպէս գնաց տեղ հասաւ այս սարկաւագն և ինչպէս վարուեցան հետը,—սոյդը չը գիտեմ։ բայց հաւանական է, որ մեղմութեամբ վարուէին, վասն զի Հայկական նահանգի (այժմ Երևանու նահանգ կոչուածն) այն ժամանակվայ կառավարիչ իշխան Բեհրութեանին յանձնարարութիւն եղաւ Կովկասեան կառավարութիւնից՝ միջնորդութիւն անել սարկաւագի համար, եթէ որ Էջմիածնում աւելի խիստ պատիժ նշանակեն նրան, քան որչափ արժանի էր նա ըստ իւր յանցանաց։

Եւ այն ինչ Զաքարիա վարդապետը կաթուղիկոսի կարգադրութեամբ գնաց Շուշի անդնուանդը ստուգելու գործի էութիւնը՝ Սինոդոսն էլ իւր կողմից որոշեց միսիոնարների մարդասիրութեան մասին յայտնել Իշխան Բենդրեանին և ասատրին գործոց նախարարին, խնդրելով և անգենկութիւն, թէ Բաղելեան քարոզչաց գործողութիւնները արդեաք բարձրագոյնս թոյլատրուած են, ինչպէս իրանք են հաւատացնում. Լիզմիածնի Սինոդոսն իւր այս որոշումն Իշխ. Բենդրեանին յայտնելու և նորա հետ այս մասին խորհրդակցելու համար ուղարկեց Յովհաննէս եպիսկոպոս Կարապետն (յետոյ կաթուղիկոս) և Ստեփան եպիսկոպոս Գեղամեանին։ Իշխանը խորհուրդ տուաւ Արքեպիսկոպոսներին և սոցա ձեռքով խնդրեց Գ. Կաթուղիկոսին նախ և առաջ հրամայել Զաքարիա վարդապետին՝ որ ամենայն ինչ ստուգէ և յայտարարէ Սինոդոսին ի անգենկութիւն. իսկ ինքը զեկուցագիր ուղարկեց գեներալ-ադիւտանտ Ստրեկալովին վերոյիշեալ անցքերի մասին, վերջը յաւելլով իւր կարծիքը, թէ՝ թոյլ պատմուածներն եթէ ճշմարիտ են՝ դրանից կարող է հետևել մեծ գժտութիւն ժողովրդի և հոգևորականութեան մէջ, և թէ՝ «լաւ է հաւատարիմ հպատակ ունենալ Հայերին, որոնք չատ անգամ ցոյց են տուել իրանց անյողդողդ մտերմութիւնը մեր կառավարութեանը. քան թէ յիշեալ ընկերութեան (Բաղելեան) պատկանող անդամներին»։

Երբ այս ամէն եղելութեանցն իրազեկ եղաւ

Կովկասու կուսակալ կոմս Պասկևիչն Ստրեկալովի մատուցած յայտարարութեանմբ՝ 1830 թ. նոյ. 9-ին և 1831 թ. յունվ. 1-ին ուղարկուած զեկուցագրերով տեղեկութիւն առաւ արտաքին գործոց նախարար Բլուդովին, յանելով թէ որովհետև այդ ամենը յառաջ է գալիս Բազելեան միսիոնարների իրաւանց անորոշութիւնից, ուստի լաւ կը լինի, իւր կարծիքով, մի քանի պարզ կանոններ սահմանել նոցա համար։ Եւ այս նոյն 1831 թ. փետ. 20-ին նախարարն պատասխան է գրում կոմս Պասկևիչին և ի միջի այլոց յայտնում իւր որոշումն, թէ՝ ըստ որում պետութեան մէջ կրօնական թոյլտուութիւն է. ուստի պէտք է յարգել Հայ հոգևորականութեան պահանջը և չը թողնել այլոց զօրով միջամուխ լինել նրանց եկեղեցին. միւս կողմից եթէ մէկը ցանկանայ կրօնափոխ լինել իւր յօժար կամքով և ո՛չ ուրիշի խրատով կամ դրդմամբ՝ նորան էլ պէտք է թոյլատրութիւն լինի։ (Акты Кавк. Арх. ком. т. VII.

Սակայն այսքան իրարանցումն, այսքան յուզմունքն արդեօք չէին լինում քարոզիչներին, իրանց խօսքով ասել, առանց տարապարտ զլխացաւանք տալու իշխանաւորներին՝ շարունակելու իրանց գործը հարկաւոր եռանդով, քանի որ նոցանից այդ մասին տեղեկութիւն պահանջող և նոցա գործերին միջամուխ լինող չը կայ։ Երբ տեսան նոքա, որ ժողովուրդը մասամբ ինքնուրոյնաբար, մասամբ Զօրս և Զաքարիա վարդապետների խրատներին անսալով, պաղեցաւ քարոզչա-

կան ուսումնարաններից և աշակերտների թիւն զգալի կերպով պակասում էր հետզհետէ, այնուհետև իրանց ուշադրութիւնը մեծացրին՝ լոյսը կենդրոնից դուրս ծաւալելու նպատակի վերայ։ Ընտանեալ հասուածը յառաջ եմ բերում նոցա այն գրութիւնից, որ յղեցին ազգային լուսաւորութեան նախարարին 1831 թ. յունիսին և որի մասին յիշած էր վերևումն էլ՝

«(Երկու սարկաւագներին) զատելով մեր ընկերութիւնից, որին նոքա շատ պիտանի էին, վարդապետներից մէկն սկսաւ անիծել և սպառնալ հայերին, որ մեզ մատ չ'ուզարկին իրանց որդւոց, և նորա ձայնին ականջ չը դրին խեղճ ծնողները։ Մի քանի ժամանակից յետոյ նորա նորէն ցանկութիւն էին յայտնում մեզ յանձնել իրանց որդւոց»։

«Մենք սկսել էինք խուանդով ուսուցանել քանի մի աշակերտների, որպէս զի յետոյ սորա էլ գիւղերում և քաղաքներում դպրոցներ բանան՝ մասամբ իւիք մեր դրամական օժանդակութեամբ։ Այժմ այդպիսի ուսումնարաններ Շուշուայ բերդում կան երկու հատ, իսկ Ղարաբաղի գաւառի գիւղերում՝ երեք հատ։ Բոցա ուսուցիչներից երկուսը հասակաւոր մարդիկ են։ Հինգ դպրոցներից իւրաքանչիւրն ունի 20—30 աշակերտ։ Գիւղերում ձմեռը շատ աշակերտներ են լինում, ամառը՝ քիչ։ և առ հասարակ աշակերտաց թիւը փոփոխվում է։ դեռ կ'անցնի քանի տարի ևս, ժողովուրդը կ'ընտելանայ և կը սիրէ կրթութիւնը, և ամեն բան կարգին կ'երթայ։

« Մենք խնդրում ենք հավանաբար այս ուսուցիչներին, որոնց մենք կրթել պատրաստել ենք միմիայն զուտ քրիստոնեական սիրոյ համար, առանց որ և է կողմնակի նպատակի, և որոնց ջանքը յոյժ օգտակար է ժողովրդի համար. Նոյնպէս և խնդրում ենք ազատել նոցա հարկերից ու տուրքերից։ Եւ եթէ նոքա մինչև անգամ կ'երթեն մեր տեսչութեան շրջանից և կ'ենթարկուին Անդրկովկասեան ուսումնարանաց տեսչութեանը՝ մենք այս դէպքումն էլ, քանի որ չենք արգելել նոցա սովորել գրաբար հայերէնն և վարժութիւն ունենալ աշխարհաբար թարգմանութեանց մէջ և ս. գիրքը կարդալու մէջ՝ պատրաստ ենք օգնելու նոցա » ։ (Արևելք, տ. VII էջ. 309)։

Հայոց հոգևոր իշխանութեան և Բազելեանք քարոզչաց կողմից այս փոխադարձ գանգատները մի գրական հետևանքի չը հասան չուտով։ Թէպէտ և Հայ ժողովրդի և հոգևոր իշխանութեան զայրոյթը քարոզչաց դէմ օրըստօրէ աւելի մեծանում էր, թէպէտ և քաղաքական բարձր իշխանութիւնն ևս ոչ միայն հավանաբութիւն չէր ցոյց տալիս նոցա, այլ մինչև անգամ կասկածոտ աչքով էր նայում նոցա վերայ և չէր ուզում Հայ հասարակութեանը վշտացնել, այնու ամենայնիւ այդ պատասխանները ստանալուց շարունակում էին իրանց մրցումն՝ այս անգամ չը խուսափելով սաստիկ գլխապատանքներից։ Բանն այնտեղ հասաւ, որ Պետերբուրգում նախարարաց ժողովի մէջ որոշումն կայացաւ, որ Բազելեանք տեղափոխուին

Շուշանդուխտ գաղթականութիւնն, եթէ այս վերջինը կ'ընդունի նոցա իւր մէջ. բայց նոքա միշտ առ երևոյս և գրաւոր գեկուցագրերի մէջ նահատակ ձևանալով և հեռանալու պատրաստակամութիւն ցոյց տալով տակաւին յաստանում էին իրանց առաքելական գործունէութեան մէջ. 1836 թուականին Շուշում գեռ ևս գործում էին բազմեան քարոզիչք՝ կարգ Պֆանուէր, Ֆրիդրիխ Շպրեմբերգ, Աւգուստ Կրէյս, Ֆիլիպոսեան Զարեմբան և տպագրիչ Ֆրիդրիխ Խոդոս Այս էլ պէտք է գիտենալ, որ գեռ 1828 թուականից սկսած, այսինքն այն ժամանակից, երբ քարոզիչներն արդէն հաստատուել, ուստ-ուստ էին գարձել Շուշիում, նոցանից մէկը կամ միւսը ամէն ամէն գուրս էր գալիս շրջելու Անդրկովկասում միւս նահանգները, մանաւանդ Շամախի, նոր եկեղեցիներ անելու Աստուծոյ խօսքի համար,



Կոմկաում կառավարիչ Բարոն Ռոզէն և իւր հայեացքը քարոզչական գործի վերայ. Քարոզիչների անձնապաշտպանութիւնն և կարճ նկարագիր իրանց գործողութեանց. Մխիթարեանների միսիան վերաբերեալ է ճանաչվում և արդարվում. Ապացոյցներ, թէ քարոզիչների գլխաւոր ուշադրութիւնը Հայոց վերայ է եղել դարձած. Բաղդիսանք հեռանում են Շուշի քաղաքից։

—

1831 թ. ապրիլ ամսում կոմս Պասկևիչը հեռացաւ Լենհասան նոր պաշտօնով և գեն.-ադ. Պանկրատիևի ժամանակաւոր կառավարութիւնից յետոյ նոյն թուականի օգոստոսին նշանակուեցաւ Կոմկաում կառավարիչ (Կոմկասեան առանձին գաւառաժողովի հրամանատար) Բարոն Ռոզէն։ Որա հայեացքները մի միօրինակ գործողութեանց մասին մեր էին քան իւր նախորդինը։ Կառավարութեան կողմից քարոզչական ընկերութեանց շնորհուած արտօնութիւնները ապարդիւն էր համարում բարձն և բոլորովին վերաբերակար էր ճանաչում երկրի համար՝ գաղթականաց և Բաղդիսանց քարոզչական գործունէութիւնն. ըստ որում տեսնում էր, որ փոխանակ նոցա խնդրած ու ստացած իրաւանց՝ ամենեկդականներին ու հնթանոններին քրիստոնէութեան դարձնելու և իրանց գաղթականութիւնը մեծացնելու՝ Եռարանդայիք 1806 թուականից, այսինքն Հիւսիսային Կոմկասում իրանց գաղթականութիւնը հաստատելուց ի վեր, առաջին քանի տարուան ընթացքում կարողացել էին դարձնել լեռնականներից միմիայն ՅԸՆ հոգի, և նորանից յետոյ ամբողջ ԿԿԸ տարի ևս ՄԴ հոգի։

Իսկ Բազելեան քարոզիչները . . .

Սոցա առաքելութիւնն այսպէս է բնաւորագրում բարձն առ Բլուդով Նախարարն 1835 թ. յունուարին իւր ուղղած յայտարարութեան մէջ։

« Այս միսիոնարները բնակաւորեցան Շուշի քաղաքում Ղարաբաղու Նահանգի, որտեղ հայ ազգաբնակութիւնն աւելի զօրեղ է, քան մուսլիմանը, և յընթացս տասնուերեք տարուան ոչ միայն ոչ մի տեղ գաղթականութիւն չենն հաստատել, այլ մինչև անգամ քրիստոնեայ չենն դարձրել ոչ մի հեթանոս և ոչ մի մահմէդական, է պարապել են հոգևոր գրեանք հայերէն թարգմանելով։ Դպրոցներ հիմնելով տգէտ իրանց նկրտումները դարձուցել են, ինչպէս երևում է, Հայ երիտասարդութեան վերայ։ Հայ հոգևորականութիւնն, որքան էլ անկիրթ լինէր, չէր կարող չը նչմարել այս վարպետորդի քարոզիչների արարմանը։ Նա յայտնեց իւր դժգոհութիւնը պաշտօնական թղթերով, որ յայտնի են ձեր գերազանցութեանն իմ նախորդի յայտարարութիւնից (1831 թ. նոյ. 9)։ Այս պատճառներով ահա ես կարծում եմ, որ Բազելեան քարոզիչները կարող են առաւել վնասակար լինել իրանց գործողութիւններով, քան թէ Շոտլանդացիներն, վասն զի նորա չը զբաղուելով ոչ դաղթականութիւններ հիմնելով և ոչ մահմէդականաց ու հեթանոսաց դարձով, ինչպէս իրանք ցանկացել ու խնդրել էին, աննկատելի կերպով ներգործում են Հայերի վերայ, տարածելով նոցա մէջ իրանց թարգմանութիւններն և հը-

բապուրելով նոցա իրանց դպրոցները։ Նոցա յառաջադիմութիւնները մինչև այսօր նշմարելի չեն դեռ եւ. բայց ապագայում և փոքր առ փոքր նոքա կարող են պատրաստել Հայ երիտասարդութեան միտքը բոլորովին նոր գաղափարների համար, որոնք ի հարկէ չեն լինիլ Գրիգորեան դաւանութեան ոգով և թերեւս ոչ յօգուտ նոյն իսկ կառավարութեան, պատճառն որ միսիոնարների գործողութիւնները, չը նայելով նոցա անձնական բարեմտութեանց, հանապազ հանդիպում են այն ընկերութեանց կանոնների ու դիտումների, որոնցից առաջացած են նոքա և որոնցից կախումն ունին։ (Акты, Т. VIII ст. 320)։

Բարոն Ռոզէնի այս յայտարարութիւնը կարծեմ թէ կարող է համարուել ճիշտ, թէև կարճառօտագոյն, որովհետ միսիոնարների բարեգործունէութեան և նպատակների, ըստ որում կազմուած է նոցա ազգակից ու դաւանակից, նոցա արմատն ու շառաւիղները քաջապէս ճանաչող մի աշխարհավար անձի ձեռքով, մի անձի, որ անաչառ և անպատրուակ Մերկացրեց միսիոնարների բուն ձգտումները։ Չը պէտք է զարմանանք, որ բողոքականութեան տարածման գործակալները մինչև այսօր իսկ չեն կարողանում առանց դառնութեան յիշել բարոն Ռոզէնի անունն, երբ միտք բերենք, որ Պետերբուրգի մէջ նոցա առաջացած յայտարարութեան հիման վերայ նախարարական մասնաժողովը քննելով քարոզիչների վերաբերութեամբ գտնուած բոլոր գործերը՝ եկաւ այն եզրակացու-

թեան, որ յիրաւի «Շատրանդեանական գաղթականութիւնն» ամենեին չէ պարտուել քարոզչութեամբ և ապա ուրեմն իսպառ կարիք չունի իրան շնորհուած իրաւունքին, իսկ Բազելեանք ոչ մի հեթանոս կամ մահմէդական չը դարձնելուց զատ՝ սկսել են նաև գայթակղեցնել Հայոց սրտերն իրանց մայրենի եկեղեցուց, որտեղից և յառաջացել են Հայ հոգևորականութեան դժգոհութիւնն ու բողոքները։ Այս պատճառաւ տեղ նոյն նախարարական մասնաժողովը բոլորովին աւելորդ համարելով կոմկասեան աշխարհում առ հասարակ ամենայն քարոզչական գործողութիւն՝ որոշեց իւր այլոց և հետևեալը.

«Վերոյիշեալ ընկերութեան անդամներին և Շուշիում թնակաւորուած Բազելեան քարոզիչներին արգելել ամեն տեսակ միսիոնարական գործողութիւն, թողլ տալով նոցա այսուհետև պարապել հողագործութեամբ, արդիւնահանութեամբ և արհեստներով»։

Է. «Որպէսզի Հայ հոգևորականութեան կողմից դանգատներ ոչինչ առիթ չը լինի՝ Բազելեան միսիոնարներին արգելել նաև ընդունել Հայ երիտասարդներին իրանց ուսումնարաններում»։

Երբ այս վճիռը պաշտօնական կարգով յայտնուեցաւ կոմկասու քարոզիչներին՝ նոքա բոլորեքեան, Շուշիում գտնուածները՝ Կարլ Պֆանդէր, Ֆրիտրիխ Շգրեմբերգ, Աւգուստ Կրէյս, Ֆելիցիան Զարեմբա, Ֆրիդ. Իւզտ, Կարդասի պատուոր՝ Եակոբ Լանգ և Մաջառայինը՝ (Ս. Խաչ քաղաք) Լիւդ-

վիգ Կէոնիգ և Նակոր Վիրդներ — համաչունչ և համազօր պատրաստեցին մի երկար խնդրագիր և մատուցին ուղղակի Բլուդով նախարարին 1836 թ. սկզբներում։

Այս գրութեան մէջ միսիոնարները մի տեսակ համարատուութիւն տրին իրանց գործունէութեան մասին և ի հարկէ ջանք էին անում արդարանալ իրանց արարմանց մէջ, որ քան ամենայնի արդիւնաւոր և մարդասիրական էին ներկայացուում։ Բացի նանց մասին խնամատարի ձգնում են հաւատացնել, որ նոցա նպատակն է եղել միշտ մահմէդականներին քարոզել Քրիստոսի ուսմունքը՝ թերանայի և գրաւոր մեկնութիւններով, ցոյց տալով նոցա իրանց փրկութեան բարձր արժէքն, ապանց ամենեին միտ դարձնելու թէ որ եկեղեցուն պիտի պատկանին նոքա։ Աշխատում են հաւատացնել նոյնպէս, որ նոցա միտքն էր քրիստոնէութիւնը տարածել չէ թէ միայն Ռուսիայի, այլ և սահմանակից պետութեանց՝ Պարսկաստանի և Թուրքաստանի մահմէդականաց մէջ։ Յետոյ՝ Շուշուայ գործերի մասին կրկնում են նոյնն, ինչ որ ուրիշ անգամ և ուրիշ տեղ ասել էին այն թէ՝ Հայերը տեսնելով քարոզչաց ջանքերը մահմէդականների մէջ՝ ուրախութիւնից իրանք էլ ջերմեռանդութիւն են ստացել, մտանել են նոցա և օգնել իրանց տեղական պարագաների նկատմամբ ունեցած հմտութիւններով, և մինչև անգամ յանձն են առել նոցա գրեանքը մատնել զանազան նահանգներում ցրուել։ Նոյնպէս թէ՝ երբ քարոզ-

չական ընկերութեան մի քանի անդամներն, ունենալով յանձնարարական նամակ Բիբլիական ընկերութեան Ռուսիայի բաժնի նախագահից, եկել են Հայոց Կաթողիկոսի մոտ՝ Հայերից շատերը գանգատուել են ուսումնարանների պակասութեան վերայ և կարծես օգնութիւն են հայցել նոցանից. իսկ նոքա մտածելով Հայերից իրանց համար գործակիցներ չունել՝ սկսել են քաջալերել նոցա, բանալ նոցա համար ուսումնարաններ և տալով քրիստոնէական ուսման համեստ գրեանք հասկանալի լեզուով. Դարձեալ թէ՝ Քարոզիչները, չը նայելով Հայ հոգևորականութեան անկրթութեանը, ծուլութեանն և անտարակուսութեանը՝ աշխատել են մեծամեծ շարժարանքով և իրանց պատրաստած հայերի գործակցութեամբ թարգմանել և տալ նոցա ձեռքը Ս. Գիրքը. և թէ՝ իրանց գործողութիւններն անյայտ չէին Եփրեմ կաթողիկոսից. Ներսէս վարդապետից և Ղարաբաղու մեսրոպեանից, որոնք զովասանում ու քաջալերում էին այդ գործողութիւնները. Եւ դարձեալ թէ՝ Հայոց կողմից ցոյց տուած այսպիսի պատրաստական ընդունելութեամբ իրանց գործերը շարունակում էին լռիկ յաջողութեամբ մինչև 1830 թուականն, երբ քահանաների ու արեղաների մեծ մասը տգիտութեամբ և շահասիրութեամբ կուրացած՝ սկսաւ բողոքել իրանց դէմ և ընդդիմադրել, այն ինչ Զորհանանէս Կաթողիկոսն էլ *) այլ ևս բարեհաճութեամբ չէր նայում

*) 1830 թ. հոկ. 8. Եփրեմ Կաթողիկոսն մի յայտարարութեամբ յանուն Էջմիածնի միաբանու-

իրանց վերայ, որոց պատճառով և քարոզիչներն, իբր թէ, արդէն 1832 թուին հեռացել են հայերից։

Այս ամենը յայտնելով նախապարին ժրաջան քարոզիչները զինջոդութիւն էին խնդրում իրանց գործի համար և ազաչում էին խնդիրը հաստատել ի գիտութիւն Վենետիկ կայսեր, նոքա խընդրում էին թոյլատութիւն պահել Շուշիում գոնէ իրանց ապարանքն ի յարգանս այն ջանքերի, որ իրանք գործ էին դրել յոգուս քրիստոնէութեան և որ արժել էին իրանց քան հազար ոսկի։ Այս բանի նպատակն իրբ այն էր, որ հնար ունենան իրանց ապած ու ապագրելի գրեանքն տարածել Պարսկաստանում և Թիւրքիստանում և, թէ որ կարելի է, Կովկասից հիւսիս և հարաւ գտնուող նահանգներում...

Որչափ ամրապինդ յարուցն ընտրած գործին և որչափ ստկուութիւն այդ գործի յաջողութիւնը գլուխ բերելու...

Սակայն միսիոնարների այս խնդիրը կատարելը հնարաւոր չէր, որովհետև մի անգամ արդէն բարձրագոյն արգելուած էր նոցա քարոզչութեամբ պարապել. իսկ յատուկ ապարան պահել, ուր, յայտնի բան է, ունորէնները պէտք է լինէին նոյն քարոզիչներն, իրանց յարմարաւոր համարած միջոցներով տարածել ապագրած գրեանքն — այս

---

թեան իսպառ հրաժարեցաւ Կաթուղիկոսութիւնից, ըստ իր վաղեմի ցանկութեան. նորա կաթուղիկոսութեան աթոռը բազմեցաւ Յովհաննէս եպիսկոպոս Կարբեցին 1831 թ. յուլիսի 1-ին։

միևնոյն էր թէ քարոզչութիւն անել, այն էլ ի գայթակղութիւն Հայոց, որ նոյնպէս արգելուած էր։

Այստեղ իրրև հաւատարմութիւն, թէ յիրաւի միսիոնարների գլխաւոր ուշադրութիւնը դարձուցած էր Հայերի վերայ՝ պատչաճ է յառաջ բերել մի փաստ, որի վերայ մատնացոյց է լինում և բարձր Ռոգէն. հետևեալն է.—«Միսիոնարներից պահանջուած զրացուցակի մէջ նշանակուած են 11,679 օրինակ հայերէն գրեանք, 728 օր. պարսկերէն, 147 օր. թուրքերէն, և 100 օր. երրայերէն։ Ուրեմն, չը նայելով որ Անգլո-Կովկասեան այցելարանում հայերը քանիպատիկ սակաւաթիւ էին մահմէդականներից և այլազգեան ցեղերից, քարոզիչների գրքերը համարեա թէ միմիայն Հայերի համար էին նշանակուած։ Զէ կարելի ուշադրութեան չառնուել և այն, ասում է բարձրն, որ բոլոր Անգլո-Կովկասեան նահանգներում և մինչև անգամ Ատրպատականում ժողովուրդը, բացի բարձր դասակարգերից, ամենևին չէ գործ ածում պարսից լեզուն և հազիւ մէկը—միւսը հասկանում է նրան. ամեն այստեղի մահմէդականք խօսում ու գրում են թաթարերէն, երբեմն և արաբերէն. իսկ լեռնականք առ հասարակ չեն հասկանում պարսկերէնը, այլ շատերը խօսում են նոյնպէս թաթարերէն. և ահա այս իսկ լեզուով ոչ մի գիրք չեն տպել միսիոնարները։

Երկարաձիգ ու ոլորուն գրագրութիւններն ու ճիգերը նոյն ժամանակ չը հասցրին քարոզիչներին իրանց բաղձալի նպատակին։ Թէպէտ նոցա ցանած

սերմերն արմատանան չարուեցան իսպառ, թէպէտ նոցա գործողութիւնները միանգամայն չը վերջուեցան, սակայն, գոնէ այն ժամանակվան համար, նոցա գործունէութիւնը կառավարութեան առաջ ըստ ամենայնի վնասակար համարուելով՝ արգելուեցաւ նոցա Կովկասեան աշխարհում քարոզել Քրիստոսի Աւետարանը։ Իշխանութիւնը դադարեցնելով Բազելեանց քարոզչական, ուսուցչական և տպագրական գործողութիւնները Շուշի քաղաքում՝ գնեց նոցա կալուածն, որ գնահատուած էր 11,328 ռ. 46¼ կ., տեղական կառավարութեան և ծառայողների համար։ Իսկ տպարանը գնեց Բաղդասար մետրապոլիտը Շուշուայ Հոգևոր դպրոցի համար։

1837 թ. վերջում Բազելեան քարոզիչներն արդէն հեռացել էին ոչ միայն Շուշիից, այլ և Կովկասից, թերևս և Թուրքստանից։

---

Այստեղ վերջանում են այն տեղեկութիւններս, որ ես կարողացայ հաւաքել հեռուից հեռու լսելով և կարդալով՝ բողոքականութեան գործի վերաբերմամբ՝ Շուշուայ Հայոց մէջ։ Ցանկալի էր որ աւելի մանրամասն և ստոյգ տեղեկութիւն ունեցողները հրատարակէին դոցա ի լրումն այս արձանագրուած եղելութեանց պատմութեանը *)։

---

*) Տեղեկութիւն ունեցող պարոններից եթէ որ ցանկանայ՝ կարող է ինձ էլ ուղարկել նոցա, և ես կ՝աշխատեմ կարգի բերել և հրատարակել ըստ պատշաճին։ Հեղ.

Միսիոնարները Շամախում. Ունկնդիրների խումբը. Զրուցատրութեանց նիւթ և եղանակը. Մահմէդական ունկնդիրները. Սերմանացանութեան արդիւնքը. Կասկածներ. Զաքարիա եպիսկոպոսը Շամախում. Սարգիս Համբարձումեանց՝ իբրև արժանաւոր ազատաւոր և ուսանող Նուիրի քաղաքում. Նա գործակցում է քարոզիչներին. Քարոզչաց հոգատարութիւնքը Սարգսի համար. Վերջին Լուսաւորիչում. Նորա վերադարձը։

—

Բազելեան միսիոնարները Շուշիում հաստատուելուց յետոյ, 1828 թուից սկսած, ինչպէս առաջ յիշեցի, ժամանակ առ ժամանակ առաքելութեամբ շրջում էին Կովկասու գաւառներն, ի թիւրս որոց և Շամախի քաղաքը։ Նոցա մուտքն այս քաղաքն առաջին անգամ եղաւ 1828 թուին. երկրորդ անգամ նոքա եկան 1832 թուականին։ Գըլխաւորն էր դարձեալ Ֆել. Զարեմբա, որին ընկերակցում էին Աւգուստ Դիտրիխ և Միրզա Ֆարուխ։ Վերջինս տեղական լեզուներին և տեղական հանգամանքներին քաջ տեղեակ լինելով՝ մեծ ծառայութիւն էր մատուցանում քարոզիչներին ինչպէս առ հասարակ նոցա ճանապարհորդութեանց ժամանակ, այնպէս և Շամախի քաղաքում.

Հէնց առաջին օրերից քարոզիչները կարողացան գրաւել մի խումբ մարդիկ հայերի միջից, որոնց շրջանում նոքա սկսան իրանց կրօնական զրուցատրութիւնները։ Ունկնդիր շրջանը բաղկանում էր և՛ գրագէտ և՛ անգրագէտ մարդկանցից.

որոնք հարցասիրաբար գալիս զուսարվում էին նորեկ գիտնականների շուրջը նոցա քաղցր զրույցները լսելու, աչքները բաց անելու և զանազան հետաքրքրական և վիճելի խնդիրների բացատրությունը հասկանալու։ Այս մարդկանց մէջ շատ թէ քիչ աչքի ընկնողներն էին տիրացու Առաքել Բիշարայանց ուսուցիչ, տիրացու Գալուստ Բուդաղեանց, Գէորգ Համբարձումեանց — հրացանագործ, գիւղական Ոսկանն — հիւսն, վիզը ծուռ Նազարին — հանեստագործ (փալանդուզ), ծկրտ Թոսոնին, քեռիս Գաբրիէլեանց — կօշկակար, Թարխանովին, պարոն Հայրապետն Թառանեան և ապա իւր եղբայրն Առաքել, և այլք ոմանք։ Նոցա միջնորդութեամբ քարոզիչներն աշխատում էին ազդեցութիւն գործել և ունկնդիրների թիւը մեծացնել։

Կրօնական զրուցատրութիւնները կատարվում էին կամ վերոյիշեալ մարդկանցից մէկն ու մէկի տանը կամ որևէ ուրիշ տեղ։ Զրուցատրութեանց նիւթն երբեմն լինում էր ընդհանուր բարոյականութեան վերաբերմամբ, որի համար յաճախ կարդացվում էին Աւետարանի զանազան գլուխները կամ թէ Շուշուայ քարոզչական տպարանից դուրս եկած մանր տետրները. երբեմն էլ հետաքրքրելի նիւթ էին դառնում այլ և այլ կրօնական ծէսեր, արարողութիւններ և մինչև անգամ դաւանաբանական խնդիրներ, որոնք քրիստոնէական բաժան եկեղեցեաց մէջ միանման չեն ընդունում։ Սակայն քարոզիչներն իրանց զրոյցներն ու մեկնութիւնները կատարում էին զգուշութեամբ ու

ճարտարութեամբ, որ զգալի գայթակղութիւն չը յառաջացնեն. օրինակի համար՝ մի անգամ հայերից մէկի տանը խմբովին ճաշելիս են լինում. տեսնում են որ սեղանի վերայ երկու տեսակ կերակուրներ են դրած՝ պատուան և ուտիսուան. երբ իմանում են որ ուտիսուանն իրանց համար էր, իսկ պատուանը հայ սեղանակիցների՝ իսկոյն մի կողմն են դնում իրանց համար պատրաստուածները, խառնելով միմանցին և պաս պահելով-բայց հացից յետոյ պարզ և որոշ բացատրում են պահքի նշանակութիւնը, տալով սեղանակիցներին մյլ հասկացողութիւն, քան նոքա ունէին։

Պատահում էր, որ այս ընկերութեան մէջ գտնվում էին և մահմէդականներ, և կամ զրուցատրական մոդովը կազմվում էր յատկապէս նոցա համար՝ մզկիթի գաւթում կամ որևէ այլ տեղ. այսպիսի դէպքում խօսքի գլխաւոր նիւթը լինում էր ի հարկէ Քրիստոսի աստուածութեան, մարդկային ազգի ճշմարիտ փրկութեան, մարգարէից և առաքելոց կոչման և ծառայութեան, հանդերձեալ կեանքի և ուրիշ այս տեսակ խնդիրների վերաբերութեամբ։ Մահմէդական ունկնդիրները գլխաւորապէս ներկայ էին լինում այս զրուցատրութեանց ոչ թէ ճշմարտութիւնը խնդրելու ճշմարիտ ձգտմամբ, այլ լոկ նոցա համար, որ տեսնեն այնտարաշխարհիկ եկաւորներին, որոնց խմաստութեան հռչակը տարածուել էր քաղաքի մէջ։ Նոքա առաւելապէս զմայլվում էին Միրզա-Ֆարուխի բարձր արժանիքներով. աքանչանում էին, թէ ինչ-

պէս մի հայ այնչափ ընդարձակաբար հմուտ էր գաբրիկ և արաբիկ լեզուներին և առ հասարակ միջերկրական ուսանող և շատ անգամ յափշտակման մէջ ծոմ էին գարկում և բացագանչում «մնաշլլան, մնաշլլան»։

Երկու անգամին ևս քարոզիչները երկար չը մնացին Շամախում. սակայն կարճ ժամանակում սերմանացանութիւնն էլ չը մնաց անհետանալու Ցիրաւի, մահմէդական ունկնդիրներից և ոչ մէկի ուղղահաւատ սրտին չը քաղցրացաւ շրջիկ առաքելական մեղրածորան վարդապետութիւնը, բայց այս ամենեան փոխարէն հայերից մէկի միտք սրտում արմատ էին ձգել նոցա շաղ տուած սերմունքը, պատրաստելով հողն ապագայ բեղմնաւորութեան համար։ Քարոզիչները վերջին այցելութիւնից յետոյ, 1832 թուին, թողին Շամախին՝ լի յուսով, թէ ուրիշ բարեյաջող դէպքում դարձեալ այցելութիւն կը գործեն այստեղ և կը հիմնաւորուին։ Աստուածակոյս՝ նոքա կ՚իրագործէին այս մտադրութիւնը, թէ որ, ինչպէս արդէն ասացինք, բոլորովին չարգելուէր նոցա քարոզչական և ուսուցչական գործունէութիւնը Կովկասում։

Հետացան դնացին Շամախուց Զարեմբան և իւր գործակիցները. բայց, ինչպէս ասացի, թողին իրանցից յետոյ խմորուած մտքեր։ Կրօնական զբոյցները մերթ ծածուկ մերթ յայտնի շարունակվեցան փոքրիկ խմբի մէջ։ Սակայն Շուշուայ անցքերի ձայնը հասել էր այստեղ ևս, ուստի այստեղ ևս կասկածներ զարթեցան յիշեալ խմբի վերայ։

մինչև անգամ այս մասին Միքայէլ քահանայ Վարշամեանցը տեղեկութիւն տուաւ Յովհաննէս Կարբեցի կաթուղիկոսին 1833 թուին, և ասին թը-ւին Շամախի եկաւ մի ոմն Զաքարիա եպիսկոպոս, —թերևս այն վարդապետն որ Շուշի էր ուղարկուած քարոզիչների գործողութեանց հանգամանքներին ծանօթանալու,—որին ի թիւս այլ յանձնարարութեանց պատուիրած էր նաև վերահասու լինել, թէ ինչ հետևանքներ է ունեցել Շամախում քարոզիչների այցելութիւնը։

Հաւատացնում են, որ այս եպիսկոպոսը մի օր այցելում է տիրացու Առաքել Բիշարայեանցի ուսումնարանն. տիրացուն կասկածելիների թուումն էր։ Եպիսկոպոսն աշակերտներին հարց ու փորձ է անում և ի թիւս այլոց առաջարկում է նոցա հետևեալ հարցը. «Ինչ է նշանն Քրիստոսի»։ Աշակերտները չեն կարողանում պատասխանել։ Սրբազանը զայրանում է և աշակերտների ու հետաքրքիր այցելուների ներկայութեամբ խրատում է ուսուցչին երկու ապտակով, վասն զի նա մոլար ուսմունքով զայթակղուած՝ չէր սովորեցրել աշակերտներին ճշմարիտ քրիստոնէին կարևոր «խաչի — նշանը»։

Խրատիչ Զաքարիա եպիսկոպոսը չուտով վերադարձաւ. բայց պարզութիւնից խախտուած մրքերը մնացին ըստ առաջնոյն առանց վերաշինութեան։ Խմորումն իրրև մորմուտի տակ ծխացող խանձող մնաց չիջելափառ դրութեամբ. մի արծարծող էր պակաս նորան բորբոքելու. բորբոքիչն էլ

չատ չ'ուշացաւ. սա էր Շամախեցի Սարգիս վարժապետն Համբարձումեանց.

Երբ 1828 թուականին քարոզիչներն այցելեցին Շամախի և կազմեցին իրանց զրուցատրական ժողովները՝ նոցա լսելու համար հասակաւոր և ծերունի ունկնդիրներից զատ՝ գալիս էին երբեմն և հետաքրքիր պատանիներ, որոնք բերանաբաց, անխոս ականջ էին դնում մեծերի խօսակցութեանը անցողակի որսալով նոցա յայտնած այս կամ այն միտքը կամ բացատրութիւնը։ Այդ տեսակ պատանիներից մէկն էր Սարգիս Համբարձումեանցը, քարոզչաց յափշտակուած ունկնդիրներից մինի՝ հրացանագործ Գէորգ Համբարձումեանցի քսան ամեայ որդին։

Սարգիսը մի վերին աստիճանի հետաքրքիր և աշխատասէր պատանի էր. նա երեխ այս անգամ կը խնդրէր քարոզիչներին, որ իրան աշակերտ վերցնեն, ուսումն տան. բայց նորան կապում էր տանը մի հանգամանք, նորա հայր Գէորգը բաւականին պարտք ունէր, և նա որպէս ընտանիքի պարտաճանաչ անդամ՝ աշխատում էր իւր հօր հետ յիշեալ պարտքը վճարելու։ Այս նպատակով նա գնաց Ղուխի քաղաք, ուր իրանց արհեստը (հրացանագործութիւնը) բաւականին արդիւնաբեր էր։ Այստեղ գտնվում էր այն ժամանակ շուշեցի Դրիգոր քահանան, կարծեմ Աւագեանց. յետոյ եկաւ Պօղոս վարդապետն Ղարաբաղցի, մինչեւ այն անձն, որին մենք արդէն ճանաչում ենք Շուշուայ անցքերից։ Սարգիսն իւր արհեստից ազատ ժամա-

ը գնում էր սկզբում Գրիգոր քահանայի մոտ քերականութիւն սովորելու, և այսպէս եօթնամիս շարունակ յաճախում էր նորա մոտ։ Այս միջոցին Նուխուայ մէջ մի հրդեհ պատահեցաւ, որին զոհ գնացին բազմաթիւ տներ ու խանութներ, որոնց թւում և Սարգսի խանութն։ Մնալով անօթևան՝ Սարգիսը տեղափոխուեցաւ բնակուելու Պօղոս վարդապետի մօտ, ուր գործից ազատ ժամերը կատարում էր մանր տնական ծառայութիւններ և շարունակում էր ուսումն առնել։ Կարճ ժամանակ, կուռն մէջ Սարգիսն այնպէս սարք ու կարգ մրցրեց Պօղոս վարդապետի անշուք բնակարանում, որ գրաւեց վերջինիս աչքն ու համակրութիւնը։ Յաճախ զովում էր նորան հայր սուրբն և ասում. «Սարգիս, դու ոչ միայն մի տուն, այլ մի ամբողջ քաղաք կարող ես կառավարել»։

Մի քանի ժամանակից յետոյ Պօղոս վարդապետն սկսաւ կասկածներ տանել Սարգսի վերայ, թէ նա յարաբերութիւններ ունի բողոքական քարոզիչների հետ։ գնալով գնալով այս կասկածներն աւելացան, որովհետև Սարգիսը յայտնի կերպով օգնում էր քարոզիչների շրջիկ գրավաճառ Յովհաննէսին, պահելով իւր մոտ նորա գրքերն և ծախելով։ Եօթնամիս մնալով և ուսանելով Պօղոս վարդապետի մոտ՝ Սարգիսը հարկադրուեցաւ թողուլ նորա տունը։ Նոյն ժամանակները, 1834 թէ 35 թուականին, Նուխի եկան Վօլտերս և Շերլէյ քարոզիչները գարձեալ Միրզա-Ֆարուխի գործակցութեամբ։ Երբ ուրա եկան և ուղղակի

Սարգսին որոնեցին, իրրև իրանց ծանօթ և համակիր մարդու, և երբ այս վերջինս նոցա համար օթևան պատրաստեց իւր ծանօթներից մէկի տունը, այն ժամանակ այլ ևս չէին կասկածում, որ երիտասարդ Սարգիսն անշուշտ պատկանում է Բաղդեսանց հետևողների խմբին։

1837 թ. վերջերին, երբ Սարգիսն արդէն օգնել էր հօրը պարտքից ազատուելու, խնդրեց նրա թոյլտուութիւնն և ուղևորուեցաւ Շուշի, որտեղ իւր ասելով, միտք ունէր դիմել մեզ ծանօթ ճրագնագղեաց Յովսէփի վարդապետին, որ գտնվում էր ս. Յակոբայ վանքում, և նորա մօտ միանձնական կեանք վարել։ Բայց ես չը գիտեմ ինչու նա առաջ քարոզիչների մօտ գնաց, որոնք և օգտակար համարեցին, որ նա դառնայ աշխարհի մարդ և օգուտ բերէ աշխարհին, քան թէ առանձնանայ վանքի պատերի մէջ։ Սարգիսը հնազանդուեցաւ։ Նա ունէր յառաջ ձգտող ոգի. ցանկանում էր գործել։ Նա այժմ ըստ ամենայնի անձնատուր եղաւ Զարեմբային և իւր ընկերակիցներին, որոնց մօտ յոյս ունէր ոսկորել և որոնք ցոյց էին տալիս նորան գործելու մի ճանապարհ։

Մենք գիտենք, որ նոյն ժամանակը, 1837 թ. վերջում, քարոզիչների գործունէութիւնը Կովկասում արգելուած էր իշխանութեան հրամանով։ Շուշուայ մէջ արդէն փակուած էին նոցա ուսումնարանն ու տպարանը. բայց զանազան հաշիւների համար նոցանից մէկ քանիսը դեռ մնացել էին Շուշի, դրա էին Զարեմբա, Պֆանդէր, Հօաւէր և Իւդա։ Սարգիսը մնաց դոցա մօտ իրրև տան տպա-

սաւոր և միևնոյն ժամանակ դաս էր առնում։ Դա այնչափ անձնատուր եղաւ պատուելի միսիոնարներին, որ մինչև անգամ պատրաստ էր արկածների ենթարկել իւր անձը. մի ժամանակ մտքումը դրաւ նոցանից մէկի հետ Պարսկաստան գնալ։ Յետոյ, երբ մի դէպքով քարոզիչ Պֆանդէր պէտք է գնար Կալկաթա՝ համաձայնուեցաւ գնալ նորա հետ. բայց վերջ ի վերջոյ յարմար համարուեցաւ ուղարկել նրան Լատանդիա, աւելի օգտակար ճանաչելով նորա համար մատաւոր գործունէութիւն։

Քարոզիչները հեռանում էին Շուշիից. նոյն ժամանակը Թիֆլիս էր եկել սենատոր Հան՝ Կովկասու աշխարհում նահանգական սահմանարարութիւն անելու։ Սա էլ խորհրդակից և գործակից եղաւ Զարեմբանների վերոյիշեալ նպատակի համար։ Եւ ահա 1838 թուականի ամառը մեր երևանեայ հայ երիտասարդը գրանին Աստուծոյ ժրաջան սպասաւորների հովանաւորութեամբ և յանձնարարականներով բռնեց հիւսիսի ճամբան։ Զը գիտեմ ինչպէս և որչափ ժամանակ ճանապարհորդելով՝ վերջապէս հասաւ յառաջադրեալ տեղը՝ Բալթեան երկիրն՝ Լատանդիա։ Այստեղ իւր ստացած հրահանգներին համաձայն նա դիմեց բարոն Դրիւնվալդ հարուստ գերմանացուն, որ բնակվում էր Վէյսէնշտէյն գիւղի մէջ իւր սեպհական դատակերտում, Ռեմերին և Դորպատին մօտիկ։ Բարոնն ընդունեց Սարդսին իւր տունը բարեպաշտական նպատակներով, ուր և բարոնի որդւոց հետ միասին ուսանում էր նաև երեք տարի մնաց այստեղ

Սարգիսն, և երբ փոքր ի շատէ բան էր սովորել՝ քննութիւն տուաւ գերմաններէն լեզուով, որ շատ թէ քիչ բաւական չափով գիտէր, և անդուն ուսումնական վարչութիւնից ստացաւ տարրական ուսումնարանի ուսուցչի իրաւունք։ Այս իրաւունքը ձեռք բերած՝ Սարգիս Համբարձումեանցը վերադարձաւ Լայպզիգայից և 1842 թ. գարնանը ժամանեց Շամախի, բերելով իւր հետ իւր հովանաւորների ու բարեկամների քաջալերն ու օգնականութեան խոստումները։

## Զ.

Սարգիս Համբարձումեանը Շամախում. Նորա բաց արած ուսումնարանն. Այս ուսումնարանի կարճառօտ ուրուագիծը. Գործի յաջողութեան սկիզբն։

—

Շամախի հասանելուց յետոյ՝ Սարգիս Համբարձումեանցն միեւնոյն 1842 թուականին բաց արաւ Կովկասու ուսումնարան հայ մանկանց համար։ Այս ուսումնարանն իւր ժամանակին աչքի ընկաւ ունկի նորա համար, որ ուրիշ փոքր ի շատէ կարգին ուսումնարան չը կար։ Բիշարայեան տիրացու Առաքելն, որի ուսումնարանում էլի փոքր ի շատ բան էին սովորում երեխայք, արդէն փակել էր այն և վարժապետ դարձել Շամախու գաւառական ուսումնարանում։ Այնպիսի ոգորմելի վարժանքներն, ինչպէս «տիրացու Աւետիքներն» էր [4]), չէին կարողա-

---

[4]) Այս վարժապետ-ուսումնական պատրաստութեան ասելիքը շատ լաւ կերեւի այն յիշատակարանից, որ գրուած է Նորա իսկական ձեռքով և որ են գտայ Շամախու հին եկեղեցում պահուած մի ընդարձակ ձեռագիր «Գանձարանի» մէջ. հետեւեալն է. «Ի 1852 ամի, մայիս ամսոյ միւնին, Շամախայ բնակ Նորընծայք գոլով, տիրացու Թադէոս տիրացու Գաբրիէլեան Մահտեսին, և կամ տիրացու Մովսէս Լաչինին, երկոքեանն ի միասին եկեալ առ յիս, պատճառն ուսանել յինէն երգութիւն տալերն ի սոյն գանձարանի, յաղագս ժամերգութեան, Շամախու սրբ. Աստուածածնայ եկեղեցւոյն, ուրախութեամբ ուսանէն, և ուրախութեամբ ասէն ամէն, Քրիստոսիս, գրեցի ի բնա-

նում գոհացնել ժողովրդի պահանջները։ Իսկ հայոց հոգևոր դպրոցը բացուեցաւ երկու կամ երեք տարի յետոյ միայն Ներսէս Ե. կաթողիկոսի հրամանով թեմական Մատթէոս եպիսկոպոս Վեհապետեանցի ջանքերով, ուր արդարև սկսուեցաւ մի արդիւնաւոր ուսումնասիրութիւն։ Տարաբաղդաբար այս դպրոցն էլ Մատթէոս սրբազանի հեռանալով, որին պահանջել էր Ներսէս կաթուղիկոսը 1847 թուին, մնաց հոգեվարք դրութեան մէջ, մինչև որ վերստին նոյն կաթուղիկոսի յառաջադոյն անօրինութեամբ կանոնաւոր կերպով բացուեցաւ 1858 թ. սկզբին *)։

Բայց և այնպէս՝ Համբարձումեանցի նորաբաց ուսումնարանն էլ չը պէտք է մեծ բան երևակայէք. նա կանոնաւոր և արդիւնաւոր էր միայն իւր նմաններին համեմատութեամբ։ Ամենաբարեկարգ ժամանակն՝ այդ ուսումնարանի կազմութիւնն ու կարգն այսպիսի էր.—նա բաղկացած էր մի

---

կեալ Շամախու ի չորեսին աստիճանաց տիրացու Աւետիք Մատթէոսեանց։

Կարծեմ այս յիշատակարանն ոչնչով առաջ չէ իւր լեզուով և բովանդակութեամբ, քան իրանից 140 տարի առաջ գրուած մի ուրիշ յիշատակարան միևնոյն ձեռագրի մէջ, որ այս է տառ առ տառ. ակս. յակօր. վարթապետաս.. թիրիզեցի. որ. յկի. սբ. աթոռաս. գանձաս. սար. թին. ՌՃՂԱ. ունիս. ամին. ձեռա. իմով...եցի. սբ. գանձարնաս։

*) Այսուհետև ուսման գլխաւոր առարկաներն էին հայերէն լեզու՝ գրաբար հանդերձ քերականութեամբ, ճարտասանութիւն, կրօնագիտութիւն, եկեղեցական երգեցողութիւն, ռուսաց լեզու թուաբանութիւն և գեղագրութիւն։ Ուսուցիչներն

դասարանից՝ բաղմաթիւ բաժանումներով։ Բաժանումներն իրարից որոշող չափն էր գլխաւորապէս հայոց լեզուի մէջ աշակերտների ունեցած հմտութեան աստիճանն։ Այս առարկայի համար գործածւող դասագրքերն էին՝ այբբենարան, կազմած հին դրութեամբ, Պատիկ-Սաղմոս, այսինքն սաղմոսի Ա. կանոնը վանկերի բաժանած, Մեծ-Սաղմոս (ամբողջը), Պատիկ-Աւետարան, այսինքն չորս աւետարանիչները, Մեծ Աւետարան (ամբողջը), Քերականութիւն գրաբար լեզուի Մխք Չամչեանի և վերջ։ Այս բոլոր գրքերը գրաբար էին ի հարկէ։ Բացի հայերէնից աշակերտները սովորում էին թուաբանութիւն և գեղագրութիւն, իսկ մի ժամանակ և ռուսերէն, որի համար նշանակուած էին առանձին ժամեր՝ դասերից դուրս և առանձին վարձարով։ Կրօնագիտութեան կանոնաւոր դասերի փոխարէն որոշ ժամերում կային առանձին կրօնական-բարոյական խրատախօսութիւնք, որոնց կիւրակէօրեայ ժամերին յաճախ ներկայ էին լինում ծնողներ ևս։ Վերջապէս մեծ աշակերտներից կազմուած առանձին երգեցիկ խումբ կար, որ ամեն օր, դասերն արձակելիս, պէտք է Շնորհալու «Այսօր անճառ» շարականից մի կանոն երգէր։ Իսկ Շաբաթ օրերն երգում էին «Նորաստեղծեալ»

---

էին Յովհաննէս վարդապետ Բէգնազարեանց—ուսուցիչ կրօնի և հայերէնի, Աստրախանցի Խաչատուր Մանդանեանց—ուսուցիչ ռ. լեզուի, որ առանդում էր նոյնը և գաւառական ուսումնարանում, Խուդադ Խուդադեանց, Խաչատուր քահանայ Զալապեանց և այլ ոմանք։

երգը։ Տէրունական աղօթքը պէտք է երգէին բոլոր աշակերտները միասին։ Դասերը լինում էին մինչև ճաշ և ճաշից յետոյ, ընդամենը հինգ ժամ։ Վարժապետն ունէր իրան համար օգնականներ աւագ աշակերտներից, երբեմն և դրսից։ Աշակերտներից կարի շքաւորները ձրի էին, միւսները վճարում էին ամսական 50 կոպէկ։ Սոցա թիւը հասնում էր երբեմն մինչև 150-ի։

Այս նպատակ չունիմ, և այժմ անտեղի էլ է, մի առ մի նկարագրել Սարգիս վարժապետի, կամ ինչպէս շամախեցիք սովոր էին կոչել նորան և կոչում են այժմ իսկ՝ «Սարգիս վարպետ» ուսումնարանի կառավարչական և ուսումնական կողմերը. այլ այսքանն ասացի, որ ցոյց տամ, թէ յիրաւի սա էլ առանձին մեծ արժանաւորութիւններով չէր կարող փայլել մեր սովորական վարժարանների մէջ։ Այստեղ էլ կար նոյն փառաւոր ձևը՝ կարասում թրջած ճիպոտներով. նոյն առանձնական դասաւանդութիւնը՝ սորան կապակից անյարմարութիւններով, և այլն։ Այս պէտք է խոստովանել, որ ամբողջ ուսումնարանի վերայ թագաւորում էր վարպետի հսկողութիւնն, որ իւր հասկացածի չափ խիստ էր և յիրաւի առանձ արդիւնաւոր քան միւս վարժարաններում։

Այսպէս ուրեմն, Սարգիս Շամբարձումեանցը սկզբից և եթ ունէր ձեռնտու պայմանները՝ ժողովրդի համակրութիւնը գրաւելու. նա արդէն աշխարհ տեսած, բան սովորած վարժապետ էր։ տուն էր դարձել նպատակին յարմար ծրագիրներով ու

հրահանգներով։ Օգնութիւն նորան հասուցանում էին իւր բարերարներն և ծրագրեալ նպատակի իրագործման նախանձախնդիր բարեպաշտ մարդիկ, որոնց թւում նշանաւոր էին բարոն Դրիւնվալդ և կոնտ։ադմիրալ բարոն Միրբախ։ բարեպաշտական նուիրաբերութեան անհագորդ չէ մնում իւրանց ձեռագործների արդիւնքով մինչև անգամ գիտութեան կոչուած պատանների ու ծերացած կոյսերի խումբն, որ ժամանակ ժամանակ հանդիսաւոր աղօթքներ էր մատուցանում վարպետի կենաց ապահովութեան և առողջութեան համար, որպէս վայրենիների մէջ ընկած շահատակի համար։ Նիւթական և բարոյական օգնութիւն չէր պակասում Համբարձումեանին և նոյն իսկ Շամախի քաղաքում, յայտնի և ծածուկ բարեկամներից, որոնք հարկաւոր էին համարում, գիտակցաբար թէ անգիտակցաբար, պաշտպան ու քաջալերը հանդիսանալ նորա աշխատութեանցը։ Սոցանից նշանաւորը կարելի էր համարել Շամախու նոյն ժամանակուան զինուորական նահանգապետ գերմանացի բարոն Վրանգէլին։ որով ասում են շատ անգամ պարծենում էր Համբարձումեանցն մանաւանդ իւր հակառակորդների դէմ։

Քարոզչաց գործի շարունակութիւնը. Համբարձումեանցը կասկածի ենթակայ, Գանդաուներ նորա դէմ. Զարեմբայի նամակը Ներսէս Ե-ին. Զաքալեանց եպիսկոպոսը Շամախում. Համբարձումեանցը Թիֆլիզում Ներսէս Ե-ի մօտ. Նորա վերադարձը·

—

Մենք արդէն տեսանք, որ գեռ ևս 30 տարեն թուականներին Շամախու մէջ հայ ժողովրդից շատերն առանց կասկածի չէին նայում այն անձանց վերայ, որոնք քարոզիչների երկիցս այցելութեան ժամանակ մասնակցում էին նոցա գրուցատրական ժողովներին. իսկ այժմ, երբ Սարգիս վարժապետն Համբարձումեանց, կասկածուող անձներից մէկի որդին, նա, որ Զարեմբայի և նորա գործակիցների հոգատարութեամբ ուսած պատրաստուած էր, եկել հիմք էր դրել իւր հայրենիքում, այժմ, ասում եմ, բնական է որ կասկածները պիտի աճէին. մանաւանդ որ բոլոր կասկածուած մարդիկ սկսել էին խմբուիլ Համբարձումեանցի շուրջը և խումբն էլ հետզհետէ աճում էր· Նոցա պարապմունքը նոյնն էր, ինչ որ միսիոնարների ժամանակ,—կրօնական գրուցատրութիւնք, ընթերցումն ս. գրոց և բացատրութիւն· Այս գրոյցների, ընթերցմանց, բացատրութեանց ժամանակ Սարգիս վարժապետն աշխատում էր միշտ խոհեմ լինել, միսիոնարների նման, զգուշանալով անտեղի դայթակղութիւն և յուզմունք յարուցանելուց· Նա յաճախում էր հայոց եկեղեցին, երբեմն աշակերտներին էլ տանում, հաղորդում էր· մի խօսքով ոչնչով չէր ցոյց

տալիս՝ բանիւ կամ գործով, թէ հնացած լինէր Հայաստանեայց եկեղեցուց։ Եթէ հաւատանք վարժապետի իրան խօսքին՝ նա ամենեին չունէր որեւէ այլ նպատակ, քան եթէ ս. Գիրքը կարդալ և Աստուծոյ խօսքը հասկացնել տղէտներին։ Նա այնչափ ազատութիւն էր ցանկանում միայն, որ իրաւունք ունենայ երբ և ուր լինի՝ աշխարհաբար լեզուով կարդալ ս. Գիրքն և հասկացնել ունկնդիրներին։

Սակայն չը գիտեմ խօսքի ինչ ոճ և բացատրութեան ինչ եղանակ ունէր վարժապետն, որ նորա խմբակից մարդիկ իրանց վարմունքով և ընկերական խօսակցութեան մէջ թոյլ էին տալիս զանազան կշտամբանքներ և յայտնի արհամարհանք դէպի այլ և այլ եկեղեցական ծէսեր և գարեբով նուիրագործուած սովորութիւններ։ Այս պատճառով դեռ նա 1843 թ. նոյեմբերին Շամախուոյ եկեղեցուց բարեկարգիչ Միքայէլ քահանայ Վարշամեանցը յայտարարութիւն տուաւ կոնսիստորիային առ այն, թէ Սար. Շամբարձումեանն «հաստատելով իրան համար մարգարան՝ չեղջակուտում է այնտեղ պարզապիրտ լուսաւորչականք» և գայթակղեցնում։ Բայց ըստ որում նա առանի առաջ չը կարողացաւ հաստատել իւր մեղադրութիւնը, մանաւանդ որ մի քանի անձինք էլ եկան հերքեցին նորա խօսքն, այդ պատճառով գանգատը մերնաց անհետևանք և ինքը քահանան պաշտօնապէս յանդիմանութիւն տուացաւ։

Այս միևնոյն ժամանակ, երբ նորընտիր Ներ-

սէս Ն. կաթողիկոսը գտնվում էր Պետերբուրգում, Ֆել. Զարեմբան Շուէյցարիայից մի նամակ գրեց նորան, որով շնորհաւորում էր նորա ընտրութիւնն և վերջը խնդրում էր շնորհ և հովանաւորութիւն Սար. Համբարձումեանցի համար, որին, ինչպէս ինքը լսել էր, Շամախու հոգևորականք հալածել են և բանդարկել տուել յանիրաւի։ Բայց Զարեմբայի ունեցած տեղեկութիւնը սխալ էր։ Համբարձումեանցը հալածուած ու բանտարկուած չէր։ չը գիտեմ որտեղից էր նա այդ լուրն առել։ Ցայտնի է, որ Շամախի գալու օրից ի վեր Ս. Համբարձումեանցն իւր գլխով անցած ամեն անցքերը մանրամասնօրէն հաղորդում էր իւր բարեբարեկամներին ու հովանաւորողներին՝ Էստանդիա։ բայց թէ Զարեմբայի հետ նա գրագրութիւն ունէր և կամ վերոյիշեալ տեղեկութիւնը նա էր հաղորդել—այդ չը գիտեմ։ Կարելի է քարոզիչը լսել է գանգատների մասին միայն և երևակայել է, թէ հալածած բանդարկած նա կը լինին վարժապետին։

Այսպէս թէ այնպէս՝ յիշեալ նամակից յետոյ Ներսէս կաթուղիկոսն իսկոյն գրեց Շամախու թեմական Մատթէոս եպիսկոպոս Վեհապետեանին թոյլ չը տալ որ հալածեն Համբարձումեանցին անարդարապէս և բանտից արձակել տալ նորան, մինչև որ ինքն էլ Էջմիածին գալով ամենայն ինչ ստուգիւ կ՚իմանայ։

Վեհափառ կաթուղիկոսի պատուէրին համաձայն՝ եպիսկոպոսը չէ թէ միայն չէր հալածում Համբարձումեանցին, այլ և շատ քաղցրութեամբ էր

վարում հետը, և թէպէտ ժամանակ առ ժամանակ մի քանի քահանայք բերանացի գանգատներ էին մատուցանում սրբազանին, բայց այս գանգատներն ի զուր էին անցնում։

1848 թուականին, երբ Մատթէոս եպիսկոպոսն արդէն հեռացած էր Շամախուց՝ այստեղ եկաւ մասամբ կոնսիստորիայի գործերն քննելու և մասամբ մէջ յանձնարարութիւններով Սարգիս եպիսկոպոս Զալալեանցին։ Որոնց յանձնարարած էր տեղեկանալ նաև Սարգսի վերայ եղած գանգատների որպիսութիւնն։ Դա այցելեց Սարգսի ուսումնարանը, կանչեց նորան իւր մօտ խօսեցին մեղմով զանազան առարկաների մասին։ Վերջը Զալալեանցին առաջարկեց, որ Սարգիսը թողնէ իւր ուսումնարանում կրօնի դասաւանդութիւնն և յայտնեց որ ինքը յանձնել է Սահակ քահանայ Տէր-Սահակեանցին ձրիապէս աւանդել կրօնի դասերը նորա մօտ։ Համբարձումեանցին յանձնարարեց, Տէր-Սահակին սկսաւ յանձախել դասերին. բայց այս դասաւանդութիւնն երկար չը տևեց, ըստ որում վարժապետն ու քահանան գոհ չէին միմեանցից։

Անցաւ դարձեալ երկու տարի։ 1850 թ. մայիս ամսին Ներսէս կաթուղիկոսը Թիֆլիս եղած ժամանակն, երբոր իրան հասած նոր տեղեկութեանց հիման վերայ, մօտը կանչեց Ս. Համբարձումեանցին, որ և ուսումնարանը յանձնելով տիրացու Թադէոս Բուզաղեանցին (յետոյ աւագ քահանայ Բաղուի մէջ) կատարելու համար՝ ինքը ճանապարհուեցաւ Թիֆլիս։ Այստեղ յառաջ քան կաթուղի-

կոմին ներկայանալը՝ նա անմոռաց պատոր Ֆիբրոն հետ, որը տուաւ նորան հարկաւոր խորհուրդներ, թէ ինչպէս ներկայանայ կաթուղիկոսին և ինչպէս պատասխանէ *)։ Ի թիւս այլոց պատուելի պատոր տուաւ հետեւեալ ուշադրութեան արժանի խորհուրդը. «Հարկ չը կայ ճշմարիտը խոստովանելու համար ասել, թէ Հայոց եկեղեցու մէջ այս ինչ կամ այն ինչ կէտը չեմ ընդունում, ի զուր անգը մեղադրութեան առիթ տալով. անօգուտ ճշմարտութիւնը պէտք չէ խօսել, երբ մանաւանդ նորա մասին չեն հարցնում։ Դու միշտ պնդէ, թէ ես ընդունում եմ Աստուածն և ցանկանում եմ միայն Աստուածը կարդալ՝ ինձ համար և ուրիշի համար — այստեղ մեղադրութեան պատճառ չը կայ, ճշմարիտն էլ այդ է»։

Սարգիսը ներկայացաւ կաթուղիկոսին, որը բարեհաճութեամբ ընդունեց նորան։ Վերջինս մատ նոյն ժամանակ կային մի քանի անձինք՝ աշխարհականք և հոգևորականք, որոնց մէջ և Կարապետ վարդապետն Շահնազարեանցը։ Սարգսին ոչինչ հարցափորձ չեղաւ. միայն կաթուղիկոսն հրամայեց որ կարդան, չը դիտեմ թէ ինքը կարդաց,

*) Պատոր Ֆիբրոը մի ջերմեռանդ պաշտօնեայ էր. շատ յարգում էր Համբարձումեանցի աշխատանքն և իւր կարողութեան չափով նեղանակել էր նորան տարեկան 50 ռուբ. նուէր, որ ճշտութեամբ ամեն տարեգլխին ուղարկում էր նորան։ Պատոր այժմ վախճանած է. բայց իւր թոռան կտակին համաձայն վերոյիշեալ նուէրը մինչև հիմայ էլ ուղարկում է Համբարձումեանցին իւրաքանչիւր տարու առաջին օրերում։

Պօղոս առաքելոյ առ Գաղատացիս գրած թղթի Ա. գլուխն ի լուր ամենեցուն։ Այս ընթերցուածից վեհափառ կաթողիկոսն կամենում էր լսողների և ի հարկէ գլխաւորապէս Սարգիս վարժապետի մըտադրութիւնը դարձնել հետագայ խօսքերի վերայ. «Զարմանամ, զի այդպէս վազվաղակի փոփոխիք յայնմանէ, որ կոչեացն զձեզ ի շնորհս Քրիստոսի՝ յայլ աւետարան։ Որ ոչ զոյ այլ. բայց եթէ իցեն ոմանք, որ խռովեցուցանիցեն զձեզ և կամիցեն շրջել զաւետարանն Քրիստոսի։ Այլ թէ մեք, կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի։ Որպէս յառաջագոյնն ասացաք՝ և արդ դարձեալ ասեմ, Եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առիքն, նզովեալ լիցի»։

Ուրիշ այլ ևս ոչինչ չասաց կաթուղիկոսն։ Ներկայ եղողները հետզհետէ եկան գնացին բացի Սարգսից։ Այդ միջոցին ներս եկաւ Ցանկաստանցի ոմն՝ Կարապետ աղա, որ նոյն ժամանակ մեծագոյն ընծաներ էր բերել կաթուղիկոսի համար։ Գալուց։ Կաթուղիկոսը ծանօթացրեց Կարապետ աղային Համբարձումեանցի հետ. «Սա է, ասաց, շամախեցի Ս. Համբարձումեանցն, որի վերայ իւր քաղաքակիցները մեղադրանքներ են բարձում»։ Վեհափառ ուէր, ասաց Կարապետ աղան, երբ ծառը շատ պտուղ է տալիս, վրան քար ձգողներ շատ են լինում։ Բայց երբ կաթուղիկոսը հասկացրեց, որ նորան մեղադրում են լուսերականութիւն քարոզելու համար՝ Ցանկաստանցի հիւրը տաքացաւ

և սկսաւ զայրութիւն ու նախատանք խօսել առ հասարակ լուսերականների վերայ։ Ներսէսը սատանց նորան որ հանդարտուի. «Ցանում եմ, որ դուք սովոր եք շատ խօսել, քան թէ լսել. նկատեց կաթուղիկոսը՝ թանձր յօնքերը պռոնելով, — ես տեսել եմ շատ լուսերականներ. երանի թէ Հայոց ազգը նոցա չափ զարգացած լինէր»։

Կարապետ աղան լռեց և դուրս գնաց։ Յետոյ Ներսէսն սկսաւ քաղցրութեամբ խրատել Սարգսին. խօսեց խղճի և համոզմունքի ազատութեան սրբութեան վերայ. բացատրեց Հայոց եկեղեցւոյ սրբութիւնն և նորա նշանակութիւնը Հայ ազգի համար. ցոյց տուաւ կրօնական սատակման ցաւալի հետևանքները, և . . . և այսպէսով շատացաւ խորհրդակցաց կաթուղիկոսը։

Սարգիսը մէկ շարաթ մնաց Թիֆլիզում և ամեն օր գրեթէ Ներսէսի մօտն էր լինում Հային կամ թէյին։ Սրանից յետոյ նա առաք փառաք վերադարձաւ Շամախի։

Վերադարձին վարժապետը մտաւ Գիրք գիւղն, ուր նա մի փոքրիկ ուսումնարան էր բաց արել իւր հատուցած աշակերտների—տիրացու Թադէոս Ռուդաղանցի և Գիրքեցի Յովսէփի օգնութեամբ։ Այստեղ Բաղդասար քահանայ Տէր-Մարկոսեանն, որի որդին ուսանում էր վարժապետի մօտ և որ շատ յարգում էր նորան, անհամբերութեամբ սպասում էր նորա գալստեան և մի ոչխար էր խոստացել. եթէ նա բարեհաճող կերպով յետ դառնար։ Ի՞նչ ասել կուզէ, որ այժմ խոստացեալ ոչխարը մորթուեցաւ և վայելուեցաւ ըստ կարգին։

## Ը.

Համբարձումեանի վերադարձը Շամախի և նոր գործունէութիւնը. Տեղական քահանաների բողոքը. Հոգևոր իշխանութեան կարգադրութիւնը գայթակղութեան առաջն առնելու համար. Գէորգ եպիսկոպոս Վեհապետեանը Շամախում. Համբարձումեանին քննութեան ենթարկելու պատրաստութիւններ. Ընդդիմադիր ջանքեր. Անհետանալը քննութիւն։

—

Թիֆլիզից Ս. Համբարձումեանցը վերադարձաւ առաջ փառաջ։ Դիրքը գիւղի մէջ, ուր վարպետը բաց էր արել մի տարրական ուսումնարան իւր ղեկավարութեամբ և իւր աշակերտների գործակցութեամբ, Բաղդասար քահանայ Տէր-Մարկոսեանցը նորան բերկրալից ընդունելութիւն արաւ և հացկերոյթ կազմեց։ Տէր հայրը վարպետին իրանց գիւղի լուսաւորիչն էր համարում։

Շամախի վերադառնալուց յետոյ Համբարձումեանցն ոչ միայն չը դադարեց յարմար ժամերում, գիշերօրեայ կիւրակի օրերը, աշխատակցելով իւր մարգարանում պարզամիտ հայերին, այլ կարծես առաւել ևս խրախուսուեցաւ նոյնը շարունակելու։ Նրքը վարժապետն և իւր խմբից աւելի բան հասկացողները խոհեմութիւն չէին համարում խօսքով կամ գործով անժամանակ յուզմանն և գայթակղութեան առիթ ստեղծել ժողովրդի մէջ։ բայց այդ վարպետութիւնից զուրկ էին շատ խմբակիցներ, որոնք մասամբ գլուխ ցոյց տալու

համար, մասամբ պատկառանքի զգացման թուլութիւնից՝ յայտնապէս վիրաւորում էին պարզապէս ժողովրդականների նուիրական զգացումները։

1851 թ. յունիսի 6-ին Շամախու ժիսական քահանայք Տէր Հայր. Տէր-Յովհաննէսեանց, Տէր-Յովհ. Զաքարեանց և Տէր-Սահակ Տէր-Սահակեանց՝ մի յայտարարութիւն մատուցին կոնսիստորիային առ այն, թէ «նոյն միջոցին երկրի սաստիկ երաշտութեան պատճառով ամեն կողմից անձաթացած մեծահաւատ յուսով և ամենաջերմեռանդ սիրով ապաւինած ս. Սանդիանոսի բարեխօսութեանը՝ նորա նշխարքն և ոչխար Սաղիանու վանքից բերած են քաղաք մեծ հանդիսով և պաշտամամբ, որից յետոյ և անձրևել է առատապէս։ Յետ այսորիկ, ասում են, պատահել է իրանց Յով. Ղազարեանի տանը հացկերութի ժամանակ խօսել այդ առարկայի մասին, ուր Դէորգ Համբարձումեանը սկսել է յայտնարարբատ արհամարհել բոլոր իւր կանխիկ սովորութեան ս. Սանդիանոսի և բոլոր սրբոց նշխարքն ու բարեխօսութիւնը. և ոչ այնչափ միայն, այլ և ինքը խմորուած գոլով լութերական ազանդով՝ օր քան զօր ապրածում է նոյնը պարզամիտ հայոց մէջ. ուստի հնարելով պակասում է ժողովրդի յարգանքը դէպի եկեղեցական զարդերը, պատկերները ու հայրենադիր աւանդութիւնքը։ Այս ամենի պատճառը քահանայք համարում են յիշեալ Դէորգի սրդի Սարգսին, որ Դերմանիոյից եկել կարդել է մի վարժատուն քաղաքս մէջ և անվնեներ փութով պատրաստեալ ինն կերպիւ իւր

աշակերտելոց ուսուցանում է լուսերական ազգերը և խնդրում է Հայաստանեայց եկեղեցոյ գառնուկ մանկանց անխախտ սիրտը։ Այս ամենը, գրում են նոքա, վաղուց իրանք տեսնում և իմանում էին և աշխատում էին յորդորմամբ յետ պահել նորան նոյն ուսումն տարածելուց, բայց նա՝ Մարգիսը «ջանագիր է անձանձիր աշխատանոր զիւրն յառաջ տանել զուսումն»։

Այս յայտարարութիւնից մի քանի օր յետոյ Մարգիս Համբարձումեանն եղբայր Զարութիւնն էլ խնդրագրով յայտնեց կոնսիստորիային, որ իւր եղբայր Մարգիսը տարելով լուսերականութիւն՝ քանի տարուց ի վեր եկել բացել է ուսումնարան և առանձին քանի անձինք շրջել իւր կողմն, որպէս և իւր հօրն, և հանապազ հրաւիրում համոզում է իրան էլ, որ ուրանայ հայոց եկեղեցին։ Հայրն էլ միշտ կռուում է իրան հետը, թէ «թող քո այդ փուչ հաւատը, միարանութիւր մեզ հետ, որ կեանքդ ու հոգիդ լաւ լինի»։ Որանից յետոյ պատմում է, որ ինքը չէ ընդունել, գնացել է Պարսկաստան. հայրն ու եղբայրը բարկացել՝ տանից դուրս են արել իւր կնոջն ու որդուն և յափշտակել իւր բաժին կայքն. այս ընկալով ինքն ըշտապել եկել է Պարսկաստանից, բայց նորան տուն չեն թողնում։

Անշուշտ՝ այս խնդրագրի շարժառիթները լոկ բարեպաշտական չեն. բայց և յառաջ բերուած մեղադրանքները չեն հիմնովին ստայոց։

Այս մասին Շամախու կոնսիստորիան տեղե-

կութիւն տուաւ Էջմիածնի սինոդին, ինդրելով նորանից հրահանգ յիշեալ գործի վերաբերմամբ. ինքը կոնսիստորիան արտաքին էր գործը յանձնել քաղաքական դատաստանի, և մինչև քննութեան վերջն արգիլել Համբարձումեանին ուսուցանելու հայ մանկանց։

Այս իսկ ժամանակ Ներսէս կաթուղիկոսը տեսնելով էր արդէն ուղարկել Շամախի Գէորգ եպիսկոպոս Մարգարեանին (Վենապետեան) մի քանի հարկաւոր յանձնարարութիւններով. ի թիւս այլոց նորան յանձնած էր Շամախու նորակառոյց եկեղեցին օծել։ Կոնսիստորիայի վերոյիշեալ խնդրանաց լրումն տալու համար՝ նորան պատուիրեաց նաև հանձնարարել խորհրդակցութեամբ կոնսիստորիայի և հայազգի բարեպաշտ իշխանաց առնել ամենայն ճշտութեամբ գրաւոր վերահասութիւնս։ Եթէ Մարգարի մասին տուածներն սոյգ երևէին՝ այն ժամանակ նա պէտք է իւր տուեալ քննական գործն առանձին հաղորդագրութեամբ ուղարկէր Շամախուց գինուորական նահանգապետին։ Այդպես խափանելոյ զուսումնարանն զայն և առնելոյ գործնական քննութիւնս։ Արքեպս. Վենապետեանը ժամանեց Շամախի 1851 նոյ. 22-ին և համաձայն իրան տուած պատուիրանին՝ մի ժողով կազմեց կոնսիստորիայում, ուր խորհրդի կոչուեցան տասն և երկու առաջնակարգ հայ իշխաններ, որոնց անունները կարևոր չեմ համարում դնել։ Այստեղ բողոքարկու քահանաներից պահանջվեցաւ առանձին գրաւոր յայտարարու-

թիւն, թէ ինչ բանի մէջ յատկապէս նորա մեղաւոր են ճանաչում Ս. Համբարձումնանին։ Քահանայք պաշտօնական գրութեամբ նշանակեցին նորա և հետևողների ուսմունքն, որ է—

1. Տիրամօրը չասել Աստուածածին, այլ Ցիառուսածին։ 2. Ղա անարատ կոյս չէ, այլ հասարակ կին, Յովսէփի ամուսին։ 3. Չերկրպագել սէրուբական օծեալ պատկերներին, առաւելապէս Աստուածածնի։ 4. Չընդունել սրբոց բարեխօսութիւնը, (որ հանրահաշակ այպանում են ժողովրդոց առաջ)։ 5. Չընդունել սուրբ եկեղեցոյ պատարագը և օժանդակութիւնը ննջեցելոց համար։ 6. Թողած սուրբ եկեղեցին՝ ժողովարանն էլ եկեղեցի են համարում իրանց համար։ 7. Փրկական խաչն չեն ընդունում։ 8. Ցեառնագրեն մեղք են համարում։ 9. Սրբոց մասունքն և սրբոց պատկերաց յարգանքն այպանում են։ 10. Արհամարհում են քահանայագործութիւնը, եկեղեցոյ սրբազան խորհրդոց արարմունքը, գերեզմանօրհնէքը, ընթրիքը, մատաղը։ 11. Ասում են և ոչինչ են համարում ննջեցելոց համար քահանայից ձեռքով եղած յիշելիքն ու յիշատակներն եկեղեցու մէջ։ և 12. Ասում են, թէ եկեղեցին առաքելոց և մարգարէից վերայ չէ հիմնած։

Խորհրդակցող ժողովը միաձայնակար ճանաչեց Սարգիս վարժապետի ուսուցչական և քարոզչական գործողութիւններն և նկատ այն եղրակացութեան, որ հարկաւոր է փակել նորա ուսումնարանն և քննութիւն նշանակել նորա վերայ։ Կոն-

սիատրիան անմիջապէս առաջարկեց քաղաքապետին յիշեալ վերապակար ուսումնարանն փակելու՝ մինչ առանձին անօրինութիւն հայոց բարձրագոյն հոգ. իշխանութեան կողմից. բայց քաղաքապետը մերժեց կատարել այս առաջարկութիւնը, պատճառելով որ այդ բանի համար պէտք է դիմել գաւառական ուսումնարանի տեսչին, որի հսկողութեան տակ գտնվում է Համբարձումեանի ուսումնարանն, ըստ որում բացուած էր Անդրկովկասու ուսումնական վարչութեան թոյլտուութեամբ։

Մինչ այս մինչ այն Շամախու անուանի իշխաններից մէկն իւր անձնական հաշիւներից զբրդուած՝ կամեցաւ վերոյիշեալ ժողովի որոշումներն ունայնացնել ի հեճուկս իւր հակառակորդների, իւր գերազանց զօրութիւնը նոցա ցոյց տալու համար։ Նոյն գիշերը ծածուկ նա կանչել տուաւ «Սեյնադ» մականուանեալ Պետ. Մադաթեանցին և մի խնդրագիր գրել տուաւ պատշաճաւոր քաղաքական իշխանութեան անունով, թէ Սարգսի դէմ եղած գանգատները զրպարտութիւններ են, և նորա ուսումնարանը թէ որ փակուի՝ հայոց մանկունք խաւարի մէջ կը մնան։ Խնդրագիրն անյապաղ յանձնվեցաւ ստորագրել տալու. միւս օրը պատրաստ էր թերթը։ Ստորագրութիւնը ժողովված էր այն եղանակով, որպիսին սովորական է այս տեսակ դէպքերում հարուստ կալուածատէրների համար։ Այս խնդիրն անհետևանք չը մնաց։ Մի քանի ժամանակ յետոյ հայոց հոգևոր իշխանութեան պահանջած քննական գործի վերաբեր-

մամբ Շամախու գիներալական հանձնապետը յայտնեց սինոդին, թէ Համբարձումեանը, ինչպէս երևում է իւր որոշմանը պօլիցիայի կատարած քննութիւնից, հայոց ազգանունը լութերականութիւն չէ ուսուցանում, այլ ընդ հակառակն՝ խաղաղ վարքով, զոմեի բնաւորութեամբ և բարեբ դատարակութեամբ մանկանց դրաւել է Շամախու հայ ազգի բնակիչների շատերի մատդրութիւնը, և թէ քահանաների բոզորը բարուրանք է և թշնամութիւն և պօլիցիայի այս եղրակացութիւնն, առում է, հաստատում է 200 չափ շամախեցոց առարդրութեամբ ուսումնական վարչութեանը մատուցած խնդրագրով, որի մէջ նոքա մեղադրելով չորս յայտնի քահանաներին՝ չեն ուզում որ փակվի Համբարձումեանի ուսումնարանն որպէս զի ազգաս ժողովուրդը չը զրկուի լուսաւորութեան միջոցներից։

Սակայն վերոյիշեալ քննութիւնն համարուեցաւ անվաւեր, ըստ որում հոգ. իշխանութեան կողմից ներկայացուցիչ չէր եղած քննութեան ժամանակ։ Այս միջոցին մի յայտարարութիւն ևս մտաւ կոնսիստորիա շամախեցի 11 անձանց կողմից, որի մէջ նոքա գանգատում էին, թէ իրանց ներկայութեամբ Գէորգ Համբարձումեանն և Եսայի Անտոնեանն զանազան անարգական խօսքերով վիրաւորեցին իրանց ջերմեռանդութիւնն, անհաւատ անուանելով նրանց և անարգելով սրբերն ու զոհը, վասն զի իրանք գնացած էին ուխտ Քէրքէնջ գիւղի սբ. Սահակ ուխտատեղին և մա-

տաղ արած։ (Ասում են իբր թէ երբ Մոմէս վարդապետը Համբարձումեանին կանչեց յիշեալ առարկայի մասին հարցնելու՝ նա սկսաւ հերքել այդ գանգատն այսպիսի անվայել երդումով. «ապաստող վկայ՝ այդ սուտ է»։ Հասկանալի է, որ այս դէպքն էլ աւելի պէտք է հարկադրական անէր կանոնաւոր քննութեան փութացումն։ Եւ ահա 1853 թ. դեկտեմբեր 10-ին Պիտոդի պահանջմամբ նահանգապետ Զիլեայեվը նշանակեց նոր քննութիւն գաւառապետ օդնական Պետուեվ—Եգորովի ձեռքով։ Հոգևոր իշխանութեան կողմից ներկայացուցիչ նշանակված էր Մով. վարդապետն Մաղաքեանց։

Այս քննութիւնը տեւեց ամբողջ ութ ամիս։ Թէպէտ և Մոմէս վարդապետին պատուիրած էր քննութեան ժամանակ կազմած արձանագրութիւններն օրինակել և հասցնել հոգևոր իշխանութեանն, բայց նա 1854 թ. նոյեմբեր ամսում յայտարարեց թեմական ատենին, թէ՝ քննական գործն արդէն վերջացել է սեպ. 3-ին, այլ որովհետև գրութիւն այնորիկ գործոյն կարի մեծ էր և բազմաթերթ, նա մանաւանդ, քան մեծի մասին ռուսերէն, ուստի տկարացայ և յատկապէս անհնարին եղև ինձ ըստ հրամայելոյն գործին արտագրելով զպատճէն վաւերական բովանդակ օրինակի այնր գործոյն՝ մատուցանել դմին» (!!)։

## Թ.

Տէր-Սանֆան Մանդինեանը Շամախում և իւր յայտարարութիւնը. Նոր քննութիւն. Արդիս վարպետն հարցափորձի ժամանակ. Բողոք Ռուսաստանի դէմ. Այս վերջինս ենթարկվում է քննութեան. Ազգական գրագրութիւնք.

—

Վերը յիշուած քննութեան հետեւանքը դեռ ոչնչով չերևեցած՝ մի ամբողջ տարի յետոյ՝ նորէն յանձնուեցաւ Պետուեվին քննութիւնը շարունակելու, ըստ որում հոգ. իշխանութեան կողմից մատուցած էր նոր բողոք Սանֆանոս քահանայ Մանդինեանցի հազորդագրութեան հիման վերայ։

Յիշեալ քահանայն եկել էր Շամախի իբրև վերաքննիչ կոնսիստորիայի գործոց. Տեղական արքունի ուսումնարանի տեսուչ կոչեր նորան հրաւիրեց Համբարձումեանցի ուսումնարանը՝ հարցաքննութեան ներկայ լինելու։ Հայր Մանդինեանցն, իւր ասելով, յայտնապէս տեսաւ այնտեղ, որ Համբարձումեանցն ուսուցանում է հայոց առաքելական եկեղեցուն հակառակ ուսմունք, որի մասին նա ծանոյց տեսուչ կոնին եւ, որ նոյնպիսի թիւր դաստաուութեան և ուսման առաջն առնէ։ Թիւր ուսմունքը նկատված էր սրբազան պատկերների և սրբոց բարեխօսութեան վերաբերեալ հարցերում։

Այսպէս ուրեմն Արդիս վարժապետը նորէն ենթարկվեցաւ քննութեան։ Այս քննութեանց ժամանակ ծառայող թարգմանիչներից մէկն ինձ հաստատում էր, որ Համբարձումեանցը քննական

ատենի առաջ շատ զգոյշ էր վարվում, որ մի գուցէ առիթ տայ որևիցէ խնդրում օրինական ճանապարհով մեղադրում կացուցանելու իրան. բայց մասնաւոր խօսակցութեան մէջ չէր թաղցնում իւր կրօնական հայեացքներն՝ եկեղեցական այլ և այլ ծէսերի և կանոնների դէմ. Հարցափորձի ժամանակ, երբ իւրաքանչիւր արտասանուած բառ պիտի արձանագրուէր, նա պնդում էր, թէ ինքը չէ հեռացած հայոց եկեղեցուց, որի արքունիքը ճանաչում է, միշտ եկեղեցի է գնում, հաղորդվում է և այլն, քահանաների մեղադրութիւնն իրան դէմ՝ զրպարտանք է, ինչպէս դեռ 1844 թուին ապացուցուած է այդ կոնսիստորիայում. Եւ յիրաւի այս ամենը սուտ չէր երևութապէս, ինչպէս ինքը կոնսիստորիան էլ պաշտօնական պատասխանի մէջ հաւատաց այս ցուցման ստուգութիւնը քննչի համար. Միւս կողմից Համբարձումեանցին միշտ պաշտպանում էր մի մեծատուն ժողովրդական, որ և իւր արքանեակների ստորագրութեամբ 1855 թուականին մի խնդրագիր տալ տուաւ քննչին ի պաշտպանութիւն վարժապետին.

Քննութիւնը շարունակ ձգձգվում էր՝ առանց մի վախճանական որոշման յանգելու. այն ինչ մեղադրութեան նորանոր նիւթեր աւելի և աւելի շատանում էին Սարգսեանց դէմ. 1858 թ. յուլիսի սկիզբն էր, երբ ժխատեարք՝ Յովհաննէս քահանայ Զաքարեանց, Սահ. ք. Տէր-Սահակեանց Յով. քհ. Մաղաթեանց, Սար. ք. Փիրվերդեանց և Սար. ք. Շահվերդեանց յայտարարութեամբ

ծանուցին կոնսիստորիային, թէ՝ ումն թուրակրան Ռոստոմ Քեռիա-Գաբրիէլեանց դայթակղեցնում է ժողովրդին, և թուում են նորա մոլորութիւններն, որ նոյնն են, ինչ որ Սարգսիանը։ Վերջը՝ երեսանկեալ աղաչում են զգարման տանել և ըստ Տեառնէն պատգամաց զդայթակղեցուցիչ անդամն 'ի քաց ընկենուլ, զի սհաւասիկ քաղաք ամենայն զկնի նորա գնացին։

Մովսէս վարդապետը բարեաց համարեց այս անգամ տնական եղանակով դայթակղութեան առաջն առնել, մեղադրված Քեռիա-Գաբրիէլեանցին կանչեց կոնսիստորիա և շորս պատուաւոր քաղաքացիների ներկայութեամբ խրատեց նորան չը հետևել Սարգսի մոլորութեանցն և դառնալ հայոց եկեղեցին, որ և ձեռագրով խոստացաւ յետ այնորիկ ոչինչ չը խօսիլ Հայաստանեայց եկեղեցւոյ ծիսակատարութեան և սրբոց դէմ, այլապէս պիտի ենթարկվի պատասխանատուութեան ըստ օրինաց տէրութեան։ Որանից յետոյ Մովսէս վարդապետը պատուիրեց Մագաթեանց քահանային հսկողութիւն ունենալ Ռոստոմի վերայ, թէ արդեօք վարում է իւր տուած ստորագրութեան հակառակ։

Ցիշեալ Ռոստոմը չը պահեց իւր խոստումն. այս պատճառով նահանգապետի կարգադրութեամբ նա բանդարկվեցաւ, թէև շատ կարճ միջոցով։ Այստեղից արձակվեցաւ նոր խոստումներով. այլ սակայն որովհետև խոստմնազանց գտնվեցաւ, ուստի սա ևս ենթարկվեցաւ քննութեան։

Քննութիւն քննութեան խառնվեցաւ. այս անգամ քննիչն էր Եանցեվ, որ պիտի շարունակէր հին ու նոր գործերի քննութիւնն ի միասին։ Սակայն այս գործն էլ երկար ու բարակ ձեւական գրագրութիւններով ու հարցափորձերով ձգձգվեցաւ և հակառակ Մաղաքեանի փութացուցիչ ջանքերին՝ ամիսներվեցաւ դաւառական դատարանի արխիվի մէջ, կրելով այս մակագրութիւնն. «Ամա ձեռացես և զլոյս մի տեսցես»։

---

## Ժ.

### «Փոքրիկ հօտ» ժողովները. Մ. Թառահեանցի մատուցած խնդրագիրը. Ընթերցանութեան և զրուցաբութեան ժողովներ եկեղեցու սրահում։

—

Որչափ դանդաղ ու թոյլ էր ընթանում Սարգիս վարպետի և Ցկըա—Ռոսոմի քննութեան գործն, այնքան աւելի նոցա հետեւողների թիւը բազմանում էր։ Ամեն կիւրակի քաղաքից դուրս մօտակայ Հաշ-Գեասան, Փեղրաքու և Ղրզ—Ղալասի կոչուած լեռնականների հովիտներից մէկին կամ միւսի մէջ կարող էիք պատահել «Փոքրիկ հօտն» հեռացած, առանձնացած և Ս. Գրոց ընթերցանութեամբ կամ կրօնական զրուցաբութեամբ զբաղված։ Եւ որովհետև ժողովուրդը, հոգ. իշխանութիւնն և ոստիկանութիւնը չէին դադարեցնում իրանց հետամտութիւնը՝ յիշեալ խումբը ցրուելու

համար, ուստի նորա ներկայացուցիչներից մէկը, ի հարկէ միւսների հաճութեամբ, մի խնդրագիր մատոյց թեմի կառավարիչ գեր. Մաղաքեանին որով աչխատում էր արդարացնել իրանց և դատապարտել զրպարտող քահանաներին։ «Այս իմ եղբայրներով ու ժանօթ ընկերներով, ասում է, երկար ու ձիգ ժամանակ անցուցինք մեր թանգագին կեանքն հոգեկորոյս շուայլութեան մէջ և մինչև հերու խօլերայ ժանտախտի ժամանակին ։ Հէնց, որչափ յանկարծահաս մահ տարաժամն ահ ու դող էր ձգում մեզ վերայ՝ հանապազ առաջներիս կացուցանելով մեր մօտակայ օրհասն, նոյնչափ մենք տալիս էինք մեզ անխոհեմաբար շուայտութեան և արբեցութեան, և անպարկեշտ խաղուց և ծաղրաբանութեանց։ Եւ այդպէս անընկիւղ շարունակելով մեր սովորական ընթացքն անընդհատ՝ մի կիրակի օր ոչ պակաս ընկերաց, որումն արտաքոյ քաղաքին նստած անհոգ և անփոյթ բոլորովին մեր ատուածընդդէմ կենաց համար և անաչառ դատաստանին ըստ հանապազօրեայ սովորութեան մերոյ քարտ էինք խաղում՝ ահա յանկարծ դուրս եկաւ մեզ մօտ, ի հարկէ ըստ Վերինն անօրինութեան, շամախեցի Ռոստամն Գեօխա—Գաբրիէլեանց, որ յետ սակաւուց ասել սկսաւ. «Եղբարք, սա ինչ ժամանակ է՝ որ դուք խաղ էք անում ձեր մեղքերով. եթէ այս բոպէին Ատուած ձեզանից մինն կանչելու լինի, ինչ պատասխան ունիք տալ նորա արդար դատաստանումն։ Նոյն ժամայն մենք իբրու քնից արթնացած պատասխանեցինք

ձեռներին քարոզը, թողնք մեր ամենայն չարչ կեանքը և առնք նորա տեղ Աստուծոյ հոգին մխիթարող խօսքը, որով յուսամք ունել զկեանս և որ միայն անախտ առաջնորդն է քրիստոնէից դէպի փրկութիւն։ Յետոյ Թառանեանը գանգատվում է, որ իրանց ծխական քահանայք «փոխանակ ուրախանալու, որ իրանց ոչխարներն արածում են մարմանդ տեղերում առանց իրանց առաջնորդութեան և աշխատանաց՝ զրպարտում ու բամբասում են իրանց, և նոցանից մինը՝ տէր— Յովհան Մատաթեանց՝ մինչև անգամ երեսներին նեռայինք է անուանում իրանց, պատասխանելիս ոչ-ջոյն չեն տալիս, և այլն այսպիսիք, և այս ամենը, ասում է, նորա համար, որ մենք սիրում և կարդում ենք «Աստուծոյ սուրբ տառը։ Այսպէս՝ շարունակելով նոյն յանդգնամտութիւնը և վկայելով, որ իրանք ընդունող և յարգող են լուսաւորչական եկեղեցին և հաղորդ նորա սուրբ խորհուրդներին առանց քան թէ քահանաներն իրանք՝ հարցնում է, թէ՝ մինթէ սուրբ Գիրք կարդալն, կիրակի օրը սուրբ պահելը, արբեցութիւնը թողուլը՝ նեռութիւն է. մինթէ, շարունակում է գարձեալ, մեզ սուրբ հարք չենք ունեցել, որ Աստուածաշունչ Ս. Գիրքը հաղարաւոր անգամ գլխից գլուխ կարդել են. մինթէ սուրբ վարդապետներ, մարտիրոսներ, նահատակներ չենք ունեցել, որ գիրքն թերաններին անգամ չեն գրել, Ս. Աւետարանը սրտերին կոխած իրրև իրանց միակ միխիթարութիւն, սարերի խառնչներումն իրանց կեանքն անցուցել են. սա

ինչ առակ և նշանակ ենք եղել. գինի չը խմելնե-
բուս համար իբր լուսերական բամբասվում։ Հայր
սուրբ, ոչա մեզ համար հոգևկեցոյց հայր չեղան,
այլ հոգևկորոյս վարձկաններս։ Այսպէս ահա շա-
բունակում է խնդրագիրը կշռամբիչ ոճով, մեղա-
դրելով քահանաներին իբրև անփոյթ ու ագէս
հովիւներ, որոնք միմիայն իրանց շահու և կեր-
ուխումի համար են հոգս քաշում, և իրանց ա-
բարմունքով գրարի օրինակ լինելու տեղ՝
առաւել գայթակղիչ են և համարեցեք ՊԷՏՔԻՆԷՑ
ՓՈՌՆԷ ԵՆ ՓՈՂԻՆ նոցա և օտարացնում մայր եկե-
ղեցուցս։ . . ԱՉՔ որ, ասում է, հաւատը լսելիցն
է, և լսելն՝ Աստուծոյ խօսքերից. իրանք չունին
տեղեկութիւն Ս. Գրքից և սէր խօսելուց, խօսող-
ների վերայ էլ շար նախանձով լցված բամբա-
սում են. Ուստամբը, ես և միւսը ով ենք՝ որ Աս-
տուծոյ սուրբ խօսքը մեզանից լսել. ասնատրանի
պաշտօնեայ չենք ոչա. ինչու չեն մեզ իրանց թե-
ւերի տակն առնում, իրանք սովորացնում մեզ՝
թէ ինչ է բարին և հաճելին և կատարեալն։ Այս-
պէս ահա՝ Մ. Թառահեանցն նախատելով և ծրա-
բակելով Շամախու ծխական քահանաներին իբրև
դատարկասէր, պղերգ, պորտաբոյծ, անփոյթ, բամ-
բասող ու դրպարտիչ մարդկանց, և յայտնելով, որ
իրանք երկար ժամանակ թշուառութեան մէջ
կեանք անցուցանելուց յետոյ այժմ անառակ որդ-
ւոյ նման դգջացած յետ են դարձել ադէպի պար-
կեշտութիւն՝ վերջացնում է խնդրագիրն, ազեր-
անելով, որ քաղաքի շինութեանց առաջն առնե-

լու և իրանց անձը բամբասանքից ու զրպարտութիւններից յաւիտեան ազատ կացուցանելու համար՝ Մաղաքեան վարդապետն իւր հոլանաւորութեան տակ առնու նոցա և նշանակէ նոցա համար տեղ և քահանայ ուր և ուր կը բարեհաճիւ և որոշեալ, ասում է, քահանայք մեզանից գանգատաւոր են, չը գիտենք ինչ պատճառի, վասնորոյ խնդրեմք խոնարհաբար ոյ Ֆը յայտնուրեան ԲՈՒՆՔ ոյն ՓՈՆՓՈՓԷՆ հետ նշել և ոյնպես ի Փոքր ՓՆԵԼՈՒ։

Վերոյիշեալ խնդրագիրն, որի էական կէտերը համառօտելի այստեղ ստուգապէս, պարունակում է իւր մէջ բոլոր այն պատասխաններն, որոնցով պաշտպանում էին իրանց Սարգսեանք, Թոստումեանք, Թառահեանք և այլք։ Նորա մէջ անչուշտ ճշմարիտ կէտեր շատ կան, մանաւանդ ինչ որ վերաբերում է քահանաների անմեղութեան, բայց և այնպէս չէ կարելի վստահիլ նորա անկեղծութեան վերայ, նա առաւել որ նա մատուցանվում է ճիշդ այն ժամանակ երբ հարկ կար, որ սա էլ կցուէր քահանաների գանգատագրին և այնպէս ի գործ դրուէր։ Կասկածի մի առիթն էլ կարող է այս համարվել, որ յիշեալ խնդրագիրն, անտարակոյս գործ Սարգիս վարժապետի Հակրարձումեանց, կրում է Թառահեանի և ոչ իւր յորինողի ստորագրութիւնը, որի կողմից աւելի սպասելի էր այն, քան որում նա էր գլխաւորապէս մեղադրանքի ենթարկվողը։ Քան չեմ ասում Թոստումի մասին, որովհետև նա մի անգրագէտ մարդ էր։

Այսպէս թէ այնպէս՝ Մովսէս վարդապետն ի յարգանս այս խնդրանաց և հնատեալներին եկեղեցու ծոցը գրաւելու համար՝ կոնսիստորիայի միջոցով յայտնեց խնդրարկու խմբին, որ նոքա ազատ են երկու եկեղեցեաց սրահներում ժողովուիլ և աւետարան կարդալ, ուր ներկայ կը լինէր իւր կարգադրութեամբ և հերթական քահանայն։

Վերոյիշեալ կարգադրութեան համաձայն մի երկու կիւրակի ԵՂԷՅԵՆ ԽՈՒՄԲԸ ժողովուեցաւ Շամախու մայր եկեղեցու սրահն, ուր է և առաջնորդարանը։ Սակայն տոյզը չը գիտեմ, թէ ինչ հանգամանքների պատճառով, այս ժողովները դադարեցան, և սիրելի հօտը նորէն թողեց եկեղեցու պարսպապատ սրահի նեղ շրջանակը, նախապատիւ համարելով դարձեալ մերձակայ լեռնակների գեղազարդ հովիտները, քաց օդի ազատ և անսահմանափակ վայրերը։ Ո՛վ գիտէ, կարելի է թէ մի ներքին ձայն ասում էր նոցա, թէ վայել չէ թագուցեալ խորհուրդներով հաւաքուիլ այն եկեղեցու որմանց տակ, որի համար նոքա այլ ևս չունէին իրանց սրտերում արժանաւոր յարգանաց և պատկառանքի ազնիւ զգացումները։

---

## ԺԱ.

Նորակազմ միաբանութեան մեծանալը. Մովսէս վարդապետի հոգածութիւնները՝ խմբի արգելման համար. Խմբի խնդրագիրը յանուն Վ. Հ. Կաթուղիկոսի. Ապարդիւն կարգադրութիւններ. Գէորգ եպիսկոպոս Մկրտչեանը Շամախում։

—

Մենք մինչև այժմ տեսանք, որ Շամախու մէջ տեղական հոգ. իշխանութիւնը չը կարողացաւ

հայ ժողովրդի մէջ հայ եկեղեցուց դուրս կատարուող աւետարանական քարոզութեանց առաջն առնուլ և հետեւողներին եկեղեցու ծոցը դրաւել՝ ոչ իւր թոյլ բարոյական միջոցներով, ոչ անզօր հալածանքներով։ Ընդհակառակն խումբը քանի գնում՝ աւելի էր մեծանում։ 1858 թուականի վերջում խմբին յայտնապէս մասնակցող և իբրև բողոքական մեղադրող ընտանիքների թիւը հասնում էր քսանի, որոնց մէջ նշանաւորներն էին՝ Սարգիս Շամբարձումեանց և իւր հայրն, Ղեսայի Աստուածատրեանց, Թոսատոմ Քեսիսա—Գաբրիէլեանց, Թառահնեանց բազմաշառաւիղ տունն և այլք։ Տանից դուրս, դաշտերում և լեռնամէջ հովիտներում եղած ընթերցմանց և զրուցատրութեանց մասնակցում էին միայն տղամարդիկ. իսկ կանայք և մանկունք տեսարանում էին տներում։

Ամենայն նորութիւն դրաւիչ զօրութիւն ունի, լինի նա մինչև անգամ մոլորութիւն. այսպէս և այս նորութիւնը շատերին էր հրապուրում։ Շատերի առաջը կարելի էր առնել, եթէ որ դիմադիր կողմից էլ, այսինքն եկեղեցու պաշտօնեաների և Աստուծոյ բանի կոչնցեալ ուսուցիչների կողմից նոյնպէս ջանքեր լինէին մի զօրաւոր բարոյական նորութիւն մտցնել իրանց պաշտօնավարութեան եղանակի մէջ՝ համաձայն իրանց կոչման թեկադրութեանց և համաձայն ժամանակի վերահաս պահանջմանց։ Բայց ինչ ջանքեր էին լինում...

Մաղաքեան վարդապետն երկիւղ կրելով, որ

Համբարձումեանի խումբը քանի գնում՝ բազմանում է և աւելի ևս կը բազմանայ, անթէ մարմնաւոր իշխանութեան ձեռքով չը վտանգաւորուի։ Չէր դադարում իւր երկիւղը յայտնելու բարձր հոգ. իշխանութեանն և խնդրելու, որ միջոցներ գործ դրուին Համբարձումեանի ուսումնարանը փակել տալու և ապա քաղաքից աքսորել տալու նորան, որ միակ պատճառն էր աղանդաւորութեան։ Այսուհետև ահա յառաջ եկան նոր պաշտօնական գրակցութիւնք սինոդի, Շամախու հոգեւոր ատեանի, թեմի կառավարչի և կոնսիստորիայի մէջ՝ Սարգսի և Թոմասի դատական գործի շարունակութեան և ուսումնասիրութեամբ. սակայն այս անգամ էլ ամենայն ինչ խճճուեցաւ առնական ձեռագրութեանց մէջ, առանց մի վերջնական եզրի հասնելու։ Վերջէս վարդապետը 1860 թուականի սգոտասին կարծեց պարտաւորած եղած լինել իւր կոչման մէջ, յայտարարելով Վառթէս կաթուղիկոսին, թէ Ս. Համբարձումեանը մարմնաւոր կառավարութեան զանցառութեան պատճառով՝ ժամ պարապ գտնալ յառաջ խաղայ ևս անվնասաբար յայտարարելի մոլար քարոզութեան իրոյ, ժողովելով միշտ և յարաժամ յիւր գլուխ զչիրթեալս իւրեանս։ Յայտարարութեան վերջը հայր սուրբը խնդրում էր Վեհափառ Կաթուղիկոսից անօրինութիւն անել՝ մարմնաւոր իշխանութեան խիստ պահանջմամբ ցրուել նոցա պրազմամարդ ժողովը և Համբարձումեանին քաղաքից հեռացնել։ Արիացեան հոգածութիւն քաջ հոլովին...

Մեզադրուած խումբը Մաղաքեանի վերոյիշեալ հոգածութեան լուրը կանխապէս առած լինելով և վախենալով երեսի անհաճոյ հետեւանքներից՝ իւր մի քանի ներկայացուցիչների ստորագրութեամբ շտապեց ուղարկել, 1860 թ. օգոստոսի 1-ին, յանուն Վեհափառ կաթուղիկոսի մի խնդրագիր, որն աւելորդ չեմ համարում դնել այստեղ ամբողջութեամբ, և է այս.—

« Ի ողել զինդրագիրս աւելորդ համարիմք գանգատանաք ծանրացուցանել զլսելիս Վեհափառութեան ձեր զտեղւոյս Մոմսէս վարդապետէ ի հաստակի, այլ զոր ինչ ի մասնաւորի, որ մանաւանդ հայի ի մեծ գայթակղութիւն փոքու հոտիսարժան գատիմք զնկուցանել։

« Շնորհաք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի խնայամուտ եղեալ մեր, թէ ոչ միայն ի մարմնական պէտս շնորհեցան կեանք, այլ և ի քրիստոնէական հոգեպէս շինութիւն ակնկալեալ յուսոյն երևելոյ ի քանի մի ժամանակաց հետէ թողեալ զաշխարհային զուարճութեանց հանդէսս՝ պարապէաք ի կիրակէ աւուրս զկնիս սուրբ պատարագին ի տան ուրեք, կամ ի բացութեայ դաշտի և կամ ի սրահս իսկ եկեղեցեաց քաղաքիս, յանուն Տեառն Յիսուսի վասն մեր խաչեցելոյ։

« Խորհուրդ քրիստոնէական ընկերութեանս էր միայն մատադիր ընթեռնուլ զսուրբ գիրս կամ զայլ հոգեշահ մատեանս և միտիթարիլ նոքիմբք, ընդ նմին փրկելով զանձինս ի ճեատակար ընկերութեանց հրապուրողաց ի կամս չարին։

« Մոմենս վարդապետին կասկած տարեալ զմէնջ իբր այն՝ թէ զումարիմք ի չար ինչ խորհուրդս, ի հերձուածողական միտս ըստ նորայն բանից. ոչինչ տարակուսեցաւ ձանձրացուցանել զբարձրագոյն հոգևոր առեանն սինհոդոսին Էջմիածնայ և տալ զմեզ ի ձեռս քաղաքական կառավարութեան, վկայութիւն չար առաջի արարեալ զմէնջ։ Ընթացք վերոգրեալ վարդապետին ի գործումս ուղղակի հակառակ են ազգային օգտի. ընթեռնուլ մեր զսուրբ գիրս չէ ինչ մի ի դայթակղեցուցչաց, այլ նորայն բռնակալական վարչութիւն մեծապէս նեմացուցանէ զանուն հոգևորականութեան, որ ի դատաստան մատնէ որոց ասուածային արարածին բանից ընթերցանութեան կամ ունկնդրութեան, յերկրային դիպուածս ևս ոչ միայն ներեալ ի Քրիստոսէ, այլ և ջատագովեալ և հրամայեալ. « քննեցէք զգիրս զի նորօք համարիցիք ունիլ զկեանս յաւիտենականս։

« Ոչ ուրէք ի կանոնագրութիւնս Հայաստանեայց եկեղեցւոյ նշմարին հետք ինչ արգելանաց, եղեալ ի վերայ ընթերցանութեան սրբազան տառիցն, որպէս պապականն բռնագրեալ զհօտ իւրայոլ ի ներհակն՝ եկեղեցին Քրիստոսի հիմնի ի սուրբ գիրս հնոց և նորոց կատարեալս։

« Ամենայն մահմէտականի համարձակ է ընթեռնուլ զկուրանն. ամենայն հրէի զհին կտակարանն. միթէ հայկականս քրիստոնէութիւն արգելուցու զուսումն սուրբ գրոց. չը կամիմք և չը կարիմք իսկ հաւատալ այդմ, թէն աչօք բացօք տե-

սեալ էր մեր զայդ շնորհիս Մոմխոմի վարդապետի անձանձրի խրոց պարտականութեանց։

« Զը հաւատամք այլմ, նեմ զի Մոմխէս վարդապետն ոչ կացուցանէ յանձին զիմոխանորդութիւն բովանդակ հայկական քրիստոնէութեան. զը հաւատամք դարձեալ թէ ընթերցանութիւն սուրբ գրոց գրեսցի մեզ ի յանցանս։

« Զխաստատութենէ իսկ Մոմխէսի վարդապետի ի յարգելուլ զմեզ ի շարունակութիւն յիշեալ ընթերցանութեան սուրբ գրոց թէ ետ առաջադրեալ ենք մեք ի Սիոնհոդոսն սրբոյ Էջմիածնի ի 12 նոյ. ամսոջ անցեալ 1854 ամի ընդ ստորագրութեամբ միայնոյ համախոհին մերոյ Մկրտչի Թառանեանց գիտղիր ինչ, ապատելով զարժանին զկարգադրութիւն առ ի ազատ կացուցանելոյ զհաւատարիմ որդիս Լուսաւորչական եկեղեցւոյ. բայց մինչ ցարդ ոչ ունիմք զհամբաւ ինչ զհետեւանաց նորա։

« Զայս ամենայն իսուարհաբար ծանուցանելով սրբազնակատար Քահանայապետիդ, որպէս զլուսաւորի քահանայութեան հայկականս ազգի, ազաչելք թախանձագին թոյլ տալ մեզ ըստ մերոյս սովորութեան պարտակել աստուածային գրոց ուսանելոյ և մի խլել ի մէնջ զմիակ միխիթարութիւն մեր և զհոգեւորական շինութիւն, զոր քաղելք ի վարդապետութենանց մարդացելոյն վասն մեր Աստուծոյ։

« Եթէ խաւարային և չարագրգիռ բանակցութիւն ուրուք շարժեալ են զվարդապետն Մոմսէս յոգոդել զհաւատս մեր ի վերայ լուսաւոր

չածին որդւոցս, ապա ապաշնորհք զհայրդ ազգիս հրաման տայ ուստիք ի քահանայից կամ ինքեան իսկ Մոմիկոն վարդապետն ներկայ լինիլ ի միաբանութիւն մեր և վերահասու՝ բովանդակութեան նորա, այն է՝ մերոց պարապմանց։

« Վնասիմեն տէր, հաւատամք թէ քաղաքացիք իցէք. թէ՝ բռնութիւնք թագաւորաց և հալածանք բարբարոսականք չուժեցին ստանալ քրիստոնէական բանին տարածման ի խաւար դարս անդ յաստուծին. հաւատամք թէ գիտէք ինքնին, զի թիւրս ընթացք և բռնութիւնք վարդապետին Մոմիկոնի բազմաց նուազ լիցին, քան որոց ի հուր և ի սուր մատնէին զքրիստոնեայս, սակայն ոչինչ զօրեցին խափան լինել աճելոյ և զօրանալոյ բանին Աստուծոյ։

« Թողումք զի ի ժամանակիս անազատեալ են բռնութիւնք ի փակել զճանապարհն ճշմարտութեան. այդպիսի անքրիստոնեայ նեղութիւնք յարուցեալք ի վերայ մեր զմիմիայն կարեն արդիւնաւորել զպտուղ, այն է՝ զչարաչար դայթակղութիւն հետևելոյն հանդերձ։

« Ակն ունելով, թէև յաջորդդ սրբոց առաքելոց Թադէոսի և Բարդուղիմէոսի հոցին ընթացակից լեալ ի հոմութեան՝ սատար գոցի քրիստոնեան բնակութեանս։ (Սոորագրութիւն 15 անձանց)։

Ներկայ խնդրագիրս, որ գրված է այնչափ զգուշութեամբ և այնչափ հաչուով, է բովանդակութիւնն այն ամենն պատասխաններին, որ տալիս

էր նորակազմ հիմնարկությունը հարցափորձի առանձնարանում։ Ճշմարիտ է ի հարկէ, որ Մաղաքիանը հալածում էր միաբանութիւնը, և յաճախ անխոհեմ և անհեռատես եղանակով, բայց բողոքարկուք դիտմամբ այսանդ ևս լռում են այն կէտը, որ հալածանքի գլխաւոր պատճառն ոչ թէ նոցա դրամբրութիւնն էր, այլ նոցա կոպիտ և դրգռիչ վարմունքը բանիւ և գործով եկեղեցական զանազան ծէսերի և արարողութեանց դէմ, որոնք սրբազործված էին ժողովրդի սրտում դարերից ի վեր։ Ուշադրութեան արժանի է, որ այս խնդրագրի մէջն էլ վարպետ Սարգիսը ձեռքերը լուացել մի կողմ է քաշուել. մեքենան ուրիշներն սարքի էր ընկել հարկաւոր չափով։

Որպէս և է, բայց գոնէ այս խնդրագրից յետոյ հայոց հոգևոր իշխանութիւնը թէ որ լուրջ մրտածէր՝ կարող էր աւելի խոհեմ և հեռատես միջոցներով գործին նպատակայարմար ուղղութիւն տալ և չը շատանալ լոկ անզօր և ապարդիւն կարգադրութիւններով։ Բայց ինչ արուեցաւ։ Վերոյիշեալ խնդրագրի պատճէնն ուղարկվեցաւ Մաղաքեանին, որ հետազօտէ թէ ցոր աստիճան իրաւացի համարին բանք գանգատաւորացող. այլ և առանձնակի պէտք է գնուէր. թէ ինչ գիրք են կարդում հետևաձները, և եթէ ոչինչ չ՝երևէր՝ պէտք է խոստովանահարց ձեռքով խրատուէր, որ իրանց տներում կարդան նոքա աբարի մարդ և բարի քրիստոնեայ գիրքը։ Այս խրատն և ցոյց տուած միջոցն, ի հարկէ, ոչինչ հետևանք չունեցան։

## ԺԲ.

Գէորգ եպիսկոպոսի առաջնորդութիւնը. — Համբարձումեանցի գործունէութիւնը. — Արցունք. — Առաջնորդի ջանքերն բողոքականութիւնն արմատախիլ անելու. — Մատթէոս Կաթուղիկոսի բանադրական կոնդակը. — Խրատատ. — Ժողովրդի յուզումն ու բողոքարկութիւնը. — Արցման շարունակութիւնը. — Երկրի կառավարիչների հայեացքը։

—

1860 թուականի վերջում Մոսկվա վարդապետն Մաղաքեանց չէր այլ ևս Շամախու թեմի կառավարիչ։ Նորա տեղ ուղարկուեցաւ Գէորգ եպիսկոպոս Մկրտչեանցն — Երևանցին։ Փոխուեցաւ թեմական առաջնորդը, բայց ոչ գործի ընթացքը։ Ո՛չ Սարգիս վարդապետն ու իւր գործակիցները դադարեցան իրանց խումբը մեծացնելու աշխատութիւններից և ոչ նոր առաջնորդը նոցա դէմ խափանարար միջոցներ գտնելու հոգածութիւնից։ Սարգիսը յաջողեցնում էր իւր առաքելական թղթոց ձևով յորինուած գրերով մօտաւոր քաղաքներում անգամ եկամուտներ վաստակել և կամ իրան արդէն հետևողների մէջ հոգու հաստատութիւն պահպանել. այն ինչ առաջնորդին չէր յաջողում եկեղեցու մէջ իւր մերթ ընդ մերթ խօսած քարոզներով յետ բերել եկեղեցուց ապրուցածներին և կամ առնել նոր հաւատքի առաջնու։ Սարգիս վարդապետն ամենայն վարպետութեամբ իւր խօսածն ու գրածը հաշուում էր դիմացի մարդու դդացմանց վերայ. առօրեայ հասարակական և ըն-

տանելիան կեանքն, ունկնդրի անտեսական կացութիւնը, տեղական անարժան եկեղեցականների աչքի ընկնող և դայթակղեցուցիչ արարքներն և այլ այսպիսի բաներ՝ նա նիւթ էր շինում իւր խոտակցութեանց ու քարոզների. նամակներն միշտ գրում էր հեռաւոր եղբայրներին ընտելական ու յանկուցիչ խօսքերով, կոչումն անելով միշտ ըստ Պողոսի — «Բրեթրոս Հիսուսումն սիրելի եղբայրմեր» և «Եւ այսպիսի ոճն. այսպիսի հայրախնամ յարաբերութիւնն ընտանեաբար գրաւիչ ազդեցութիւն էր ունենում պարզամիտ մարդկանց վերայ, որոնք բան մեծի մասին չգրաւոր, կարդալ, պանդուխտ անձինք էին լինում և որոնցից ոմանք երբեմն երբեմն ըստ կարեաց նիւթական օգնութիւն ևս առանում էին։

Այս ամենի դէմ թեչ բարոյական զէնքով էր մրցում տեղական Հայ հոգևորականութիւնը...— Երբեմն առաջնորդը մի որ և է վերացական նիւթի մասին քարոզ էր տալիս։

Այսպէս ուրեմն 1860 թուականին բողոքականութեան գործն ոչ միայն չէր դադարել, այլ աւելի ևս յառաջացել էր և շարունակում էր յառաջանալ, թէև տակաւին մի որոշ ուղղութիւն չէր ստացել և մի յայտնի կազմակերպուած ընկերութիւն չը կար։

Նոր եկած առաջնորդ Դէորգ սրբազանն էլ իւր նախորդի նման սկսաւ Լեմիսածին դիմել հաղորդակէր յայտարարութիւններով։ Երևի նա կամենում էր համակերպել Մատթէոս Կաթուղիկոսի քա-

գրականների դէմ ունեցած յայտնի հակակրութիւնն ու զայրութիւն, որ նա ցոյց էր տուել գեռ ևս Կ. Պոլսում եղած ժամանակ յառաջ քան կաթուղիկոսութիւնն։ Իւր յայտարարութիւններից մէկի մէջ, 1861 թ. փետ. 20, յանուն Վ. Հնդոստանի կաթուղիկոսի, նա ասում է, որ թէպէտ ինքն ամենայն ջանք գործ է դրել մոլորեալներին դարձնել մայրենի եկեղեցւոյ ծոցը, բայց չէ յաջողել, և երբ ինքը մտադիր էր խնդրել կաթուղիկոսին, որ իրրև վերջին ճար հրաման տայ արգելել քահանայից կատարելու լուտերականների հարկադրած օրինակատարութիւնն՝ մի քանի ամիս առաջ իւր գրութեամբ Դէրբէնդից աքսորած Դանիէլ անուն մի անձն լուտերական ազանդից մատ օրերում վերադարձաւ իւր մատ և ջերմեռանդ զղջմամբ մտաւ նորէն Հայոց եկեղեցին և յապացոյց իւր դարձի՝ յանձնեց իրան Սարգսի և նորա աշակերտ Աւագ Վարդանեանցի երկու գրութիւնները, «յորս գրին այն ամենայն բանք, որք գրաւոր և անգիր բանիւք ուրացան զայնս յաստենի հոգևոր և մարմնաւոր իշխանութեանց և այսր իսկ ապացոյց դժուարացան ցայսոր այնոքիկ իշխանութիւնք հաստատել 'ի վերայ նոցա պրոտեստականութիւնս։ Որոնցից յետոյ բացատրելով, թէ գործին վերաբերեալ կան ուրիշ կարևոր գիտելիք ևս, որոնք չէ կարելի մի ըստ միոջէ գրել, կատարելով ապագայ վտանգից, ուշ էլ այն վերոյիշեալ գրութիւնները կարելի է ուղարկել, ըստ որում թէպետ ամենայն ջանահրնար են յափշտակելու նոցա՝ կարևոր է համա-

բում շտապով իրան Էջմիածին գնալն և անձամբ անձին ամենայն բան խոսելն, վասն զի լուսերա-կանք արդէն նամակներ են պատրաստում իրանց պաշտպաններին 'ի Տփխիս և այլ տեղեր, որ նոցա միջնորդութեամբ այս անգամ ևս արդարանան և պաշտպանուին։

Այս յայտարարութեան մէջ երեք հետաքրքրելի կէտեր կան. մէկն այն է, որ Գէորգ սրբազանն ուզում է Մատթէոս Կաթուղիկոսին հրամայել տալ հետեւանների եկեղեցական օրինակաւորութիւններն արգելելու. երկրորդը՝ Սարգսի և Վարդանեանցի դրութեանց բովանդակութիւնն և երրորդը՝ ուրիշ կարևոր գիտելիքներ, որ բերանացի միայն կարող էին հաղորդուիլ։ Տարաբաղդաբար այս երեք առարկաների մասին ևս չեմ կարող գոհացուցիչ տեղեկութիւններ տալ։ Չը գիտեմ, Գէորգ սրբազանն ազգից Վեհափառին եկեղեցական արգելանք դնելու միտքն, թէ այդ անօրինութիւնն ինքնաբերաբար արաւ նա, որպիսի կարգադրութիւն արած էր երբեմն և Թիւրքիայում. չը կարողացայ իմանալ նոյնպէս, թէ այն ինչ նշանաւոր գիտելիքներ էին, որոնց մասին խորհրդաւոր ոճով յիշում է սրբազանն և, որ առաւել ափսոսելին է. ոչինչ կերպով հնար չ'եղաւ ինձ ձեռք բերել յիշատակեալ երկու դրութեանց օրինակներն, թէև այդ մասին շատ աշխատեցայ։

Վերջապէս եկաւ թեմի կառավարիչ Գէորգ եպիսկոպոս Մկրտչեանի ցանկացած հրամանը։ 1861 թ. ապրիլի 25-ին Վեհափառ Կաթուղիկոսն

Մատթէոս Ա. կոնդակ արձակեց յանուն սրբազանի՝ առ այն, թէ—Ցաւօք սրտի լսած է ինքն, որ Շամախւոյ բնակիչներից ոմանք մոռանալով Հայաստանեայց եկեղեցւոյ առաքելական և հայրապետական սահմանադրութիւնները, ծէսերն ու կանոնները, անգէտ լինելով, որ մեր աշխարհից հեթանոսութեան և անաստուածութեան խաւարը փարատեցաւ Գրիգորի արդասաւոր քրտամբք և բազմաչարչար նահատակութեամբ և ոչ լուսերի քարոզութեամբ. մոռանալով և չը գիտենալով այս ամենը, նոքա՝ «հետանալք 'ի ծածուկ, իբր 'ի գիշերի խաւարաւ անգիտութեան և անհարազատ կամապաշտութեան պաշարեալ զհոգի, առ խարխափ դանդաղեն 'ի մոլորամիտ և 'ի գայթակղեցուցիչ վարդապետութիւնս՝ 'ի հոգի ամբարշտութեան և կամակորութեան պաշարեալ լուսերի և ամենայն նոր-աղանդից մոլորեցուցչաց... Նոքա այժմ արտաքին երևութիւ միայն դանկան և հնարին խոստովանել տալ զինքեանս զոլ որդիք հարազատ Հայաստանեայցս սուրբ և առաքելական եկեղեցւոյ մերոյ. ուստի և 'ի ցոյց մարդկան իբրև հարազատ ժառանգք Լուսաւորչի յաճախեն, լսեմք, յեկեղեցի մեր, ոչինչ խորութիւնս և որոշութիւնս առնելով 'ի սրբազան ծէսս և յարարողութիւնսնորա, որով, ասած է յետոյ, չեն կարող յոյս ունենալ մեղաց թողութեան և հոգւոց փրկութեան, մանաւանդ թէ պիտի դատապարտին, վասն զի ծածուկ հետևում են մոլար վարդապետութեան և ուզում են խաբել սրտագէտ Աստուծոյն

Եւ այս է եղբայրացական վճիռն կոնդակի.—

Պատուիրեմք Ձեզ հարկադրել զամենայն քահանայս Ձերում քաղաքի, զի զառաջեալս աչաց ունելով զդուշարար հրամանս որոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ըստ այնմ՝ «Զգոյշ լերուք 'ի սուտ մարգարէից, որք գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց և 'ի ներքոյ են գայլք յափշտակողք (Մատ. Դ. 7) և զԱռաքելականն՝ «Ամենայն, որ յանցանէ և ոչ կայ 'ի վարդապետութեանն Քրիստոսի՝ զԱստուած ոչ ճանաչէ, որ կայ ի վարդապետութեանն՝ նոյն զՈրդի և զՀայր ընդունիս. եթէ ոչ գայցէ և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի՝ մի ընդունիցիք զնա 'ի տուն, և մի ողջոյն տայցէք նմա։ Եւ որ առասցէ նմա Ողջոյն՝ կցորդ լիցի չարեաց գործոց նորա» (Յովհ. Բ. Կաթ. Դ. Ա. 9, 10, 11.)— զդուշացին ամենեքին՝ չը թողուլ զնոսա միւս անգամ մտանել յեկեղեցի, կամ արժանաւորել զնոսա և զամենայն զորդիս նոցա և զընտանիս եկեղեցական սրբազնագործ խորհրդոց. զի մի և նոքա ըստ կեղծաւորութեանց այնց մոլորելոց զառաքարտեցին յԱստուծոյ առանց խորութիւնս առնելոյ ընդ մէջ ճշմարտապէս հաւատացելոց և կեղծաւորելոց. մինչև ինքեանք իսկ հաստատուն և կատարեալ զդիմամբ սրբացեալ ընդ այնորիկ մոլորութիւնս իրեանց՝ կացցեն 'ի ճշմարիտ հաւատ քրիստոնէութեան համաձայն ծիսից և արարողութեանց մերս առաքելական ամենաբարեպաշտ և ուղղափառ սուրբ եկեղեցւոյս

Երբ այս կոնդակի ստացման լուրն յայտնի եղաւ քաղաքում՝ բողոքականութեան հակուած խումբը գլխաւորների գաղտնի խրախուսանաց աւելի ուրախացաւ, մտածելով թէ վերջապէս այժմ ազատ կը լինի՝ ըստ իւր ցանկութեան առանձին միաբանութիւն կազմել բացարձակ պաշտամունքներով։ Ապրիլ ամսի վերջից մինչև յունիսի սկիզբը սրբազան առաջնորդն մի քանի մասնաւոր փորձեր արաւ հաշտեցնելու գայթակղեալ խմբին, և երբ այլ ևս ոչինչ յոյս չ՚ունէր՝ նոյն յունիսի 10-ին 1861 թ. Շամախուոյ մայր եկեղեցւոյ բեմից կարդալ տուաւ վերոյիշեալ կոնդակն։ Առաջուց յայտնի էր, որ կոնդակը կարդացուելու է. կարելի է ասել որ բողոքական խումբն ամբողջապէս այնտեղ էր։ Երբէք չեմ մոռանում այն տպաւորութիւնն, որ զգացի նոյն օրը, տեսնելով եկեղեցու մէջ և դուրսն ինձ համար անսովոր շարժումներ, իրարանցումն, խլրտիւն։ Այս բոլոր անցքերի էութիւնն ըմբռնելու հասունութիւնը չ՚ունէի տակաւին, բայց կատարուած իրողութիւնները զննում էի մանկական հետաքրքրութեամբ։

Կոնդակի ընթերցումից անմիջապէս յետոյ՝ այն մարդիկ, որոնք յայտնապէս ճանաչուած էին իբրև հետեւալ խմբի անդամներ, դուրս եկան եկեղեցուց ձեռքերն առած իրանց երկայն փափախները՝ հրճուանքով աւելի, քան տխրութեամբ։

Որանից յետոյ եկեղեցուց բաժանուողները գալիս ստորագրում էին, որ իրանք ոչնչն ընդունում Հայաստանեայց Լուսաւորչական եկեղեցին,

որոմնեան հետևում են Աստուածաբանական—Լուսաբանական եկեղեցու դասանութիւնքը։ Քահանաների ցուցակից երևում է, որ այդպիսի ատորագրութիւն կոնդակի ընթերցումից յետոյ տուել էին 38 հոգի գերդաստանի տէր տղամարդիկ, 22 հոգի ամուրի երիտասարդներ։ Սոցա մէջ 12 հոգի էին միայն Քառանեանց տանից, 3 հոգի—Պարգիս Համբարձումեանն իւր 2 եղբայրներով։ 2 հոգի Ծկըռա—Ռոստոմն և իւր որդին, 5 հոգի Ղուլաբեանց կոչուած տանից, և այլք։ Զզջացող և դարձող եղան երկու հոգի միայն։

Այս եղելութիւնն ասելի և ասելի դրդեց երկու կողմի մոլեռանդութիւնը։ Անմայել արարմունք պակաս չ'եղան մինչև իսկ քահանաների մասնց կողմից։ Քանի գնում՝ խրատատու ասելի մեծանում էր։ Հետևաբերեն ոչ միայն պատրաստականութիւն չէին յայտնում եկեղեցու գիրկը դառնալու, այլ և՛ առաւել յամառում էին իրանց ընթացքի մէջ։ Մինչև անգամ քահանայարդի Էմմանուէլ Փիրբուդաղեանցն, երբեմն ուսուցիչ Հայոց Հոգևոր դպրոցի, տեղական դանձարանում պաշտօնի մտնելիս ոչ մի կերպով չը համաձայնեցաւ Հայոց քահանայի մօտ երդուել, ըստ որում դորա համար նա պէտք է ստորագրութիւն տար, թէ դառնում է Հայոց եկեղեցին։ իսկ նա ընդհակառակն այս նիւթի վերաբերմամբ կազմուած պաշտօնական գրութեան տակ այդպիսի ստորագրութիւն դրեց։ Որոմնեան ևս ընդունել եմ Աստուածաբանական Լուսաբանութիւն և մնում եմ հա-

մոգմանա մէջ, չեմ կարող սասրագրութիւն տալ Հայ-Գրիգորեան եկեղեցուն, թէ գնալու եմ այնտեղս։ Եւ որովհետև դեռ ևս օրինաւորապէս չէր ճանաչուած Շամախում բողոքական հասարակութեան գոյութիւնը և չէր տրուած նոցա հոգևոր հովիւ՝ յիշեալ պարոնն երդումն տուաւ ռուս քահանայի մօտ և ընդունուեցաւ պաշտօնի։

Մինչ այս մինչ այն քաղաքացիք էլ 360
հոգու սասրագրութեամբ մի խնդիր տուին Բագուի նահանգապետ իշխան Թարխան—Մուրաւովին, որի մէջ բացատրելով յառաջացած դայթակղութեան հանգամանքները՝ խնդրեցին հեռացնել իրանց քաղաքից ամենայն չարեաց պատճառ Սարգիս Համբարձումեանին և նորա գործակիցներից գլխաւորներին, որք են՝ Եսայի Անտոնեան (համեստագործ) և Թոսատոմ Գեորգ-Գաբրիէլեանց (կօշկակար)։ Սակայն այս խնդիրը դեռ երկար ժամանակ մնաց անհետևանք, որից բողոքականք հասկացան թէ մարմնաւոր իշխանութեան կողմից վտանգ չէ ըսպառնում իրանց գործին։ Միւս կողմից՝ կաթուղիկոսի բանադրանքից օգուտ քաղելով, Տփխիս և այլն տեղեր գտնուող լուտերական գերմանացիք, որոնցից ոմանք մինչև անգամ բարձր պաշտօնների և դրից տէր էին, հնարաւոր եղած միջոցներով՝ ներքնապէս և բարոյապէս՝ քաջալերում էին Շամախեցի լուտերականներին արարքը. նոցա նեմանեցնում էին առաջին դարերի հալածուող և նահատակուող քրիստոնեաներին, գովում էին նոցա դիմացկանութիւնն և խոստանում էին յաղթու-

թիւն այստեղ և յաւիտենական երանութիւն քաղցրագոյն Յիսուսի արքայութեան մէջ։

Այս ամենից խրախուսուած բողոքական միաբանութիւնը փոքր առ փոքր աշխատում էր մի կանոնաւոր կազմակերպութիւն տալ իրան գործերին։ Համբարձումեանցի դիկավարութեամբ, որ անտարակոյս չէր թողնում հարկաւոր տեղերից առանց հրահանգների ու խորհրդների, որոշ ժամանակներում հնստեալք հաւաքւում էին մերթ իրան Համբարձումեանցի մերթ Մկ. Թառահեանցի տանը քարոզ լսելու։ Այս քարոզներն նոյն ժամանակները բացի աւետարանական ընթերցմանց բացատրութիւններից՝ պարունակում էին նաև սաստիկ յարձակումներ Հայոց եկեղեցականութեան դէմ։ Այժմ ակնածութեան վերջին քօղը պատառուած էր արդէն և ամենայն պատրուակ վերացած։ Ձէր դաղարեցնում Սարգիս վարժապետն և իւր թղթերը մօտաւոր քաղաքները հեռացած, կամ այն տեղերում միաբանակից եղած «եղբայրների» վերայ։ Այդպիսիներից կային նոյն ժամանակը Բաղու քաղաքում՝ 4 Բաղուցի, 2 Շամախեցի և 1 Գօրեցի։ Ղուբայում՝ 5 Շամախեցի։ Զիշեալ թղթերը, ինչպէս մի անգամ էլ ասացի, վարժապետը գրում էր ճիշդ առաքելական թղթոց ձևով ու ոճով և ամենահասարակ աշխարհաբառ լեզուով։

Բողոքական միաբանութիւնն այսպէս մի կողմից, ինչպէս կ՚ասեն՝ անէջտուն, իրան գործերը կարգի էր դնում, միւս կողմից խնդրագրերով

դիմում էր զանազան անձանց և հասարակութեանց, որպէս զի իրաւունք տանայ օրինական ճանապարհով առանձին աւետարանական եկեղեցի կազմելու. ինչպէս օրինակ Կովկասու Գլխաւոր Կառավարութեան մեծաւոր Բարոն Նիկոլային, Մոսկվայի Լուտերականաց Կոնսիստորիային և այլոց։ Սակայն ինչպէս կարելի էր նկատել այս գրուածքիս ընթացքում, Ռուսաց կառավարութիւնը հաճութեամբ չէր նայում այս տեսակ իրողութեանց վերայ, չը կամենալով որ պետութեան մէջ կազմուին մանր մունր կրօնական հասարակութիւններ, մանաւանդ այնպիսիք, որոնք չարունակ յարաբերութեանց մէջ են արտասահմանի միաստակար ճանաչուած հասարակութեանց հետ. իսկ այսպիսիների կարգից ճանաչուած էր և Բազէլի Միսիոնարական ընկերութիւնը, որի ջանքերի արդիւնքն էր և մեր երկրում ծագած բողոքականութիւնը և որի հետ անընդհատ հաղորդակցութիւն ունէին այդ գործին առաջնորդող մարդիկը։ Միւս կողմից կառավարութեան խոհեմ ներկայացուցիչներին ամենևին ցանկալի չէր այսօրինակ պառակտմանց հոսանուր դառնալով՝ թուլացնել հպատակ Հայոց փորձուած հաւատարմութեան զգացումները։ Ուրեմն բողոքականութեան դիմող հայերն իրանց գործին յաջողութիւն կը յուսային գլխաւորապէս այս և այն ազդեցիկ անձի կամ պաշտօնէի մասնաւոր համակրութիւնից և կողմնակից գործակցութիւնից։ Եւ յիրաւի նոքա երբեմն պարծենում էին սորա, նորա անունով։

## ԺԳ.

*Բողոքական միաբանութեան օր աւուր աճումն,— Ապարդիւն ջանքեր.— Բողոքական ենթեցեալոց թագման առթիւ ծագած դէպքեր— Բողոքականների յոյսերն ու նոր գործունէութիւնը։*

—

Այն ինչ բողոքական ընկերութիւնը յայտնի և ծածուկ միջոցներով աշխատում էր առանձին եկեղեցի կազմել՝ Շամախուց հայազգի ժողովուրդն էլ միւս կողմից, գլուխ ունենալով իրանց թեմի կառավարիչ Գէորգ Եպիսկոպոսին՝ ջանք էր անում այդ եկեղեցւոյ հաստատման առաջն առնել մերթ հոգևոր մերթ քաղաքային իշխանութեան ձեռքով։ Այլ սակայն մի որոշ վաթա իշխանութեան կողմից դեռ ևս չէր լինում երկար ժամանակ։ Ամենայն ինչ տարտամ դրութեան մէջ էր։ Աղդայրների միաբանութիւնը դնալով դնալով աւելի էր յամառում. Գէորգ Արքեպիսկոպոսը շարունակ յայտարարում էր իւր իշխանութեանը, թէ ինքը շատ ճիգն է թափում հնազանդներին ուղղութեան բերելու, բայց իզուր։ և պահանջում էր քաղաքային վարչութեան ձեռնտութիւնը. իսկ Վեհափառ Կաթուղիկոսի բանադրանքից մի քանի ամիս յետոյ յայտնում էր պատրաստականութիւն օրհնառաք կոնդակով միսիթարել մոլորուածներին իրրև եկեղեցւոյ հարազատ զաւակների, եթէ որ ընդունի նոցանից մեղայական գիր ճշմարիտ զղջմամբ։

Մինչ այս մինչ այն պատահեցան մի քանի դէպքեր, որոնցից կարելի է հասկանալ, թէ ինչ աստիճանի ամուր էր նոր միաբանութեան ներքին

կապը։ Օրինակ՝ 1861 թ. սեպ. ամսին մահմեդականաց Աղասի Կարախանեանի երեխան, քահանայք չէին թաղում հանգուցեալ մանկանն, որովհետև հայրը բողոքական էր. մանկան մայրը շատ աղաչեց, բայց անօգուտ, որովհետև մինչև Կարախանեանը մեղայագիր չը տար՝ չէր կարող կատարուիլ նորա տանն որևէ եկեղեցական գէպք, ուստի մարմնակը մնաց անթաղ։ Այն ժամանակ առաջնորդ Գէորգ Արբաղանը գտնուում էր քաղաքին մօտակայ Սաղիանու մատրուան։ Բժիշկ Դաւիթ Ռոստոմեանցը իրրև միջնորդ դիմեց նորան նամակով, խնդրելով թոյլատուութիւն տալ երեխային թաղելու, պատճառելով, որ երեխան չէր կարող մանուկից լինել հօր յանցանքին։ Արբաղանն մի պատիւ ևս 'ի սէր Ռոստոմեանցի թոյլ տուաւ, որ հանգուցեալը թաղուի, բայց այն պայմանով, որ նորա հայր Աղասին ատորագրութիւն տալ չը շարունակել իւր մոլորութիւնը, չը յանձնել բողոքականների ժողովարանը և դառնալ Հայոց եկեղեցին, յանելով վերջը, թէ «Որ ատէրդ թէ չէ պատասխանատու երեխայն ման յանցանաց հօրն, օրինակը բաղուէն դատնին 'ի տուրբ դիրս, որք բաղուէն ման յանցանաց հօր իրենց ինքնանք մատնեցան 'ի կորուստս»։ Սակայն Կարախանեանցը չը համաձայնեցաւ յիշեալ խոստմնագիրը տալ, և... երեխայն թաղուեցաւ «եղբարց» միաբանութեան անօրինութեամբ և Արդիս վարժապետի աղօթարարութեամբ։

Այս միջոցին պատահեցան այնպիսի անցքեր,

որոնք փոքր ինչ նման էին սոյնօրինակ մի ուրիշ անցքի, որ աւելի մեծ չափով և սաստկութեամբ ճիշդ մի տարի առաջ տեղի ունեցաւ Կ. Պոլսում, երբ այնտեղ էլ մի բողոքական հայի կամեցան թաղել Հայոց գերեզմանատանը, բայց հայերը թոյլ չը տուին, որից անագին խռովութիւն ծագեցաւ, և որ երկար ժամանակ նիւթ դարձաւ հայ և օտար օրագիրների քննադատութեանց, ինչպէս և ռուսահայոց օրագիրների մէջ։ (Տես «Հիւսիսափայլ» 1860 թ. № 10 «Մենդելսոն, Լուտեր և Լեսինգ» վերնագրով յօդուածի տակ երկայն ծանօթութիւնը Ս. Նազարեանցի, և «Կռունկ» նոյն թուի № 10» Գ. Մուրատեանցի (այժմ Մելքիսեդեկ եպիսկոպոս) յիշեալ ծանօթութեան վերայ արած ընդարձակ իմաստալից նկատողութիւնը)։ Այսպէս Շամախու հայերն էլ չը կամեցան, որ բողոքական հանգուցեալը թաղուի իրանց գերեզմանատան մէջը։ բարձրացաւ խռովութիւն, իրարանցում. և մանուկը թաղուեցաւ գերեզմանատանից հեռու։ Ռոստոմեանց քժիշկը «Հիւսիսափայլի» մէջ (1861 թ. № 12) այդ անցքի մանրամասն պատմութիւնը գրեց իսկ և իսկ այն ոճով, որով մի տարի առաջ Նազարեանցը գրել էր Կ. Պոլսի անցքի առթիւ։ «Երկրորդ անգամ, ասում է 'ի միջի այլոց։ փորեցինք հանգիստը, Տիրոջ անուամբ դրեցինք գերեզման, հողը ընդունեց, գոհութիւն Աստուծոյ։ յուսանք և ինքը ընդունի նորա հոգին իւրեան խոստման պէս երկնքի արքայութեան մէջ։ զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ։

Սրանից մի քանի օր յետոյ վախճանեցաւ բողոքականներից մի ուրիշ մանուկ եւ. բայց այս անգամ նոյն անցքերը չը կրկնուեցան, որովհետեւ անձայն, առանց խռովութեան, հանգուցեալը տարուեցաւ թաղուեցաւ առաջին նման և առաջին մօտ երկու ամիս յետոյ վախճանուեցաւ բողոքական Թառահեանց ընտանիքի մէջ ծերունի Աբրքեն 85 տարեկան հասակում Սա Մերժեց ամենայն խորհուրդ եկեղեցական կարգերին հնազանդելու, բաւականացաւ մնանելուց երեք օր առաջ Համբարձումեանցի ձեռքից ընդունած հացով և գինով և թաղուեցաւ յիշեալ երեխաների նման։ Եւ այսպէս շարունակ, մեռեալները թաղում էին. ծնեալները մնում էին առանց մկրտութեան, երդանուածները մնում էին առանց պսակուելու և հասունացած աղջիկները մնում էին առանց նշանուելու։

Վերոյիշեալ եղելութիւններն ոչ միայն չէին յուսահատեցնում «եղբարց» միաբանութեան գլխավորներին, Սարգսին, Թառահեանցին, Անտոնեանցին, Մկրտիչ-Թոսատոմին և այլոց, այլ աւելի զրգռում էին նոցա գործունէութիւնը՝ միաբանութիւնը հաստատուն պահելու և առանձին եկեղեցի կազմելու գործը յառաջ տանելու։ Երբա՛ ջանք էին գործ դնում իրենց նիւթական կարողութիւնները մեծացնելու թէ ունեւոր միաբանակիցների և թէ դրսից համակրող մարդկանց ու աւետարանական հաստատութեանց ձեռնտուութեամբ, որպէս զի հնչուութեամբ կարողանան թուլահաւատների

ոգին զօրացնել, և այնչափ վստահ էին իրանց ձեռնարկութեանց յաջող ելքի վերայ, որ հիմիկուանից ապագայի պատրաստութիւններ էին անում։ Ղրա արտաքինման, այսինքն Բազէլ, ուղարկեցին դեռ սկզբում երեք երիտասարդներ՝ Իսրայէլ Դօլուխանեանց, Մովսէս Ազնաւուրեանց և Յովակիմ ոմն (ազգանունը չը գիտեմ)։ Այս պատրոնները պատուոր և ուսուցիչ պիտի լինէին։ Կենսական ծախքերը գրեթէ ամբողջապէս հոգացում էին Բազէլեան ընկերութեան կողմից։ Շամախու մէջ Յարգիս վարժապետն արիութեամբ շարունակում էր իւր ուսուցչական ու քարոզչական գործունէութիւնը։ Քարոզի համար ժողովում էին ըստ մեծի մասին Յարգսի տանը, երբեմն և Բաղանեանցի մօտ։ Կիւրակի օրերը սովորաբար քաղաքից դուրս լեռնակների հովիտներում խմբում խօսում, խորհրդակցում, քարոզում ու երգում էին։ Այդ ժամանակ դեռ ևս երգերի ժողովածու չ'ունէին. երգում էին մանր մունր բաներ կամ Յարգսի և կամ այլոց կարկատած. սոցանից նշանաւոր և գործածական երգն էր Գասպար բէկ Ղարաբեանցի յօրինած մի երգն, որի մէջ Քրիստոսի մատնութիւն ու չարչարանքն էր պատմում պարզ նկարագրով։ Դա երգում էր «Աղաւնակ լուսոյ» յայտնի երգի եղանակով, և այսպէս էր սկսում.

«Օրհնեալ լինիս դու,
Սիրելի Փրկիչ,
Քու անունդ փառք.
Որ մեզաց համար,

Երկնաւոր Հօրդ,
Եղար Պատարագ,
. . . . . .
Ո՛ւխ, նկաւ Ցուզան,
Կորսաի որդին,
Քեզ՝ Տէրիդ մատնեցաւ։
Եւ այլն։

Միւս կողմից միաբանութեան առաջնորդներն անդադար դիմում էին խնդրագրով և աղերսանքով թէ քաղաքական իշխանութեան և թէ առանձին ազդեցիկ անձանց միջնորդութեան, որ իրաւունք տրուի իրանց կազմել առանձին լուսերական-աւետարանական հասարակութիւն և որ ազատ լինին վայելելու օրէնքի հովանաւորութիւնը։

---

ԺԴ.

Բողոքականների գլխաւորներին աքսորելու ճըգումնք.— Երեք գլխաւորները Թիֆլիսում.— Մատթէոս Կաթուղիկոսի հարցուփորձն այդ անձանց.— Զուր աշխատանք։— Նոցն անձանց գաղտնի վերադարձն 'ի Շամախի։

—

Մինչդեռ Սարգիսն և իւրայինք ամենայն ջանք գործ էին դնում իրանց խումբն աւելի սըտուարացնելու և միաբանութիւնն հաստատելու, հակառակ կողմից էլ Շամախու Հայոց հասարակութեան ներկայացուցիչները չէին դանդաղում

նոցա դէմ բողոքելու բանիւ և գրով թէ հոգևոր թէ քաղաքական իշխանութեան առաջ։ Նոքա աշխատումէին քաղաքից հեռացնել տալ յամառեալ խմբի երեք գլխաւոր առաջնորդներին, որք են Սարգիս Համբարձումեանց, Թոսատոմ Քեսիմա Գաբրիէլեանց և Եսայի Անտոնեանց։ Բազուի նահանգապետ իշխան Թարխան-Մուրաւով նոյնպէս այն կարծիքին էր, որ յիշեալ երեք անձանց, իբրև Հայ ժողովրդին մոլորեցնողների գլխաւորներին, հարկաւոր է հեռացնել քաղաքից, իսկ միւսներին յայտնել, թէ նոքա պարտաւոր են հնազանդել Հայ եկեղեցոյ կանոններին ինչպէս ուրիշ Հայերը և երբ բաւական ժամանակ անցնելուց յետոյ երևի, որ մնացեալները զիտակցաբար և համոզմամբ են չեղուել իրանց հայրենի դաւանութիւնից, և ոչ թէ խաբուած, գրաւած են, ինչպէս ինքն է հաստատած, այն ժամանակ միայն անել նոցա համար առանձին մնօրինութիւն։ Իբր այս կարծիքն իշխան Թարխանը գրաւորապէս մատոյց և Կովկասու Փոխարքայի պաշտօնակատարին, որ էր կարծեմ իշխան Օրբելեանին։

Սակայն Մատթէոս Կաթողիկոսն ուրիշ կարծիքի էր։ Նա մի կողմից պատուիրում էր թեմական ժողովրդին զգուշացնելու, որ նա աւանդական և ազգային հրամաններին համաձայն հաղորդակցութիւն չունենայ մոլորեալների հետ։ իսկ միւս կողմից աշխատում էր վերադարձնել երեք անձանց տանել տալ իւր մօտ, որի համար նա խնդրել էր մինչև անգամ Գլխաւոր Կառավա-

թութեան մեծաւոր Բարոն Նիկոլային։ Յուսամ Աստուած, զրումէ Վեհափառը Կէորդ եպիսկոպոսին, զի եթէ եկեսցեն այսր դայթակղեալքն այնոքիկ՝ ծանիցեն զճշմարտութիւն և միրաղարձցին 'ի սուրբ կրօնս, յորս ծնեալ են, զորս հայրական սիրով գրկաբաց ընկալեալ, յայնժամ իբրև զորդիս հոգեհարազատս՝ ունիմ ընդ նոսա հոգեւոր հաղորդակցութիւն ըստ աւետարանական առաքելական և հայրապետական հրամանաց. ապա թէ ոչ՝ մեղքարիւք և եթէ այնու, որ գրեալն 'ի Յայտնութեան սրբազան աւետարանչին Յովհաննու. «Որ ամբարշտեցցն է՝ ամբարշտեսցի, և որ արդարանալոցն է՝ արդարասցի և որ սրբելոցն է՝ սրբեսցի։ Ահա գամ վաղվաղակի և վկայք իմ ընդ իս՝ տալուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց» (Կոնդակ 1861 թ. Հոկտ.)։

Վեհափառ Կաթուղիկոսի այս ցանկութիւնը կատարուեցաւ մի ամբողջ տարի յետոյ, 1862 թ. Սեպտեմբերին, երբ իշխանութեան պահանջմամբ գնացին Թիֆլիս, ուր այդ ժամանակ գտնուում էր նաև բողոքականների երեք ներկայացուցիչները՝ Սարգիս Համբարձումեանց, Ռոստոմ Քեսիշա Դաբրիէլեանց և Սէրգէյ Թառահնեանց, որոնց ընկերակցումէին այլ ևս երկու հոգի։ Մերուանի Եսայի Անտոնեանցն, որ երեքից մէկը պիտի լինէր։ Այդ ժամանակ հիւանդ էր։ Միևնոյ ժամանակ Թիֆլիս գնացին Շամախու Հայոց հասարակութեան կողմից երկու պատգամաւորներ՝ Յակոբ-բէկ Մարգարեանց և Յովհաննէս-բէկ Պօպով, Վեհափառի մօտ

հարկաւոր միջոցութիւններն անելու կարող եմ ասել, որ ինչքան առաջիններն իրանց ընկերութեանն երկայնը լինելու յարմարութիւններն ունէին, այնքան վերջիններս հասարակութեան ճշմարիտ բարեաց և պիտոյից արտայայտիչ լինելու առաւելութիւններներից զուրկ էին։ Ինչ և իցէ՝ այդ պարոնները Թիֆլիս ուղևորուեցան։

Թիֆլիս հասնելուն պէս Համբարձումեանն ու ընկերներն անյապաղ դիմեցին դերմանացւոց պատուոր Ռօօդի մօտ՝ պէտք եղածն խորհելու և հրահանգներ ստանալու համար։ ապա Սարգիսը գնաց գեներալ Գրուզէնշտերնի մօտ, որ Կովկասի Գլխաւոր Կառավարութեան մեծաւորն էր, և խնդրեց նորա պաշտպանութիւնն, ասելով թէ երկիւղ ունի քաղաքի Հայերից, որոնք պատրաստուած են իրան և իւրայնոց սպանելու։ Գրուզէնշտերն տուաւ նորան իւր խորհուրդներն և խոստացաւ իւր հովանաւորութիւնը։

Հետևեալ օրը նորա պէտք է ներկայանային Վեհափառ Կաթուղիկոսին։ Կառավարութեան կողմից նոցա առաջնորդող նշանակուած էր գրաքննիչ Յ. Ղայթմազեանց, որը Սարգիս վարժապետի պատմելով շատ բարի մարդ էր։ Սա ճանապարհին հարցրեց նոցա, թէ չը պիտի ընդունին արդեօք Կաթուղիկոսի առաջարկութիւնը Հայոց եկեղեցին վերադառնալու, առ որ ստացաւ բացասական պատասխան։ Այս տեղեկութիւնը լսած եմ Սարգիս վարժապետից, որ և յաւելում էր, թէ «Ուրիշ կերպ ես չէի կարող պատասխանել, որով-

հետն Շամախուց դուրս գալուս օրն, երբ եղբարք ինձ ճանապարհ էին ձգում՝ մեր ընկերութեան առաջնորդներից շատերն ասացին. Տեսա, վարպետ, եթէ որ և է առաջարկութիւն ընդունիս՝ մենակ ես մնալու հետ։

Վերջապէս հետեւալների պարագլուխ համարուածները ներկայացան Կաթուղիկոսին. Մի քանի Թիֆլիսցի անձանց և Շամախու պատգամաւորների ներկայութեամբ սկսուեցաւ հարցուփորձ, համոզմունք, խրատախօսութիւն. սակայն հետեւալները չէին թողնում իրանց յամառութիւնը։ Վեհափառը հարցրեց հաղորդութեան խորհրդի մասին. գոհացուցիչ պատասխան չ՚ստացաւ. հարցրեց Թառահանցին գոյափոխութեան մասին, բայց նա և ոչ իսկ գոյափոխութիւնը հասկանում էր թէ ինչ է։ Բանը վերջացաւ նորանով, որ Վեհափառ Կաթուղիկոսը մոլորեալներին չը համոզելուց զատ՝ աւելի ևս մեծացրեց իւր զայրոյթը նոցա դէմ և դուրս ճամբեց իւր ներկայութիւնից, մտածելով մի այլ անգամ ևս կանչել նոցա և վերջին փորձն անել ուղղութեան բերելու նոցա։ Սակայն ոչքա այդ տեղից որ դուրս եկան՝ գնացին թագ կացան պաստոր Ռոսդի տան և գիշերանց ծածուկ կառք նստան փախան քաղաքից և անփորձ անվտանգ վերադարձան Շամախի և այնուհետև պարծենում էին յաճախ, թէ գնացին, յաղթեցին, եկան։

## ԺԵ.

Դանիէլ եպիսկոպոս Շահնազարեանցը Շամախում և իւր գործունէութիւնը. — Բողոքականների եռանդոտ ջանքերը. — Մեծ Իշխան Միխայէլ Նիկոլայեվիչի այցելութիւնը Շամախուն. — Նորա որոշումը բողոքականաց մասին. — Մատթէոս կաթուղիկոսի մեղմութիւնը իրան եղած առաջարկութեանց. — Բողոքականների օգտին յաջող որոշումն.

—

Թիֆլիսից վերադառնալուց յետոյ Սարգիսն և իւր գործակիցները, երեխ նոր յոյս ու նոր քաջալերանք ստացած, սկսան աւելի ևս համարձակութեամբ գործել, կարծես թ հեռուկս իրանց հակառակորդ անձանց և իշխանութեանց։ Մի քանի ամիս անցած Հայոց Բարձր Հոգևոր Իշխանութիւնից ուղարկուեցաւ Շամախի թեմի կառավարիչ Դանիէլ վարդապետ Շահնազարեանցն, որ մի երիտասարդ մարդ էր, ճարտարախօս, ճարպիկ ու եռանդոտ։ Սորա առաւելութիւնն իւր նախորդներից այն էր, որ հալածանքներից աւելի աշխատում էր խօսքի զէնքը գործ դնել։ յաճախ ազգու քարոզներ էր խօսում. հարկաւոր համարած դէպքում գնում էր բողոքականաց մէկի կամ միւսի առնը, հրաւիրելով և նոցա իւր մօտ։ Մատթէոս կաթուղիկոսը սորան իրաւունք էր տուել բողոքականներից ոգանկացողներին թոյլ տալ համարձակապէս երթևեկել եկեղեցի աւետարանական ճըշմարտաքարոզ վարդապետութիւնը լսելու։ Կարելի է ասել, որ այս առաջնորդի նշանակութիւնը, թէև ուշ, բաւականին օգուտ բերեց գործին. նա իւր

քարոզներով ժողովրդին գրաւած պահեց եկեղեցու մէջ։ Նա ջանք արաւ թեմական ուսումնարանն ևս կարգի դնել։ Նորա օրով առաջին անգամ կազմուեցաւ կանոնադրութիւն այդ ուսումնարանի համար, ընտրուեցան հոգաբարձուներ, հրաւիրուեցան ըստ կարելոյն համապատասխան ուսուցիչներ, սկսուեցաւ կանոնաւոր գործադրութիւն ու հաշուապահութիւն, և այլն։ Դարձեալ նա շինեց մայր եկեղեցւոյ բակում մի շինութիւն, որ յետոյ առաջնորդարան դարձաւ, թէև նա սկիզբը շինուում էր ուսումնարանի անուամբ. իսկ նախկին առաջնորդարանը փոխարկուեցաւ ուսումնարանի։ Այդ ուսումնարանի շինութեան համար նա նպաստ ժողովեց Թիֆլիս քաղաքից և այլ մի քանի տեղերից, բայց այս՝ հակառակ Շամախեցւոց ցանկութեան, որոնք ամօթ էին համարում, որ իրանց անունը կոտրուի ուրիշ քաղաքներում — «Աղքատ՝ հպարտ»։ Նա սկսաւ շարունակ յարձակուել Շամախեցւոց մէջ ընդհանրացած մի քանի չարչարութեանց և ուելորդ ծախքեր պահանջող սովորութեանց վերայ, որպիսիք բառնալու համար նոյն ժամանակ Շամախեցիք մի համաձայնութիւն կայացրին պարտաւորական ստորագրութեամբ, որ բոլոր այն սովորութիւնները վերջացնեն և չարչարանց ճանապարհները փակեն։ (Տես և «Մեղու Հայաստանի» 1865 թ. № 11, «Կանոնադրութիւն Շամախւոյ քաղաքի Հայ ազգի բնակչաց ներմուծեալ ուելնորդութիւնը վերջացնելու համար» յօդուածը)։ Մի խօսքով՝ Շամախեցիք մինչև այդ ժամանակը

Շահնազարեանցի նման ժիր ու գործունեայ առաջնորդ չէին տեսած։ Այս է պատճառն, որ կարճ ժամանակում նա բարձրացաւ եպիսկոպոսութեան և ապա արքեպիսկոպոսութեան աստիճանին։ Բայց նա իրրև մարդ ունէր և իւր անձնական թերութիւնները, և այս թերութիւնները նորա համար թշնամիք պատրաստեցին, մանաւանդ իւր առաջնորդութեան վերջին տարիներում։ Նորա հակառակորդ էին և ուսումնարանի հոգաբարձուներից ոմանք վերոյիշեալ չինութեան հաշիւների առթիւ։ Մինչև անգամ հոգաբարձու Պետրոս թէգ-Մատաթեանցը՝ Սեյեադ մականուանեալ, նա որ ազգասիրութեան անունով շատ ոտանաւորներ ունի գրած, երբ 1867 թ. սկզբին կրօնափոխ եղաւ մըտաւ օրթոդոքս եկեղեցին և մկրտուեցաւ Ալէքսանդրիայի քահանայի ձեռքով, իւր այսպիսի վարման պատճառ էր դնում Դանիէլ եպիսկոպոսի հետ ունեցած անբարեկամութիւնը։ ։ ։ (Թէև նոյն օրը գրած և ձեռքի տակով հրատարակած մի ոտանաւորի մէջ Սեյեադն ասում էր, որ այդ որոշման խորհուրդը նորան տուել է ատեսիլքի մէջ իրան երևեցած մի պատուելի ծերունի, որ կամ Հայկն էր կամ Գրիգորը, յորդորելով միևնոյն ժամանակ, որ բոլոր Հայերը հետևին նոյն օրինակին՝ իրանց փրկութեան համար)։

Այսպէս ուրեմն 1863 թ. սկզբից Շամախու թեմական առաջնորդն էր Շահնազարեանցն, որ համեմատաբար աւելի մեծ յաջողութեամբ էր գործում յօգուտ եկեղեցւոյ և որ կարողացաւ քաղաքականութեան հոսանքի առաջն առնել։

Սակայն և սա արդէն մի անգամ անջատուածների յամառութիւնը չը կարողացաւ կոտրել և հարկադրուած էր մաքառել նոցա դէմ, գործեալ իշխանաւոր անձանց գործակցութիւնն ու միջամտութիւնը խնդրելով յաճախ։ Այսպէս նա 1863 թ. յուլիսին մի խնդրագիր տուաւ գեներալ-լէյտենանտ Վասիլիևին, որ Կովկասու նորնկ փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչի առանձին յանձնարարութեամբ այդ ժամանակ անցնում էր Շամախուով և ուղարկուած էր Բագուի նահանգի քաղաքական գործերը քննելու համար։ Այս խնդրագրի մէջ Դանիէլ վարդապետը տրամաբանօրէն և խելացի ոճով մատնացոյց է անում Հայոց առ Կայսերական Գահն ունեցած անսասանելի հաւատարմութեան և Գահից վայելած հովանաւորութեան վերայ։ Համառօտապէս պատմում է Բազէլեան միսիոնարների Կովկասում հաստատուելու և ապա հալածուելու հանգամանքները։ Ցոյց է տալիս նոցա ցանած սերմերի ներկայումս աճելն և նոցա պատրաստած մարդկանց գործողութիւններն, և այլն և այլն։ Վերջ բանին՝ խնդրում է, որ մինչև Բարձրագոյն Իշխանութեան կողմից առանձին վերջնական տնօրէնութիւն լինելը 1) արգելուի Համբարձումեանցին ուսումնարան պահել Հայ մանկանց համար. 2) Արգելուին բողոքական կոչուող միաբանութեան ժողովները. և 3) Հրամանագրուի գիւղօրէից տանուտէրներին չը թոյլատրել մոլորեցուցիչ անձանց իրանց գիւղերում քարոզել ու ժողովրդին կրօնափոխ անելու։ Գեներալը

պատշաճաւոր քաղաքավարութեամբ ընդունեց Դանիէլ վարդապետին, խոստացաւ որպէս ակա-նատես գործի եղելութիւնը յայտնել Փոխարքային և իւր կողմից միջնորդել։

Բայց և բողոքականք, ինչպէս արդէն ասա-ցի, չէին դադարում խնդրագրերով դիմել պատ-շաճաւոր անձանց և տեսանողներին, որպէս զի իրա-ւունք տան առանձին եկեղեցի կազմելու։ 1863 թ. Հոկ. ամսին Եամախի եկաւ Բագուի նոր նահանգապետ գեներալ Մ. Կօշիբակին։ Ի հարկէ և՛ առաջնորդն և՛ բողոքականաց ներկայացուցիչ-ները խնդրեցին նորանից իրանց դատի պաշտպա-նութիւնը։ Նահանգապետն աւելի հակամիտութիւն էր ցոյց տալիս առաջնորդին սիրաշահելու. բայց և Փոխարքայից նորան արուած յանձնարարութիւ-նը չէր ամենևին բարեյաջող բողոքական միաբա-նութեան համար։ Նա կանչեց իւր մօտ Սարգիս Համբարձումեանցին ու նորա ընկերակիցներին և յայտնելով, որ նորա վարմունքը հակառակ է տէր-րութեան օրէնքներին՝ առաջարկեց դառնալ իրանց մայրենի եկեղեցին, և խոստացաւ միջնոր-դել Վեհափառ կաթուղիկոսին ներել նորա և վե-րըստին ընդունել։ «Եթէ չէք կամենում այդ, ա-սաց, ձեր առաջ բաց է և Ռուսաց ուղղափառ եկեղեցին։ այնտեղ կարող էք մտնել։ բայց երբ տեսաւ, որ նորա կամակորութիւնն՝ հրամայեց որ իրանց ժողովները ու քարոզները դադարեցնեն մինչև գործի վերջնական կերպարանք առնելը։ իսկ Լութերական-Ավետարանական դաւանութեան

հեռանել ցանկացողներից իւրաքանչիւրը, ասաց։ Թող ջոկ խնդիր տայ իրան, և ինքը կը նշանակէ առանձին մանաժողով, որ խնդրառուներին քննէ թէ որչափ են հասկանում նոքա Հայոց եկեղեցու վարդապետութիւնն, որից խորշումն, և որչափ իրանց այժմեան կարծիքները համաձայն են Լութերական եկեղեցու ուսմանց։ Որոնից յետոյ նահանգապետը կարդացրեց, որ Համբարձումեանի ուսումնարանը փակուի։

Ուղիղ մի տարի յետոյ Շամախի եկաւ Փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչն իւր ամուսնոյ հետ։ Առաջնորդն (այժմ եպիսկոպոս) շքեղ ընդունելութիւն էր պատրաստել եկեղեցում նոցա համար. արդէն մութն էր, երբ նոքա ժամանեցին քաղաք և կարծեմ այդ պատճառով չ'իջան եկեղեցի, որի մատոյցն անցնում էին։ Արքազանը հոգևորական դասով շուրջառաւորուած ընդառաջ եկաւ Օդուստիան Հիւրերին, որոնք և պատշաճաւոր ողջունից յետոյ գնացին իրանց համար պատրաստուած օթեանը՝ Մահմուդ աղայի տունը։ Հետևեալ օրն այցելուների ընդունելութեանց ժամանակ՝ Փոխարքայն Դանիէլ եպիսկոպոսի հետ խօսք բաց արաւ յայտնի հարցի մասին և արտայայտեց իւր սիրայր Վեհափառ կաթուղիկոսի բանադրական կոնդակի մասին. առ որ եպիսկոպոսն ասաց, թէ այդ չէ եղել յանկանել յանուանել արտաքսումն եկեղեցուց, այլ անորաշապէս յիշուած մի ժամանակաւոր միջոց՝ մոլորուածներին զգջացնելու համար։ Այսու ամենայնիւ

Մեծ Իշխանն անյարմար էր համարում յիշեալ կոնդակի արձակումն, ասելով որ՝ թնդանօթից և աշխարհական ուժից առաւել համոզողական վարդապետութիւնն է պէտք. յետոյ նպատակայարմար էր համարում, որ կաթուղիկոսը մի օրհնալից և մեղմ կոնդակով նորէն թոյլ տայ հնատեաններին Հայ եկեղեցին դառնալու և հրամայէ կատարել նոցա եկեղեցական պէտքերը, որով նոքա հետզհետէ կը մեղմին և կը շահին, իսկ մեռցեալ սակաւաթիւ յամառուածների համար իշխանութեան կողմից կարող է լինել հարկաւոր տնօրէնութիւն. վերջը փոխարքայն ցաւ էր յայտնում, որ ինքն այս մասին արդէն մի տարի է գրել է Վեհափառ կաթուղիկոսին, բայց տակաւին պատասխան չէ ստացել։

Այս ամենի մասին Դանիէլ եպիսկոպոսն փութաց յայտնել Մատթէոս կաթուղիկոսին, և՛ իւր և՛ ժողովրդականաց կողմից խնդրել շնորհել ներողութեան կոնդակը. սակայն նորա երկիցս, երիցս աղերսանքներն և միջնորդութիւնները չը կարողացան համոզել կաթուղիկոսին։ Նա մինչև անգամ յանդիմանում էր եպիսկոպոսի մարդահաճոյական ձեռնարկութիւններն և յայտնելով իւր հոգեկան վիշտն առ այն, որ իւր գործադրած բոլոր խաղաղական ջանքերը չեն ճանաչում և նորէն իրան խաղաղասիրութեան ճանապարհն են սովորեցնում՝ պէս պէս վկայութիւններով ապացուցանէ, որ «Նոքին իսկ թէ ի գեղջ ելեալ հոգւով ծառայել կամին հայրենի իւրեանց ուղղափառ սուրբ և առաքելական եկե-

զեցոյ՝ թող երաշխաւոր կացուցեն առաջի քա-
հանայապետական իրաւանց զբանս իւրեանց գրով
զղջականաւ, ապա և մեք յաւելցուք առ նոսա
զօրհնութիւն, տալով միանգամայն զղջման նոցա
թողութիւն և հայցեսցուք յերկնաւոր Քահանայա-
պետէն 'ի ծոց եկեղեցւոյ վերակոչել զնոսա՝ իբ-
րև զանառակ որդին, պահել անսասան 'ի նոյն և
զարման տանել նոցա յաւիտեանս։

Այն ինչ Վենետիկ կաթուղիկոսն ոչինչ
խնդրուածք և ոչինչ միջնորդութիւն չէր ուզում
լսել ներսական կոնդակի մասին առանց մեղա-
յադրի՝ բողոքականների միաբանութիւնն էլ ամե-
նայն ջանք գործ էր դնում կառավարութեան
թոյլատրութիւնն ստանալ և առանձին լութերական
Աւետարանական հասարակութիւն ճանաչուել։ Երբ
վերոյիշեալ ժամանակին Միխայիլ Մեծ Իշխանն
իւր ամուսնոյ հետ կառք նստած դուրս եկաւ Շա-
մախուց դէպի Բագու գնալու՝ քաղաքից մի քիչ
հեռու նորան ընդ առաջ եկան միաբանութեան
ներկայացուցիչներն մի աղերսագիր մատուցին առ
այն, որ կառավարութիւնը գթայ իրանց վերայ և
իրաւունք շնորհէ առանձին եկեղեցի կազմելու։
Նորին Բարձրութիւնն երկար խօսելու ժամանակ
չ'ունէր. կառքը սլացաւ։

Յետ աւուրց, 1865 թ. յունվ. 15-ին, Բա-
գուի Նահանգապետ գեներալ Կոլիբակին ուղարկեց
Շամախու գաւառապետին բողոքական հայե-
րի կողմից յանուն փոխարքայի ուղարկուած խնդ-
րագրերն, ցոյց տալով նոցա մէջ եղած անկանո-

նութիւններն ու օրինաց անգիտութիւնն և բա-, ցատրելով, որ 1, իւրաքանչիւր չափահաս անձն թէպէտ միննոյն ընտանիքից, ինքն իրան համար միայն կարող է խնդիր տալ. իսկ եթէ ծնողք երկուսն էլ համաձայն լինին նման փոքրահասակների համար. 2, այս եղանակաւ եղած խնդիրները կը կատարուին առանց արգելքի, երբ խնդրարկուն նախապէս փորձուի ու խրատուի Պատարի ձեռքով Ամենարանական-Լութերական եկեղեցու դատաւորեան մէջ. և պատար կարող են խնդրել և տանել երբ ստորագրութեամբ կը պարտաւորին միանալ յիշեալ Լութերական եկեղեցու հետ, որ ճանաչուած է պետութեան մէջ և որ կառավարուում է ընդ տնաչութեամբ Գլխաւոր Կոնսիստորիայի. 3, միմիայն վերոյիշեալ Ամենարանական Լութերական Կոնսիստորիան Մոսկվայի՝ կը նշանակէ նոցա համար պատարներ, որովհետև նորա վիճակի մէջ են գտնուում բոլոր այս կողմի ծխերն էլ, և այլ ևս ոչ մի տեղից չի կարող պատար նշանակուիլ, բացի կառավարութեան նշանակածներից. և 4, այսպէս օրինաւոր ճանապարհով Հայոց եկեղեցուց Լութերականութեան դարձածները ստորագրութեամբ պիտի պարտաւորվին ոչինչ կրօնական յարաբերութիւններ չունենալ, ոչ յայտնի և ոչ ծածուկ, արտաքսման միջոցարական ընկերութեանց հետ

Հասկանալի է, որ բաղդականները յօժարութեամբ խոստացան կատարել այս ամէն պահանջները, միայն թէ իրանց ցանկութիւնը կատարուի

Մի քանի ամիս յետոյ արդէն կարգադրուած էր հրամանագրել Մոսկուայի Աւետարանական-Լութերական Կոնսիստորիայի գլխաւորին՝ գեներալ-սուպերինտենդանտ Կարլ Բլոմին՝ գալ Շամախի և ընդունել հայ-բողոքականներին իրանց եկեղեցւոյ ծոցը...

## ԺԶ.

Մատթէոս Կաթուղիկոսի ներողութեան կոնդակը. — Շամախու առաջնորդն ու պատգամաւորները Թիֆլիսում. — Գեներալ սուպեր-ինտենդանտի գալրատանը յետաձգումն և Պարգսի աքսորումն. — Դանիէլ եպիսկոպոսի վերջին ճգումներն. — Կաթուղիկոսի մահը. — Գեներալ սուպեր-ինտենդանտ Կարլ-Բլոմը Շամախում. — Բողոքականները ճանաչում են առաջին Աւետարանական — Լութերական հասարակութիւն։

—

Փոխարքայի վերջին անօրէնութեան լուրը սաստիկ յուզման և տխրութեան մէջ ձգեց Շամախեցի Հայերին և Դանիէլ եպիսկոպոսին. մանաւանդ շատ դժգոհ էին, որ Մատթէոս Կաթուղիկոսն այնքան ուշացրեց ներողական կոնդակը. Քաղաքացիք այդ ժամանակ մտադրուեցան խնդրել փոխարքային, որ բարեհաճի փոխել իւր վերոյիշեալ անօրէնութիւնը՝ բողոքականներին Լութերական եկեղեցին ընդունելու վերաբերմամբ և Պարգիս Համբարձումեանին հեռացնել տայ քաղաքից. բայց լսելով որ այդ միջոցներին Մեծ Իշխանը զբ-

նալու է Էջմիածին՝ բարեաց համարեցին, որ իրանց կողմից երկու պատգամաւոր ընտրեն և առաջնորդի հետ միասին ուղարկեն այնտեղ, որպէս զի Փոխարքային և Կաթուղիկոսը նոցա ներկայութեամբ և ըստ նոցա ազերբայնաց պէտք եղած կարգադրութիւնն անեն բողոքականաց գործի մասին։ Ընտրուած պատգամաւորներն և առաջնորդը վերոյիշեալ նպատակով գնացին Էջմիածին և տեսակցեցան Վեհափառ Կաթուղիկոսի հետ։ Այսուհետև Դանիէլ եպիսկոպոսը կարգացաւ համազգի Կաթուղիկոսին, որ ասէ այն ներողութեան կոնդակն, որի մասին ինքն առաջուց մի քանի անգամ խնդրել էր։ Այս կոնդակի մէջ։ արձակած 1865 թ. ապրիլի 21-ից, Վեհափառը Շամախեցի բողոքական Հայոց խնդրի հանգամանքները համառօտակի պատմելուց յետոյ՝ յաւելուած է. «Արդեալ գտաւ սէրութիւնն, որպէս տեղեկացաք յառաջարկութեանց Ձերոց, հաճիլ ընդ խնդիրս նոցա, մինչ մեք յայլ համազգական հնարս մտաբերէաք լինիլ ձեռներէց և յայտնել սէրութեանն զմեր վերջին կամ՝ ըստ ակնարկութեանց Մեծի Իշխանի Փոխարքային Կովկասեան սահմանաց։ Այս անակնկալ տնօրէնութիւն վշտացոյց զմեզ կարի յոյժ, սակայն հետևելով բանից սրբազան առաքելոյն թէ՝ «սատան, յանդիմանեան և դարձեալ միսիթարեսցո», ընդ նմին և պատուելով զկամս սէրութեանն և զառաջարկութիւնս Ձեր և թախանձագին խնդիր ողջամիտ Հայազգեաց քաղաքիդ՝ բառնալք ահա զպատճառն խորութեան, զոր դնեն նոքա, և տալք Ձե-

բում արքայութեան իրաւունս միսիթարել զնոսա դարձեալ պատշաճաւոր քարոզութեամբ և ի յուշ ածելով նոցա զքաջագով զպանծալի անուն աղգութեան, զարիական գործս մերոց նախահարցն՝ արեամբ չափ պաշտպանելոց զամրողջութիւն աղգի և եկեղեցւոյ, յորում ծնեալ և մեռեալն նոքա և յորմէ հետեալն է ապերախտ մոռացութիւն, անեներելին յԱստուծոյ և 'ի մարդկանէ, և ընդունել 'ի գայթակղելոցն այնոցունց 'ի ծոց Հայաստանեայց եկեղեցւոյ զայնոսիկ, որք սրտի մտաք զղջացեալ դարձ արասցեն 'ի մշտատաբած գիրկս նորա, և զամենայն ծէս, զխորհուրդս, զարարողութիւնս 'ի վերայ նոցա կատարել անթերի՝ ըստ աւանդութեանց Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ, և զանուանս նոցա յայտնել մեզ, զի և մեք միսիթարեսցուք զնոսա Հայրենասիրական մերով ներողամտութեամբ և օրհնութեամբ։»

Ըստ որում Մեծ Իշխանի էջմիածին գնալն էլ գլուխ չ'եկաւ՝ առաջնորդ եպիսկոպոսն երկու քաղաքացւոց հետ (Օհանջան Միրզաբէգեանց և Ստեփան Լալայեանց) շտապեց Թիֆլիս փոխարքայի պաշտօնակատար Իշխան Օրբելիանու մօտ, հարկաւոր խնդրուածներն ու միջնորդութիւնն առնելու։ Նորա տեսակցութիւնն Իշխանի հետ։ Կաթուղիկոսի յանձնարարական գրութիւններն և ուրիշ կապակից հանգամանքներ ներկայ դէպքում այն արդիւնքն ունեցան, որ սուպեր-ինտենդանտի գալուստը յետաձգուեցաւ առ ժամանակ, Սարգիս վարժապետը բերել տրուեցաւ Թիֆլիս (1865 թ.

յունիսին) և ապա ուղարկուեցաւ Պետերբուրգ 'ի բնակութիւն, թէև նա աւելի կը ցանկար գնալ Կարբաս կամ հիւսիսային Կովկասի մի այլ գերմանական գաղթականութիւն։

Դանիէլ եպիսկոպոսն և պատգամաւորները Թիֆլիսից դարձան ուրախ տրամադրութեան տակ։ Ըստ երևութին գործը մօտ էր յաջողակ վախճանի։ Սրբազանը յունիս ամսին երեք անգամ կարդալ տուաւ Վենետիկի ներողական կոնդակը՝ հարկաւոր բացատրութիւնները տալով իւր քարոզների մէջ։ Մի քանի ժամանակից յետոյ միևնոյն կոնդակի պատճէնն ուղարկեց բողոքականների ներկայացուցիչներին՝ «յարգոյ Աւագայ Թառանեանց և Եղբ=յր անուանելոց Հայոց Շամախւոյ քրիստոնական սիրոյ և խաղաղութեան սուրբ ոգեղունիւ, յորդորելով և խրատելով 'ի պատիւ ազգութեան և եկեղեցւոյ հեռու կենալ նախապաշարեալ խորհուրդներից և հակառակութիւնից և գառնալ հայրենական ազատ եկեղեցւոյ ծոցը, որ քաղցր գրկաբացութեամբ պատրաստ է ընդունել ջերմեռանդութեամբ իրան դարձող բոլոր որդեացը»։

Տարաբաղդաբար այդ միջոցին վախճանուեցաւ Մատթէոս Ա. Կաթուղիկոսը։ Բողոքականների խնդիրը մի առ ժամանակ մնաց առ կախ, ըստ որում Էջմիածնի Սինոդն 'ի սկզբանէ անտի անհամաձայն գտնուելով վերոյիշեալ խնդրի վերաբերմամբ հանդուցեալ Կաթուղիկոսի գործողութեանց եղանակին՝ չէր ուզում այժմ էլ գործին

խառնուել. իսկ Շամախեցի Հայ հասարակութիւնը Պարգիս վարժապետի աջակցմամբ և սուպերինտենդանտի ուշադրով գործը յօգուտ Հայ եկեղեցւոյ յաջողուած էր համարում Այն ինչ բոզքական միաբանութիւնը չէր զազարում աշխատելուց և ամենայն ձեռնհաս անձանց օգնութիւնը հայցելուց, անտես անելով նորան ուղղած ամենայն յորդոր ու խնդրուածք։

Եւ ահա, 1866 թ. օգ. 22-ին շնորհ բերաւ Շամախի Մոսկուայի Աւետարանական-Լութերական Կոնսիստորիայի գեներալ սուպեր-ինտենդանտ Վ. Կարլ-Բլոմը՝ Հայազգի փոքրիկ հօտը Լութեր վարդապետի փարախը մտցնելու և նորա այս մուտքն օրհնելու համար։ Վերջապէս, վերջապէս կատարուեցաւ մեր աստուածախնդիր եղբայրակիցների ցանկութիւնը...

Սուպեր-ինտենդանտը հարցուփորձի առնան կազմեց՝ իբր թէ խնդրատուների կրօնական հաստատութիւնները քննելու և տեսնելու որչափ արժանի էին նորա Աւետարանական-Լութերական եկեղեցւոյ անդամներ կոչուելու։ Կասկած չ'ունիմ, որ նոցանից ամենամեծ մասը չը գիտէր անգամ թէ ով էր Լութերն և ինչ էր քարոզում. բայց և այնպէս՝ ամենեքեան ճանաչուեցան իբրև քաջագոյն աշակերտներ Լութերի ուսմանց։ Ամբողջ օրերով բազմազան ամբոխ խառնուած էր այն տան առաջ և այն փողոցում, ուր գտանուում էր սուպերինտենդանտի կացարանը. մէկի դէմքին ցնծութիւն էր նշմարւում, մէկին՝ թախիծ, մէկին՝ զայ-

բոյթ, մէկին՝ անտարբեր հեռաքրքրութիւն. այսպէս խառն 'ի խուռն։

Երբ որ Կարլ Բլօմը վերջացրեց նորադարձներին Լութերական եկեղեցու ծոցն ընդունելու արարողութիւնն՝ այնուհետև սկսաւ նոցա եբիսկոպոսներին մերժել, որոնք չորս տարուց 'ի վեր մընացել էին անկնունք, և նշանուածներին պսակել։ Այս պսակների առթիւ փոքր ինչ դժուարութիւն ծագեց սկզբում, որովհետև կատարուած պսակներից շորսը շատ մերձաւոր ազգականների մէջն էին, որ չափազանց խորթ էր թուում նոցն իսկ մոլեռանդ նորահաւատներին։ Երբ սուպեր-ինտենդանտը գալիս էր Մոսկուայից՝ մտաւ Պետերբուրգ, ուր այդ ժամանակ դեռ ևս գտանուում էր Սարդիս Համբարձումեանցը. նա կամենում էր տեսակցել վարպետի հետ, որին վաղուց 'ի վեր ծանօթ էր նորա կիները, մխիթարել նորան, քաջալերել, օգնել և հետը խորհուրդ անել միաբանութեան գործերի վերաբերութեամբ։ Այսուհանդերձ վարպետը նորան խորհուրդ էր տուել չը կատարել յիշեալ չհաս պսակները, որոնք հաճոյ չեն լինիլ միաբանակից եղբարց և շատ կը խորշեցնեն միւս Հայերին։ Սակայն Կարլ-Բլօմը հարկադրուեցաւ հանդամանքների բերմամբ տեղի տալ Թառահեանց խնդիրներին ու պահանջներին, որովհետև գլխաւորապէս նոցա տանիցն էին նշանուածները։ և այսպէս՝ Դէորդ, Քերոբ և Ջհանգիր Թառահեանք առան իրանց հօրեղբարց աղջիկներին, իսկ Աւագ Անտոնեանցն առաւ իւր մօրաքրոջ աղջկան, որ

դարձեալ թառամեանց ամենից էր։ Այս դէպքն արդարև շատ խօսակցութեան և դայթակղութեան առիթ տուաւ։ Բողոքականք իրանք ամաչումէին այս մասին խօսելու, և երբ ասուլիսը շատացաւ՝ նոքա պատասխանումէին, թէ այդ մի բացառական դէպք էր՝ հարկից յառաջացած և այդ տեսակ ծայրահեղութիւն իրանց էլ չէ հաճելի։ Սակայն նոցա հակառակորդները յետոյ թարգմանեցին Աւետարանական Լութերական եկեղեցու կանոնները առ հասարակ պատկի մասին, որ շատ մասով խորթ են Հայոց եկեղեցական կանոններին և ազգային սովորութեանցն, և տարածեցին ժողովրդի մէջ։

Նշանուած բողոքականների մէջ կային ուրիշ վեց երիտասարդներ, որոնց հաւատացումները չէին համաձայնում կրօնափոխ լինել, բայց և չէին ուզում թողնել իրանց փեսացուներին։ Հարկ էր որ այդ նշանուածներին Հայոց քահանաները պատկէին։ Գեներալ սուպեր-ինտենդանտ Կարլ-Բլոմն ասցա էլ վկայական տուաւ, որ իբր կողմից ոչինչ արգելք չը կայ, եթէ պատկուին Հայոց եկեղեցում, և ապա օրհնելով Լութերական եկեղեցոյ նոր եկամուտը՝ վերադարձաւ իւր աթոռն՝ Մոսկուա։

## ԺԷ.

Խաղի վերջը. — Սարգսի վերադարձը. — Նորա գործունէութիւնը.— Ժողովարանում եղած քարոզներն ու այլ պարապմունք.— Ընկերութեան գանձարանը.— Որսորդութիւն։

—

Ուրեմն 1866 թ. սեպ. ամսի սկզբում արդէն օրինապէս ճանաչուած կազմուած էր Շամախու մէջ Հայ բողոքական հասարակութիւնը։ Վերջացաւ ուրեմն այն խաղն, որ տղայոց լեզուով ասում է՝ «Ես հոմիւ եմ՝ չեմ տալ.— Ես գայլ եմ՝ կ՚առնեմ»։ Այժմ այդ հասարակութիւն իւր բոլոր ոյժերը դարձրեց ներքին զօրութիւնը կազդուրելու և աճելու վերայ. քիչ ժամանակից յետոյ Պետերբուրգից վերադարձաւ Սարգիս վարժապետը, հոգին նորակազմ կրօնական հասարակութեան. իւր աքսորավայրում նա մնաց մի տարի ու կէս։

Սարգսի վերադարձը ոչ միայն ցնծութիւն, այլ և նոր կեանք տուաւ միաբանութեանն, ըստ որում նա էր ճարտարութեամբ միաբանակիցների մէջ ներքին կապերը պահողը, թուլացած ոգիներին զօրացնողը, դրսից ազդեցիկ անձանց համակրութիւնն ու հովանաւորութիւնը հայցողն և դրաւոր յարաբերութիւնները պահողը հեռաւոր եղբայրակիցների հետ, ի թիւս որոց և այն երիտասարդների, որոնք վաղուց դարձեալ նորա հոգածութեանց շնորհիւ ուղարկուած էին Բազէլ պատրաստուելու համար։ Նաև միակ վարժապետն էր

իրանց հասարակութեան մէջ թէ տղայոց թէ աղջկանց։ Նորա մի նամակից քաղում եմ հետևեալ կտորն, որ կարող է փոքր ինչ գաղափար տալ նորա գործունէութեան եղանակի մասին.— «Քրիստոս Ցիսուսումն սիրելի եղբայրս Յս. (Պետերբուրգում). № 28 սիրատոր նամակդ ստանալով այլ ես մի համառօտ պատասխանում եմ, թէև անցեալ 3 նամականեացս ոչ մինի պատասխանը չ'ստացած. յուսամենք, որ Քո առաջին մասն քննութիւնդ արդէն պրծած միւսի համար աշխատում լինիս, և նա մինչև իմ այս գրութիւնս Քո ձեռք հասնելը մեր հայցողական գրութիւնների ստիպմամբ միւս մասը ևս պրծնելում լինես դարձ առնել առ մեզ։ Քո այս նամակիդ հետ ստացաւ Լ. եղբայրն Եներ. սուբ. Քարլրլօմից մի քաղցր նամակ։ Քո համար գրում է, որպէս թէ Դօրբատը պրծնելուց յետ առանց ընկերութիւնից հարցնել հարկաւորելու ձեռնադրի Քեզ ուղարկի։ յուսամ է որ Պետ-ումն էլ արդեօք չ'ունենաս Քրիստոնէականը ուղարկելիս փ. Հիզեմանը տեղս էր, և մեք շատ խառնված։ իմ առանձին գործելու սննեակս որ նորան էի տուել, իմ արածս և թողածս էլ չէի իմանում.... Թող այս ամենը մնայ, Աստուծով անձնարար իրար հետ կիսօսանք։ Մի քանի աւանդութիւններ անեմ Քեզ մեր աղքատիկ ուսումնարանների յառաջանալուն համար։ իմ սիրտս կատր կատր է լինում վարժատանցս պակասութիւնները տեսանելով. Քունը գիտեմ ես առաւել, որ գործի տէրն ես։ ուստոր եղեխեր-

քոնցս ձեռնարկումն համարեայ թէ գրեանք չկայ ներկայիս հենց երեք լեզուն էլ, որք են Հայ. Գեր. և Ռուսերէն. Ես որ փողի և աշխարհի պատուի չեմ սպասում հասարակ ընկերութեանս ցաւը կրում եմ սրտիս վերայ, յուսամ եմ և Դու նոյն զգացմունքումն ապրելու ես և աշխատելու Քրիստոսի թագաւորութեան մեծացնելու և միաբանութեանս օգուտն ծառայելու, առանց նայելու մարդկանցից ստացած անարգանքին, գործիս ամեն կերպ դժուարութիւններին և պակասութիւններին, երբէք չես մտաբերելու, մի հաւատարիմ ծնողի պէս աղքատիկ տունդ և ընտանիքդ երեսի վայր թողած լաւ կեանք պատելու. աշխատանքդ միայն մարդկանց աչքերի առաջին կանգնացնելու ջանքումն չես լինելու. Ուստի խնդրում եմ քո ամեն իմ երեսիս տուած պատիւը ցոյց տուր ինձ գործով. Ասուծով գալուց ետ որ ամենը պիտի կարգի դնէս, այդ տեղից հոգալու գործդ սա է ասեմ քեզ. աչք ածա յիշեալ երեք լեզուների համար մուտ առնել ամեն տեղ, ուսումնարաններին, Հայերէնի համար Պետեր. և Մասկով. ինչ առարկէք և գրեանք, որ մեր վարժատան յարմար են ուսուցանելու, հա, այբբենարանից բռնած, ընթերցանութեան և ուսումնական գրքեր, ձեռ. եկածից հետդ բեր. ձեռ. չեկած գրեանքը մի օրինակ էլ է գոնէ ունենաս, մանաւանդ այն այբբենարան և ընթերցարան գրեանքը, որ թարգմանելու արժան են. իմ լեզուովս յարգանաք ողջոյն ասելով պ. Սուքիասեան Նաղարեանցի հետ բա-

բնկամացիր, և խորհուրդ հարցրու մեր վարժա-
ուններիս յաջող յառաջադիմութեան համար,
միայն թէ չքաւորութիւններս ևս աչքի առակ ու-
նենալով կարողութիւնը տարածի չափ ոլորտ աշ-
խատի— ևս չեմ կարծում թէ նրանք աշխարհ-
հարդութիւն, պատմութիւն, թուաբանութիւն և
այլն Հայերէն ուսուցանեն, ապա Վենայումն,
Փարիզումն և Կոստանդնուպօլսումն Հայք ինչ լե-
զու են ուսուցանում, մեր որդիքը ինչ լեզուում
ուսանել պիտոյ են... Տէրը Քո հետ. ողջ կաց և
սիրոյ ողջոյն ասա նորանց, որ Տէր Յիսուսին սի-
րում են։

Այսպէս՝ Սարգիս վարժապետն աքսորից վե-
րադառնալուց յետոյ, արդէն ծերունի, բայց մի
եռանդուն երիտասարդի պէս գործում էր բողոքա-
կան հասարակութեան համար թէ ժողովարանում
քարոզելիս, թէ ուսումնարանում դաս տալիս և
թէ իւր գրասենեակում պարապելիս։ Այս ամեն
աշխատութեանց համար միտքանութիւնը նորան
նշանակել էր 400 ռուբ. տարեկան. այլ աղբիւրնե-
րի մասին ստոյգ տեղեկութիւն չունիմ։

Քարոզութեանց համար իրրև ժողովարան
ընտրուած էր Մկ. Թառահեանցի տունն, ուր շա-
բաթն երեք անգամ հաւաքում էին քարոզի, ա-
մեն անգամին կանայք կէսօրին, տղամարդիկ ե-
րեկոյեան. իսկ երրորդ անգամին, կիրակի օրը,
հաւաքում էին միասին։ Քարոզիչը սկզբում միայն
Սարգիսն էր. հաղիւ ուրեմն պատահում էր, որ
եղբայրների միջից մինը փոխարինէր նորան։ Քա-

բոզի համար իբրև նիւթ՝ կարդացուում էր Աստուա-
բանից մի գլուխ, որ կարդացուելից յետոյ պար-
զաբանւում էր, երբեմն համեմատելով դրդիչ ակ-
նարկներով, կիսու յարձակումներով ժամանակա-
կից եղելութեանց վերայ հիմնած մեկնաբանեալ
միջնաբերդներով, անուանի բացագանչութիւններով և
գերասանական շարժուածներով, և այլն և այլն
Այսուհետև շատ յաճախ խօսքի տրամաբանական օ-
րէնքները կոչ էին գնում ազնուութեան հոսանքի
մէջ. շատ յաճախ անհեթեթ եզրակացութիւններ
էին առնում, բերում էին անհամապատասխան օ-
րինակներ, շնչում էին նախապաշարմունքներով
ապրուած գաղափարներ. բայց այս ամենը փոյթ
չէր, ըստորում հասկանալի նպ չէր այն ոգորմելի
խմբին, որ մտքով ու սրտով ներկայացնում էր մի
խոպան, ամենայն հոգևոր սերմանացանութիւնից
օտար անդաստան, ուր ուրեմն առաջին ցանք ա-
նողը կարող էր իւր ցանկացած հունձը հնձել։

Ժողովի պարապմանց կարգն այսպիսի էր.
նախ երգում էր որևէ հոգևոր երգ. յետոյ քարո-
զիչը արտասանում էր որևէ աղօթք. յետոյ լինում
էր ընթերցումն ու քարոզը. վերջը դարձեալ երգ-
ում ու աղօթում էր, և ժողովականք ցրուում էին
Ժողովարանի մուտքի մօտ դրած էր առանձին
տուփ, ուր ցանկացողները ձգում էին իրանց գան-
ձանակը։ Բացի սրանից միաբանութեան անդամ-
ները պարտաւոր էին տարեկան առանձին որոշ
տուրք ևս տալ՝ իբրաքանչիւրն ըստ կարողութեան
տան բուրլի և աւելի. որով պէտք է կազմուէր և

ամէր ընդհանուր գանձարանը։ Այս գանձարանի խնամակալութիւնն, ինչպէս և առհասարակ միաբանութեան գործոց կառավարութիւնը յանձնուած էր մի հոգաբարձութեան՝ կարծեմ ասան հոգուց բաղկացած։ Յօգուտ գանձարանի վճարուող այդ տուրքերը կային և վաղուց, յառաջ քան եկեղեցուց անջատուիլն, և հաւաքուած գումարն, ինչպէս հաւատացնում էր ինձ բոզոքական հայերից մինը, հասնում էր մինչև 10,000 բուրլու, որ միաբանութեան —ՓՆԵՐԻ ձեռքով գործադրուել էր այլ և այլ պիտոյքների համար՝ առանց կանխագոյն որոշման. իսկ կանոնաւոր և յայտնի հաշուավարութիւն սկսուել է միայն առանձին կրօնական հասարակութիւն ճանաչուելուց յետոյ, գեն. սուպեր-ինտենդանտի գալուց զկնի։ Վերոյիշեալ տուրքերից ժողովուած գումարից զլխաւորապէս նպաստ էր տրւում միաբանութեան չքաւոր անդամներին և դրսից էլ այն անձանց, որոնք զիմում էին օգնութեան, կամ այնպիսիներին, որոնց վերայ որսի յատկութիւններ էին երևում։ Շատ անգամ զիւղերից քաղաք եկած պատանիք խնամակալութիւն էին գտնում միաբանութեան աւագներից. նոցա կամ մի փոքր դրամագլուխ էր տրւում առուտուր սկսելու, կամ մի փոքր խանութ էր յանձնւում ծխախոտի և ուրիշ մանր վաճառքների, և կամ մատակարարում էին խնամարկեալի արհեստին վերաբերեալ պիտոյքները։ Բարերարուած անձինք սկզբում լոկ հաճոյակատարութեամբ, ապա երախտագիտական զգացմունքից

զրդուած և վերջը թերևս սրտի պատրաստութեամբ յաճախում էին բոզքականների ժողովարանը, հուսկ ուրեմն միաբանակցելով նոցա։

Բացի վերոյիշեալ ծախքերից՝ ընդհանուր գանձարանից վճարուում էին նաև Սարգիս Համբարձումեանի ռոճիկն, յետոյ աւելացած ուսուցիչների ռոճիկներն, պատօրների ռոճիկների մի մասն և արտասահման ուղարկուած երիտասարդներին հասուցանելի նպաստներն։ Աւելի մնացած գումարն անտեսուում էր ժողովարանի շինութեան և ուրիշ անակնկալ ծախքերի համար։

---

## ԺԸ։

Արտասահման ուղարկուած բոզքական պատանիք։ — Բազէլեան ընկերութեան ծառայութիւնը. — Արգելքի առաջն առնելու ճանապարհներ։ — Աբր. Ամիրխանեանցի պատրաստութիւնը։

---

Մինչդեռ մեր բոզքական Հայերը Շամախում աշխատում էին ճանել ու զօրանալ՝ նոցա հոգևոր ծաներն էլ թեաւորում զօրանում էին Շուէյցարիայի Բազէլ քաղաքում։ Այնտեղ առաջին անգամ ուղարկուած էին Նուխեցի Իսրայէլ Գոլուխանեանց, Շամախեցի Մովսէս Աղնաուրեանց և Յովակիմ անն երիտասարդ։ Այս պարոնները վայելում էին ըստ ամենայնի Բազէլեան քարոզչական ընկերութեան հովանաւորութիւնն՝ որպէս արևելքի համար պատրաստուող գործիչներ։ Նոցա հա-

մար այն հեռաւոր արևմուտքում ամենայն ինչ յաֆիզշակիշ էր։ Եթէ ոչինչ մասաւոր անունդ էլ չըտանային՝ լոկ արտաքին եւրոպական շքեղութիւններն ու ակնահաճոյ պարագաները բաւական էին մեր կիսավայրենի աշխարհից գնացած երիտասարդներին գրաւելու։ Նոյն իսկ միսիոնարական տունն անգամ մի դիւթական ազդեցութիւն էր անում այս պարոններին վերայ, որոնք իրանց հայրենիքում սովոր էին տեսնել ըստ մեծի մասի ցաւոտ, աղտոտ, հոգաշաղախ պատերով, եղեգնեայ ծածկով անասնոցի ընկերութիւնն այս բանը լաւ էր հասկանում, և հոգացել էր այդ հանգամանքից ևս օգուտ քաղել։ Դա փոշոտ թղթերի ճակատին մաքուր վիմագրութեամբ տպել էր տուել յիշեալ տան պատկերը։ (Missionshaus in Basel) և այդ թղթերի վերայ քարոզչացուները գրում էին յաճախ իրանց նամակները՝ հայրենի աշխարհում կախարդանք ազդելով և սրտեր գրաւելով։ Այդ տեսակ մի թղթի վերայ վերոյիշեալ քարոզչացուներից մինն այսպէս է սկսում իւր նամակը։ «Պատուարժան ծնողք! վերտոմն իմ գալոյ ժամանակն երկարացաւ, և գուցէ Դուք խորհէք, թէ ես ՀԷՆ ՈՅՈՒՆ ՓԷՂՅՆԵՐԷՆ Ի ՀՈՅՈՒՆ ԲՈՓՈՒՐՎԵՅԷ ՓՈՒՆԸ թողած, որը այս թղթիս ճակատին վերայ երկարած է, և որը ՃՇԳՈ ԻՄ ԷՆՔԵՐՈՒՆ Է։ ԲՈՂ ՈՒՐԻՇ ՎԵՅԼՈՒՇ ԿԷՆԴԸ, չեմ ուզում Ձեր տեսութեան գալ։ ոչ, էսպէս չէ... և այլն։»

Մենք արդէն գիտենք, որ Բազէլեան ընկերութեան գործակալներին արգելուած էր Ռուսաս-

տանում քարոզչութիւն անել. գիտենք, որ Ղարաբաղից նոքա հալածուեցան, գիտենք, որ երբ կառավարութիւնը Շամախեցի Հայերին իրաւունք տուաւ առանձին Աւետարանական-Լութերական եկեղեցի կազմել՝ արգելեց նոցա որ և է յարաբերութիւն ունենալ արտասահմանեան ընկերութեանց և առաւելապէս Բազէլեան ընկերութեան հետ. ուրեմն այս մեր Հայ բողոքական պարոնները Բազէլումն ինչ գործ ունէին։

Սորա պատճառը մասամբ այն էր, որ յիշեալ երիտասարդները Շուէյցարիա էին ուղարկուած յառաջ քան բողոքական Հայերի առանձին հասարակութիւն ճանաչելին, ուրեմն և յառաջ քան նոցա յայտնի պարտաւորութիւն յանձն առնելը. բայց գլխաւորապէս դժուարութիւնները բարձուած էին այն յարաբերութեանց շնորհիւ, որ «Աստուծոյ խօսքի տարածման» գործին ծառայող անձինք և հաստատութիւնք կապած ունին միմեանց հետ. մինն ընդունում է, միւսը հրահանգներ է տալիս, երրորդը յանձնարարում է չորրորդին, սա պատրաստում է դարձեալ հինգերորդին, և այն շարունակ։ Մենք արդէն տեսանք թէ ինչ ճանապարհով ընթացաւ Սարդիս վարժապետի պատրաստութիւնը. սորա նման եղել է և միւս առաքեալներինը։ Օրինակ՝ յայտնի պարոն Աբրահամ Ամիրխանեանցի պատրաստութիւնը, համառօտակի ասեմ, եղել է հետևեալ կերպով։

1856 թուականի վերջերին Բազէլեան Աւետարանական ընկերութեան անդամ և քարոզիչ

Ֆելեցիան Զարեմբան, որին մենք լաւ ծանօթ ենք, պրուսական գեսպանի միջնորդութեամբ անցաթուղթ ստացաւ Պետերբուրգում, որ շրջագայէ Բալթիկ ծովի եզերքում գտնուած Ռուսական երկիրները, հարաւային նահանգները և Անդրկովկաս՝ իր թէ ընկերութեան յանձնարարութեամբ բնրանացի շնորհակալութիւն մատուցանելու նոյն ընկերութեան յիշեալ երկիրներում գտնուած անդամներին՝ իւր կրօնական նպատակներին նոցա ցոյց տուած գործակցութեան համար։ Զարեմբային թէպէտ անցագիր տրուեցաւ, բայց միևնոյն ժամանակ կարգադրութիւն տրուեցաւ, որ յայտնի կանոններին համաձայն թոյլ չը տրուի նորան երբէք իւր շրջագայած տեղերում քահանայագործութիւն անել ու քարոզել. և ամենուրեք պատուիրեալ որ ծածուկ հսկողութիւն անուի նորա գործողութեանց վերայ։ Պատուելի միսիոնարը 1857 թ. կիսին արդէն դանձակումն էր։ Այս լուրը երբ իմացաւ մեզ ծանօթ Միրզա-Ֆարուխի որդի Աբրահամն, 10 տարեկան պատանի, շտապեց գնաց նորա մօտ։ Նա մինչև այդ ժամանակ պարապում էր գրագրութեամբ, նախ Շուշուոյ Պօլիցիայում, յետոյ գանձարանում։ Բայց այս պարապմունքը դուրեկան մի գործ չէր նորա համար։ Իրան իմացած քիչ-միչ հայերէն և ռուսերէնը, որ սովորել էր տեղոյն գաւառական ուսումնարանում, և հօրէն դաս տուած պարսկերէնն ու թուրքերէնը՝ չէին կարողանում յագեցնել նորա ուսումնասիրութեան փափագը։ Սակայն հեռու

տեղեր գնալու դիւրութիւններ չունէր նա. իրանք մեծ հարստութեան տէր չէին. երկու տարի առաջ հայրը վախճանուել էր. մայրն էլ ոչ մի կերպով չէր համաձայնում ձեռքից թողնել, որ իւր միակն էր. Աբրահամն ուրեմն ծածուկ էր փախել Զարեմբայի մօտ. Խնամատար քարոզչի հոգածութեամբ պատանի Ամիրխանեանցը կորզուեցաւ կարօտ մօր ձեռքից և հարկաւոր յանձնարարականներով ուղարկուեցաւ բարթեան երիտասարդը. 1858 թուականի սկզբներին նա Ռեվելում էր, ուր մնաց ութ ամիս պատրաստուելու մի գերմանացի ուսուցչի հոգատարութեամբ և ջանքերով. այս տեղից ապա ուղևորվելով աստուածապահ քաղաքն Բաղել մտաւ քարոզչական ընկերութեան ուսումնարանը. Այստեղ նա մնաց 6 տարի և սովորեցաւ գերմաներէն, անգլիարէն, յունարէն եբրայերէն լեզուները բացի քարոզիչներին հարկաւոր այլ ուսմունքից. Ուսումն աւարտելուց յետոյ՝ պ. Ամիրխանեանցն յանձնարարականներով վերադարձաւ Ռուսաստան և, ինչպէս ինքն գրում է իւր մի գրութեան մէջ, առնդ դորպատեան համալսարանում (Экзаменъ учителя наукъ въ высшихъ классахъ уѣздныхъ училищъ) գաւառական դպրոցաց բարձրագոյն դասերի վարժապետի քննութիւնն տալով՝ վկայական առաւ Սորանից յետոյ, նա արդէն 1865 թ. վերադարձաւ Շուշի, ուր և բաց արաւ դպրոց.

Այսպէս ահա Ար. Ամիրխանեանցի պատրաստութիւնը. սորան շատ նման և միւսներինը.

ԺԹ.

Կրոնական պէտքերի մասին հոգացողութիւնը.— Աբ. Ամիրխանեանցը Շամախում.—Խէթ.—Իս. Գօլուխանեանցի պատրաստութիւնը.— Գործակցութիւն այլ և այլ անձանց.— Գօլուխանեանցը Շամախում.— Ցառաջադիմական քայլեր հասարակութեանց։

—

Մինչդեռ Բաղէշեան ընկերութիւնն և այլ մասնաւոր անձանց ու հասարակութեանց հոգածութեամբ մեզ ժամօթ Հայ երիտասարդները պատրաստուում էին Ներսիսեան՝ Շամախի քաղաքում նոր հաստատուած Սարգիս Համբարձումեանցն իրան յատուկ եռանդով։ Թէ պատահում էր եկեղեցական օրինակատարութիւն Թիֆլիսից գալիս էր Գերմանացի պատուոր Լենդեռովը, կամ Հիւզեմանը, իսկ սովորական առօրեայ գործերը, քարոզները, դասաւանութիւնը դարձեալ կատարուում էին վարպետի ձեռքով։ Նա ղեկավարում էր «միաբանութեան» գործերին և պահպանում էր՝ արտաքին յարաբերութիւնները. նորան էին դիմում ամենքը հարկաւոր խորհրդի և հարկաւոր օգնութեան համար[1]։

---

[1] Բաղէշեան ուսանողներից մինը, պ. Ս., իր մի նամակի մէջ (1867 թ. յունիս՝ գանգատելով իրանց վերատեսչի խիստ վարմանց վերայ և պատմելով թէ ինչպէս նա «մի լաւ ներկեց խեղճ եղբայր Ց. ին՝ Խրիմեան ազանդաւորների ժողովարանը գնալուն համար, գրում է վարպետին՝ ի միջի այլոց. «Մենք մոռացինք մեր մէջ և խոր-

Համբարձումեանցի գործը բաւականին թեթեւացաւ։ երբ այդ միջոցին, 1867 թ. սկզբում, Շամախի եկաւ, ինչպէս ասումեն՝ ըստ առաջարկութեան Բազէլեանց, մեզ ծանօթ Աբրահամ Ամիրխանեանցը՝ Միրզա-Ցարուխի որդին։ Երկու տարի առաջ նա եկել էր իւր հայրենի քաղաքը՝ Շուշի, ուր և Գորպատեան համալսարանից ստացած վրկայականի զօրութեամբ, որ տալիս էր նորան ինամանդական դպրոցաց բարձրագոյն դասերի վարժապետի իրաւունք, բաց էր արել մի դպրոց, ի հարկէ Հայ մանկանց համար։ Սակայն կարճ ժամանակից յետոյ նորան արգելուել էր պահել այդ դպրոցն, ըստ որում նա պատկանում էր Բազէլեան ընկերութեան գործակալների խմբին։ Այս արգելքը գրուած էր կառավարութեան կողմից, բայց չը դիտեմ թէ ինչպէս նոյն Ամիրխանեանցն այժմ եկել էր գործելու Շամախում դարձեալ կառավարութեան աչքի առաջ։

Ինչպէս և է՝ 1867 թուականին ապ Ամիրխան-

---

հուրդ արինք, որ Ձեզ մեր հոգեւոր հօրը էրեցեք և հոգեւորականք, որ գուշ և մոբիանուանը մուանեցի հեթ խորհուրդ անէ և մեզ Ձեր քմէը յայտնէ։ ... Մենք սորանց վերայ էնքան յոյս չունինք. սորանք ոչ կարող են այուհեթև մեզ օգնել և ոչ էլ դժուար թէ կը կամենան օգնել...» (Այս միենոյն պարոնը չորս ամիս յետոյ Պետերբուրգ առ Խ. գրած նամակի մէջ իրան հակառակելով՝ ասում է՝ «Մենք գոռ խորհուրդն ընդունեցինք, որ գրում ես թէ ապասենք տեղս ինչքան կարելի է։ Մեզ եռոքեզ նեղացնող չը էր, ապրում ենք և մեր գործնի մէջ յաջողենք գնում»)։

նանցն Շամախում քարոզիչ էր և ուսուցիչ։ Այստեղ նորա ուսումնական պատրաստութիւնը, նորա մեղմ, ընտելական վարմունքը յափշտակում էր հոտիս ոչխարներին. ուշ-բողոքական Հայերից անգամ շատ շատերը յաճախում էին նորա քարոզներին։ Ուսումնարանի մէջ նա մոցրեց գերմաներէն լեզուի դասատուութիւնը։ Ս. Գրոց ուսմունքն աւելի յաջողակ ընթացք ստացաւ։ քարոզների մէջ աւելի նիւթ ու տրամաբանութիւն մտաւ։ Սարգիս վարպետի կախարդանքը քանի գնում պակասում էր։ ուսումնարանի մէջ տրան մնացել էր աղջկանց և մանր տղայոց բաժինը միայն։

Սակայն Ամիրխանեանցի ճրագն էլ երկար չը վառեցաւ։ հազիւ մի տարի անցած նորա և վարպետի ու Թառահանց ոմանց մէջ լուռ գըժտութիւն ծագեցաւ։ նոցա հայեացքներն ու գործողութեանց եղանակն իրար չէին համապատասխանում. ասում են թէ Համբարձումեանցը խէթ աչքով էր նայում Ամիրխանեանցի ազդեցութեան մեծանալուն վերայ և կուսակից ունենալով Թառահանց՝ չէր կամենում, որ իրանց ներքին գործերից ամենայն ինչ պարզ լինի ամենեցուն համար. ասում են մինչև անգամ, թէ Թառահանցներից ոմանք իրանց տղաներին սովորեցրել էին, որ ուսումնարանում ընդդիմանան Ամիրխանեանցին և թէ վերջինս լսելով այս մասին՝ խրատել էր մանուկներին չանսալ իրանց ծնողներին, երբ նորա անուղիղ ճանապարհը կը լինին ցոյց տալիս։ Այսպէս թէ այնպէս՝ 1868 թ. վերջին մօտ պ. Ամիր-

խանութանցը հարկադրուած էր թողնել Շամախին կարած սրտով։

Մինչդեռ Ամիրխանեանցն այսպէս դուրս էր հրում Շամախուց՝ Սարգսի և իւրայնոց առանձին փայփայանքը վայելումէր մի ուրիշ երիտասարդ, որ նորա հոգածութեամբ Բաղէլ ուղարկուածների խմբից էր։ սա էր Խրայէլ Դօլուխանեանց՝ Նուխի քաղաքից։ Դօլուխանեանցը Բաղէլի քարոզչական ճեմարանն աւարտելուց յետոյ 1867 թ. սկզբում եկել էր Դորպատ։ ուր, ինչպէս գրումէ նա մի նամակի մէջ, «ուզումէր անել իւր նկրտմունը, որ կարողանայ մեր Ռուսաց Տէրութեան մէջ մէկ արժանաւոր գործ սկսել։ իսկ այդ արժանաւոր գործն էր պատարի պաշտօն ստանալն, որի համար աշխատումէր Համբարձումեանցը՝ և որին օրէ օր սպասումէր Շամախու «եղբայրների միաբանութիւնը»։ Կարելի էր մտածել, որ Բաղէլեան ընկերութեան խնամքով դաստիարակուած ու պատրաստուած լինելը պէտք է արգելք լինէր Դօլուխանեանցին Ռուսիոյ մէջ քարոզչի պաշտօն վարելու, բայց գործից երևումէ, որ ինչպէս, խնդրանէ անտի, Զարեմբայի ժամանակներից սկսած, նոյնպէս և այժմ թէ Պետերբուրգում, թէ Դորպատում և թէ այլ տեղեր կային ազդեցիկ մարդիկ, որոնք ամենայն ջանք գործ էին դնում սրանին տարածման մշակների համար գործունէութեան ճանապարհները դիւրացնել։ Աշխութեան պատրաստվողների կարգից մէկը, Լ. Փիր—ց, որ նոյն ժամանակները Շամախուց ամենաշնչին պատրաստու-

թնամբ նկել էր Բալթիկ ծովի նգերքը՝ վկայագրեր ձեռք բերելու. գրում է Պետերբուրգից Դորպատ առ պ. Խոր. մի նամակ, որից հետևում հատուածները կարելի է թէ ասածիս ապացոյց լինին.— «Ես բնակվում եմ փ. (փաստոր) Լալանդի տանն։ Այսօր Բիշոֆն Իշխանովի հետ մեր բանի համար խօսելու է. այն թղթի համար եմ ասում, որ Դորպատ է գրված... Քո կառավարութեանդ համար երեկ 200 մանէթ տեղոյս կասսայից փող է նշանակվել, որանք յետ ու առաջ քեզ փ. ձեռնադրելու են Շամախեցոց համար. զգոյշ ու խաղաղ կացիր տեղդ. Շամախի գու բան մի գրիր. միայն կարող ես միամտացնել, որ քո համար փողի կողմանէ հոգացվել է։ Ինձ ժամանակ չ'ունիմ իմ բանից դեզ գրել. մի այլ ժամանակ... Փ. Լալանդն ասաց գրիր Խ.-ին, որ նա ինչքան կարելի է իւր էքզամենն շուտ աւարտի, որ մէկ փաստորի (մօտ) իւր պրօպի տարին անցուցանէ, չը լինի որ տէրութիւնն սա էլ մի պատճառ բերի և նորա Շամախի գնալն ուշացնի. ուրեմն դու կարող ես սորա համար պրոֆեսորների հետ խօսել։ Վնաս չունի, ասումէր նա, մինչ քանի ամիս էլ լինի գոնէ մէկ փ. մօտ պիտի մնայ...» Եւ Սարգիսը գրում է առ նոյն Խ.— «Ստացաւ էմ. եղբայրն Եներ. Սուբ. Բարլիլոմից մի քաղցր նամակ. Քո համար գրում է որպէս թէ Դորբատը պրծնելուց յետ առանց ընկերութիւնից հարցնել հարկաւորելու ձեռնադրի Քեզ ուղարկի. յուսամ է, որ Պետերուն էլ արդելք չ'ունենա։

Այսպէս ուրեմն պ. Խ. Դօլուխանեանցը սպասումէր Շամախում իրրև պատուոր մեծ ակնկալութիւններով ու ոգեորութեամբ, և Սարդիս վարժապետը առանձին իմն գուրգուրանքով էր վերաբերում դէպի նա։ Եւ սակայն առաւել քան երկու տարի նա ուշացաւ Դորպատ, Պետերբուրգ և Մոսկվա, մինչև որ վերջապէս 1869 թ. վերջերում շնորհն բերաւ Շամախի պատուոյրացած՝ 'ի ցնծութիւն միաբանութեան։ Նորանից շատ առաջ արդէն վերադարձել էր վերոյիշեալ պ. Լամ. Փիրբուդաղեանցը զաւառական դպրոցաց ուսուցչի վիճակաւոր ձեռք բերած։ Այժմ ուրեմն վարժապետն օգնականներ ունէր։ քարոզչութիւնը դարձաւ 'ի հարկէ պատուոյի յատուկ գործը, իսկ դպրոցի տէրն ու պահողը համարուեցաւ Փիրբուդաղեանցը։ Վերջինս մինչև անգամ այնքան յոժիշատակուեցաւ իւր գործի յաջողութեամբ, որ առանց օրինաւոր թոյլատրութեան բաց արաւ հասարակաց դպրոց ընդարձակ սահմանով, ուր սկսան յաճախել նշանաւոր վարձով և Հայ-Լուսաւորչականաց զաւակք։ բայց կառավարութիւնն երբ մի դէպքի առթիւ տեղեկացաւ այդ մասին՝ արգելեց նորան նոյն ընթացքով շարունակել իւր դպրոցն և ուսուցանքն ենթարկեց։ Վերջը Փիրբուդաղեանցն իջաւ իւր սահմանի մէջ գործելու։

Այս իսկ ժամանակամիջոցում Շամախու բոդոքականների ներքին գործերն աւելի կարգի մէջ մտան։ առաջուց և այժմ թարգմանուած կրօնական երգերն կարգի բերուեցան և մինչև անգամ

տարարուեցան [1]), գրական հաշիւներն աւելի կանոնաւորուեցան, բացառութեամբ մի մեծ հաշուի, որ բաւականին դժգոհութեանց և ներքին դժուարութեանց առիթ տուաւ [2]): Եւ երբ այսպէս գործերն ընթանում էին յաջողապէս՝ լինում էին և նորանոր նկատումներ, թէպէտ կրօնափոխութեան նորութիւնն այժմ կորցրել էր իւր գրաւիչ

---

[1]) Այս երգերի ժողովածուի վերայ աշխատել են Սարգիսն, Աբրահամն, Լեմանուէլն և վերջն Իսրայէլը. մասնաւոր նամակներից երևում է, որ գոքա բոլորն էլ շատ դժուարանալիս են եղել յիշեալ երգերի մէջ տարաշխութեան կանոնների, լեզուի, եղանակի և բովանդակութեան ներդաշնակութիւն պահելու թողում ասել այլ բանաստեղծական արժանաւորութեանց և ճշմարիտ օգնորութեան մասին, որոնցից բոլորովին զուրկ են նոքա այժմէս: Այդ նամակներից երևում է նոյնպէս, որ սոքա թէ այս երգերը թարգմանելիս ու փոխադրելիս և թէ լուսերակաւոր քրիստոնէական վարդապետութեան ձեռնարկը թարգմանելիս Մոսկվայում դիմում էին հանգուցեալ Ս. Նազարեանցի խորհրդին ու օգնութեանը, բայց չը դիտեմ թէ որչափ էր վերջինիս մասնակցութիւնը գործի մէջ: Սարգիս վարժապետը մեծ ակնածութեամբ և յարգանք է յիշում Նազարեանցի անունը:

[2]) Առանձին միաբանութիւն ճանաչուելուց քիչ յետոյ ըստ առաջարկութեան Թառահեանց, կազմուեցաւ մի ընդհանուր վաճառականական ձեռնարկութիւն, որի համար ըստ յորդորանաց նոյն Թառահեանց՝ միաբան եղբայրներից շատերը մէջ բերին իրենց ունեցած դրամագլուխը, նաև կանանց ոսկեղէն զարդերը՝ իբրև ճշմարիտ քրիստոնէին անվայել շռայլութեան նիւթեր, և այլ թանկագին ունեցուածներ, այս ամենից զոյացած

երևոյթն և հասարդի ուժեղութիւնը գաղարել էր արդէն։ Այս բանին մասամբ նպաստել էին իւր ժամանակին Դանիէլ եպիսկոպոս Շահնազարեանցի ճիգերն և մասամբ այն, որ հետզհետէ յայտնագործուում էին և այդ նոր հասին անգամագրուածների սոփորական աշխարհային յատկութիւնները։ Մեռա կոզմից՝ Հայոց հոգևոր իշխանութիւնն էլ

---

ընդհանուր գրամագրութիւնը առաւել քան 15,000 ռուբլի, հաւատացին Թառահնանց, որոնք հայրական ինամքով յանձն էին առնում Վոսկեվայից և Վակարեմիկից մինչև ամենայն հարկաւորուած տաճարք և Շուսխում ծախելոց Յեսայ հասուցանել իւրաքանչիւրին իւր մասնակցութեան չափով շահը, կամ թէ ցանկացած ապրանքը։ Սակայն Թառահնանք հաւատարիմ չը մնացին իրանց յանձն առած գործի մէջ, որից զգալի վնասներ ու կորուստներ յառաջացան շատ շատերի համար։ Ահա այս էր պատճառը բոզոքականների ներքին գժտութեանց։ Կորուստ կրողները շատ կարելի է, որ իսկոյն թողնէին հետամտելն միաբանութիւնից, եթէ որ նոցա չը կապէր այսօր կամ վաղն իրանց վնասների փոխարէն ստանալու յոյսն և եթէ կաշկանդուած չը լինէին զանազան հրատարակներով։ 1867 թ. հոկտեմբերին Վարդապետ գիւղացի մի կին, որի որդին բուսերական էր դարձած, իսկ հարսը մնացած էր Հայ եկեղեցում, մի աղերսագիր մատոյց Շուսխու Կոնսիստորիային խնդրելով, որ իրաւունք տրուի քահանային հաղորդելու իւր նորածին թոռին և յայտնելով, որ իւր որդին այժմ յանկարծից է բուսերական, որովհետև Թառահնանք նորան խաբել իրեն են 800 ռուբլի, և խնդրը մնացել է շիւար։ (Այս մասին տես և «Մշակ» լրագրի 1873 թ. 19-ում՝ բոզոքականութիւնից դարձած մի Հայի գրութիւն)։

թողնելով ապարդիւն հալածանքներն, երբ մանաւանդ այլ ևս տեղիք չէր մնացած հալածման, իւր ուշադրութիւնն սկսել էր կենդրոնացնել ուսումնարանների և եկեղեցւոյ բարեկարգութեան վերայ, որով և Հայ հասարակութիւնը գրաւուած էր մեծ առաւել և առաւել. և այս դդայի կերպով աչքի էր ընկնում մանաւանդ հանդուցեալ Անդրէաս եպիսկոպոսի օրերով, որ Շահնազարեանցի մահուանից յետոյ (+ 1868 յունիս) եկած էր Շամախի իբրև թեմի կառավարիչ (1869—1875) և որ հանդարտարարոյութեամբ և յառաջադիմական ձգտումներով ու ջանքերով յանկուցանում էր դէպի ինքը ժողովրդի սիրան ու հոգին, թէպէտ և չ'ունէր մինչև անդամ իւր նախորդի քարոզչական տաղանդն ու ճարտարութիւնը. Հայոց եկեղեցին դարձողների մեծ մասն էլ եղան Անդրէաս Սրբազանի ժամանակ (1863 թուականից մինչև 1880 թուականն դարձել են 20 հոգի, որոնցից 3 ը Գանձակ Սրբազանի օրերով, 14 ը Անդրէաս Սրբազանի և 3 ը Թադէոս Սրբազանի).

Այսպէս՝ երբ երկու կողմի հասարակութիւններն էլ հնագնեան տեսութիւնը մոռանալով՝ իրանց ներքին յառաջադիմութիւնն ապահովելու հոգսերով էին զբաղուած՝ վրայ հասաւ 1872 թուականի յունուարի արկածն, որ շատ բան տակն ու վրայ արաւ, քանդեց.

## Ի.

Երկրաշարժն և իր հետևանքները. — Օգնութիւն բողոքական Հայոց. — Նոր պատօր Դոլուխանեանցի. — Նոր ժողովարանը. — Հայազգի պատօրի կարևորութիւնը. — Դերմանացի պատօրներ. — Ազգի ազգի քարոզիչներ. — Մի քանի ծանօթութիւններ.

—

1872 թուականի արկածն, որի մասին յիշեցի էր յունուարի 16-ին Շամախում պատահած անեղ երկրաշարժն, որից ոչ միայն փլատակ դարձան անչարմար տներ ու այլ շինութիւններ, այլ և հիմն ի վեր խորտակուեցան շատ ազնիւ նպատակներ, գեղեցիկ յոյսեր ու օգտակար ձեռնարկութիւններ։ Մի կողմ թողնենք մեծամեծ մասնաւոր կորուստները՝ սարսափելի վնասներ հասան քաղաքի մէջ ամենն ազգի և ամենն դաւանութեան ժողովրդոց հասարակաց հասատութեանց ու. իմիջի այլոց հիմնովին խախտուեցան Հայոց նորաշէն մայր եկեղեցին, Հոգևոր դպրոցը, առաջնորդարանը։ օրիորդաց ուսումնարանը, գաւառական դպրոցն և բողոքական Հայոց ժողովարանը։ Շարժն առաւօտեան 10-րդ ժամին էր, և եթէ օրը կիրակի չլինէր անթիւ բազմութեամբ ուսանող մանկունք հէնց դպրոցների փլատակների տակ պիտի մնային. բայց վերոյիշեալ հասատութիւններից մեծ հարուած հասաւ միայն բողոքական հայոց ժողովարանին, որ այդ ժամանակ գտնուում էր Լայլեանց հնոտի շինութեան մէջ և որի դահլիճը կործանուելով մեռցրել էր 22 հասակաւոր տղամարդիկ չհաշուե-

լով ջարդուածներն ու վիրաւորուածները։ Զարհուրելի, ազնտալի էր տեսարանն, երբ չարաբաղդ մեռեալների դիակները փոշով շաղախուած ու այլանդակուած կրումէին մշակների շալակին իրանց տները. առանց սրան էլ ամբողջ քաղաքն արդէն իսկ ոգոյ մէջ թաղուած էր, որովհետև տուն չկար, որ մի զգալի կորուստ չունենար։։ Ընթերցողը կարող է երևակայել, թէ ինչ աստիճանի պէտք է որ լքանէր յուսահատէր Շամախու հասարակութիւնը, խորտակուած տեսնելով իրան և նրութապէս և բարոյապէս։ Այստեղից, ի մասնաւորի մեր նրութին վերաբերեալ, հետևեցաւ այն, որ թէ Լուսաւորչական և թէ բողոքական Հայ հասարակութեանց գործերի հանդարտ ու յառաջադիմական ընթացքն էլ ընդհատուեցաւ, դադարեցաւ մի քանի մասերով ընդ միշտ և մի քանի մասերով առ ժամանակ։

Խօսքներս մասնաւորենք դարձեալ բողոքական հասարակութեան վրայօք խօսելու,

Բողոքական Հայերն իրանց հանդիպած թշուառութեան լուրն չտապեցին հասցնել ի գիտութիւն գաւառակից եղբարց։ Պատուոյ Ի. Դօլուխանեանցն, որ արկածի ժամանակ անձնական գործերով Նուխի քաղաքումն էր գտանվում, երբ եկաւ տեսաւ աւերածի և հարուածի մեծութիւնը, ողբագին նկարագիրներով հաղորդեց ամենայն ծանօթ տեղեր և օգնութիւն խնդրեց։ Միևնոյն արաւ և Շամբարձուեանցն իւր ծանօթ տեղերը գրելով։ Դիտած ձեռքեր չը խնայեցին իրանց օգնութիւնն։ և շատ չ'անցած կարօտեալներին օգնելու համար ժողովուեցաւ

մօտ 17,000 ռուբլի նուէր։ Այս գումարի մի փոքր մասը միայն բաշխուեցաւ ամենակարօտաւոր և ամենազրկեալ ընտանեաց, իսկ մնացածը տնօրինուեցաւ պահել միարանութեան վերաբերեալ ընդհանուր պիտոյքների և նոր ժողովարան շինելու համար։ Այս տնօրինութեան շատ հակառակեցաւ Գոլուխանեանցը, պնդելով որ նուիրատուութիւնք եղած են վերատուածներին բաժանելու մտքով և իրաւունք չկայ ստացած նուէրները գործածել նոցա նուիրողների կամքին հակառակ. բայց ընտրուած հոգաբարձուք Ս. Համ—ենց, Գ. Բառեանց և. Հ. Ակ—ենց չանսացին նորան, և ոչ էլ այն զրկեալների ձայնին, որոնք օգնութեան կարօտ էին տակաւին. և այսպէս ժողոված գումարի մեծագոյն մասը մնաց պահեստի։ Պատոր Գոլուխանեանը մասամբ յառաջացած տարաձայնութիւնից դժգոհ և մասամբ պատճառ բերելով, որ իւր ընտանիքը սաստիկ վախենում է երկրաշարժից՝ թողեց Շամախին ընդ միշտ և հեռացաւ գնաց Մոսկվա, երևի գեներալ սուպեր—ինտենդանտի մօտ։

Դարձեալ մնաց հին հօտը, հին հովիւը։

Մի երկու տարի անցած, երբ երկրաշարժի պատճառած վնասներն ու հատուածներն արդէն մոռացուելու և տխրացած սրտերն սփոփուելու վրայ էին՝ միարանութեան զեկավարներն սկսան մտածել նոր ժողովարանի շինութեան համար։ Նոքա իրաւունք խնդրեցին մի գատարկ գետնի համար, որ գտանում էր ամենայն յարմարութիւն ու-

նեցող մի տեղ,—մեծ փողոցի վերայ, հասարակաց զբոսարան պարտիզին կից. Հայոց և Թուրաց եկեղեցիների շարքում Խրատները շատ չուշացաւ։ Այժմ յիշեալ տեղում հարթած բարձրաւանդակի վերայ դուք կը տեսնէք միայարկ, պարզ, բայց լայնարձակ ու շնորհով մի շինուած, պարապով շրջապատած, ընդարձակ բակում նորատունկ ծառատան և բուրաւէտ ծաղկոց. սա ժողովարանն է։ Ներս որ մտնէք՝ կը տեսնէք մի մեծ դահլիճ փայտէ սիւների վերայ հաստատուած առաստաղով և պատշգամբաձև գաւթով, դահլիճի հիւսիսային կողմը բարձր պատուանդանի վերայ դրած է քարոզչի ամբիոնը. նորանից առաջ դէպի աջ կողմը դրած է երգեհոնը. նոյնպէս մի քանի նստարաններ աջուձախ կողմերում. դահլիճի մնացած տարածութեան վերայ նստարաններ չկան և դորա փոխանակ գետնի վերայ փռած են փսիաթներ և կապերտներ, որոնց վերայ ժողովուրդը նստում է ծալապատիկ։ Հարաւային կողմում կանանց բաժինն է, որ միջնորմով բաժանած չէ դահլիճի միւս մասից. բայց ունի առանձին մուտք առանձին գաւթով։ Դահլիճին կից հիւսիսից և հարաւից կան մանր երկրորդական սենեակներ գրադարան և այլ հարկաւորութեանց համար։ Ժողովարանի մէջ ոչինչ զարդ, ոչինչ պատկեր չկայ. բ. քարոզչի դիմի վերևը պատին կպցրած է մի ժամացոյց, իսկ առաստաղից ատ և անդ կախկախուած են լամպաներ։ Այս միենոյն շինութիւնը ծառայում է և ուսումնարանի համար։

Այսպէս ուրեմն երկրաչարժի շնորհիւ չամախեցի բողոքական հայերն առանց մեծ դժուարութեան կարողացան շինել իրենց համար վայելուչ և ապահով ժողովարան, նոյն և ուսումնարան, որով նոքա զուարճանում և քաջախ պարծենում են։ Գոհ են, որ ունին իրանց յատուկ յարմարաւոր ժողովարանը. բայց չգիտեմ գոհ են նոյնպէս, որ 1872 թուից ի վեր չունեն իրանց յատուկ յարմարաւոր հայազգի պաստօրը... Ի՞նչ եղան արդեօք Բազէլում պատրաստուող հայ երիտասարդներն. երևի «հեռանաս՝ մոռանաս» ասացուածն այստեղ էլ ճշմարտվել է։ Այդ երիտասարդներից մինն—Մ Ազնաւորեանց 1869 թ. յունիսին թալկոնֆից գրում է առ Խոր. — «Դու մեզ գրում ես և իբր ex opere operatum հրաւիրում, ուր մենք միաբանութեան պայմանները ընդունենք։ Սա ինչ տեղից ծագեց միաբանութեան մէջ, մեզ գրես խնդրենք. ...յիշում ես, որ միաբանութիւնը ինձ վերայ խիստ շատ երախտիք ունի, սա ճշմարիտ է և եթէ Տէրը ինձ կեանք տայ, էպի նորանց գործով ցոյց տամ Աստուծոյ շնորհք, որ ես սրտանց շնորհակալ եմ միաբանութիւնից։» Եւ թեպէտ բարեբաղդաբար Տէրը կեանք տուաւ նամակագիր պարոնին, բայց չէ երևում թէ նա կամ Աստուծոյ կամ մարդոյ շնորհք գործով որևէ երախտագիտութիւն լինի ցոյց տուած իւր միաբանութեանը։ Նոյնը տեսնում ենք և միւսների կողմից։ Լսելով՝ այդ Պարոնները դրամական պայմանների վերայ չեն հաշտուել Շամախի գալու համար և իրանց աշխատութիւնները ցրուել

են Թուստանի զանազան քաղաքներում։ Այսպէս թէ այնպէս ներկայումս էլ Շամախուն շրջակայից հայ-բողոքական հասարակութիւնը չունի մի հովիւ, որին ըստ ամենայնի հասկանար ինքն, և որն ըստ ամենայնի հասկանար իրան։

Ինչպէս են տպա կատարում այդ հասարակութեան կրօնական պէտքերը։

— Կրօնական պէտքերը զանազան են. կան որ անչուշտ պահանջում են պաստորի ներկայութիւնը, ինչպէս մկրտութիւնն ու հաղորդութիւնը, որովհետև սոքա, և միայն սոքա, ճանաչվում են Լուտերական եկեղեցոյ գաւանութեամբ իբրև խորհուրդ եկեղեցոյ։ և կան որ կարող են կատարուիլ առանց պաստորի, ինչպէս պսակը, թաղումն և այլն. քարոզ կարող է տալ ամեն ոք, ով ձեռնհաս է և փոքր՝ի շատէ խօսելու շնորհք ունի։ Այսպէս՝ Գօլուխանեանցի հեռանալուց յետոյ, ինչպէս և նորանից առաջ էր։ բողոքական հայերի անհրաժեշտ պէտքերը կատարում են Գերմանացի պաստորներ, որոնք առաջ գալիս էին Թիֆլիսից։ իսկ վերջին տարիներս գալիս են Բաքուից, ուր այժմ նշանակուած է առանձին գերմանացի պաստոր, որովհետև այնտեղ բաւական թուով հաւաքուած են այլ և այլ ազգերից Լուտերական ժողովուրդ։ Այդ պաստորներն իրանց օրինակատարութեան ու քարոզների ժամանակ հայ ծխականների հետ խօսում էին թարգմանի միջնորդութեամբ։ միայն Բաքուի այժմեան գերմանացի—պաստորն բառանդով սովորում է հայերէն և համարեա երեք

ապրուստ մէջ այնքան յաջող սովորել է, որ այժմ հայերի ժողովարաններում կ՚երգուում է առանց մեծ դժուարութիւն խօսել ու քարոզել մաքուր հայերէն լեզուով։ Ինձ սէրը եղաւ լսել նրան հայերէն քարոզը 1885 թ. ամառը Շուշիում հայ-բողոքականների ժողովարանում։

Աւագի որ քարոզ խօսում է ասենն որ, ով ձեռնհաս է և փոքր ի շատէ օտարը շնորհ ունի, այսպէս էր։ Է այժմ Շուշիում և Բաքու այսպէս նաև և ուրիշ դեռ ևս անկարգ փոքր բողոքական խմբեր։ Ի մէջ (Էրևան, Վաղարշապատ, Շուշի Էջմիածնի գաւառի Սամարայ գիւղում, Կարսի նահանգի Ալաշկերտ գիւղում և այլ անուշան տեղերի) Բայց քարոզ ասում են շատ ամ գամ, մանաւանդ գիւղերում, ապէս, ամենամեծ ու նախապաշարեալ մարդիկ ևս — հոգազարծներ, մանրամասնաներ, ուրիշներ կամ ոգածներ, մի կարծէք, թէ ոչ ամենամեծ տրամ են հանդիպում իրանց քարոզչի կոչման։ Հաճելուած են, որ թէպէս ապէս «Ձկնորսներ» են, բայց Քրիստոս ուրիշ է նոցա սուրբոր մարդկանց։

Քարոզչութիւնն հանար «հաւատացեալ» ժողովրդոց շատ անգամ ոչնչութիւն է։ Գայիս և ապրի ապրի միսիոնարներ ու շրջիկ քարոզիչներ — Միսիոնարներ գանազան ընկերութիւնից, մանաւանդ Ամերիկեանք և Բրիտանեանք, գործակալներն են այս ու այն կողմն ուղարկուած իբր թէ հնարանքի և անհաւատների մէջ։ Բրիտանոյ Աւետարանը ապրածելու համար։ Մեր կողմերում նոցա գործա-

նէութեան գլխաւոր կենդրոնն ասիական Տաճկաստանում, Հայաստանում և Պարսկաստանումն են, և արտրդութիւն անում են գլխաւորապէս Հայ և ասորի քրիստոնեաների մէջ։ Պատուելի միսիոներներն երբեմն երբեմն դուրս են գալիս առաքելութեամբ շրջելու և կամ իրանց մատրիսալ ճանապարհը գընալիս՝ այցելում են այս կամ այն հաւատացեալ հօտին և մի քանի անգիր արած մոլեռանդութիւն. ներ սերմանում։—Երջիկ քարոզիչներ ասածդ ըստ մեծի մասին հայկական մարդիկ են, որոնք յաճելով ընդ ծով և ընդ ցամաք՝ գլուխները պահում են գէրմիշների նման։ Այդպիսիներից մէկն է Մաքիսցի պատուելի Գրիգոր Գէորգեան Կարապետեան կամ Ակլկատուգնից, շամախեցիների այժմեան քարոզիչը։ Նա Տաճկաստանի և Պարսկաստանի մէջ զանազան քաղաքներ մտնելով վերջը եկաւ Թուստան և 1881 թ. սկզբում գտնուում էր Ալէքսանդրապոլում. այստեղ երեխ նստուում էր հաստատել իւր մշտական բնակութիւնը, բայց նոյն թուականի ամառը տեղւոյն բողոքականները, որոնց մօտ պատսպարուել էր նա, հալածանքի ենթարկուեցան իրանց բացթողութեան համար, և այնուհետև մեր շրջիկ քարոզիչն ապաստանարան գտաւ Շամախու բողոքականների մէջ իբրև քարոզիչ, ուր նա ստանում է տարեկան 600 ռուբլի ռոճիկ։ 1885 թուին դէպք եղաւ ինձ մի քանի անգամ լսել նորա քարոզները։ Նա խօսում է անտանելի կերպով ազնտած ռուսահայոց և թիւրքահայոց բարբառների խառնուրդով. խօս-

քի մէջ տրամաբանութիւն չը կայ. ընտրած նիւթը չափազանց ձգձգում է, ցրում է. անհամար կրկնութիւններն, անտեղի գոչումներն ու բացագանչութիւններն և վերջապէս խնասակ վարդապետութիւնները բոլորովին յոգնեցնում են ունկնդիր մարդու համբերութիւնը. և սակայն հաւատացեալ հօրը լսում է նորա քարոզները...»

Քարոզութեամբ պարապում են նաև Աստուածաշնչի ընկերութեան գործակալներն և տղայներից նշանակուած ու հրահանգուած գրածախներն։ Վերոյիշեալ բոլոր անձնաւորութիւնք միմեանց հետ սերտ յարաբերութիւն ու հաղորդակցութիւն ունին. պէտք եղած ժամանակ իրար օգնում, իրար խրախուսում ու առաջնորդում և իրարից հրահանգուում են։ Այս մասին մի հասկացողութիւն կազմելու համար յառաջ բերեմ այսպէս հաստատներ երկու նամակներից, որոնց օրինակները դէպք եղաւ ինձ կարդալ Ալէքսանդրապոլ քաղաքում և որոնք 1881 թ. յուլիսին գրել է պ. Աբր. Ամիրխանեանցը մի գրածախի և մի շրջիկ քարոզչի։

«Սիրելի եղբայր Մարգար [1])

Պարոն Մօրիսոնը [2]) եկաւ և նա էլ մի քիչ

---

[1]) Մարգար Յարութիւնեան՝ Աստուածաշնչի ընկերութեան գործակալի յանձնարարութեամբ գրածախ է. մինչև 1882 թ. գտնուում էր Ալէքսանդրապոլում, իսկ այդ թուականին միւս բոլոր քանանների հետ միասին գաղթեց Կարսի մօտ Ղարաղալա գիւղը. տարուան վեց ամիսը պարապում է գրածախութեամբ, վեց ամիսը երկրագործութեամբ։

[2]) Մ. Ա. Մօրիսոն՝ վերոյիշեալ ընկերութեան

քեզանից գանգատ արաւ. ասում էր թէ Մարգարը ճանապարհորդութեան ժամանակ միշտ իրան համար էր մտածում. գիտէր որ ես ընաւ լեզու չը գիտեմ. ինքն իմ լեզուս էր։ բայց ինձ թողում և գնում էր իր ուզած տեղը և իմ ճանապարհորդութիւնս բոլորովին զուր էր անցնում. ես չէի գնացել մարգկանց կերպարանքը տեսնելու, այլ նորանց հետ խօսելու և նորանց մտքերն ու միտքը իմանալու։ Բայց առանց Մարգարի մին քան չէի կարող անել։ Շատ լաւ էք արել մինչև հիմայ ժողովքի գործերը. պարոն Աղապապը [1]) սրխալուած է և պէտք է իր սխալը ուղղէ...

(Ա. Ա.»)

## Պարոն Գրիգոր, շրջիկ քարոզիչ [2])

### Սէրեալ եղբայր Տէր։

Վեց նամակ եմ ստացել քեզանից և սա երրորդն է, որ ես գրում եմ քեզ։ Նամակներիդ մի մեծ մասն ուղարկել եմ Շամախի, որ եղբարք կարդան։ Պարոն խմբին դեռ չէ եկել։ Քո թարգմանիչն է հարաւային Թուրքստանում. առաջ մնում էր Թիֆլիսում. այժմ Օդեսայումն է։

[1]) Աղապապ Շաքարեան՝ Ալէքսանդրապոլու մէջ բողոքականութեան գործի համար աշխատողներից մէկն է. այժմ Նոյնպէս բնակւում է Ղարսում գիւղում։

[2]) Գրիգոր Գէորգեան — Յակոբեան — Ակիկուտուղեանց, Մաքսիմիանի՝ մինոյն շրջիկ քարոզիչն է, որ ներկայումս գտնւում է Շամախում և որի մասին քիչ առաջ ծանօթութիւն տուի փոքր 'ի շատէ։

բիզնեսի բարեկամներդ որ քեզ պիտի հանդարտ-հակցէին դեռ չեն եկել. միայն լսել եմ, որ Շամաչա Գիվիրգիս մի հայու հետ եկել է Շամախի, և այն-տեղ նորան շատ վատ են ընդունել, իմանալով որ մուրացկանութեան է գնում 2 հատ սադաֆ կո-թով զմելի եմ առել Աւետիք Ազատեանին ու-զարկել Ռէվալի բարեկամը սպասում են և խընդ-րում, որ մի նամակ գրես հայերէն իրանց ուղար-կես։ Գիր քո Բաքուից մինչև այսօրուայ անցքե-րըդ ուղարկիր։ Ձեռնադրութեան համար կարելի է այսպէս էլ ասել այնպէս էլ. լաւ կը լինէր այս-տեղ խօսած լինէինք այդ մասին։

Ես Սարգիս վարժապետին գրել էի, որ ինք-քն էլ այդ կողմերի եղբարց հետ նամակագրու-թիւն անէ և դորանց մեր վրայ ունեցած ծուռ գա-ղափարը ցրէ։ Տես ինչ է գրում ինձ. «Ես շատ անգամ սա արել եմ. մեր տունը եկողներին շա-բաթներով ամիսներով պահել եմ, ընկերութեան կասսայից օժանդակութիւն ենք արել. աչքներովը տեսել են, որ ոչ մեր տան և ոչ ժողովարանում պատկեր կայ. հաւատացրել եմ, որ մեր գաղափա-ը ըստ ամենայնի պրոտեստանտի է. միսիոնարներ են եկել, Ղաչաներ, Ղամաչաներ օրերով շաբաթ-ներով մնացել են մեզ մօտ և տեղեկացել են մեր պաշտօնին և մեր համակրութեան առ նոսա։ 'ի հարկէ տրանք միմեանց գրած կը լինին։

«Միթէ Մ. Ցրուտարեանց եղբայրը[1]) քո մօտ

---

[1]) Մարտիրոս Ցրուտարեանց Վաղարշապա-տի մէջ բաղաքականութեան համար աշխատողնե-րից և գործի ղեկավարներից մէկն է. քարոզչու-թիւն էլ է անում։

թիֆլիս ու Բագու ու Շամախի չէր եղել, որ Մ. Քոլին [1]) միամտացնէր մեր կողմից, որ աւելի յարգէին մեր ստոյգ գաղափարը քան թէ վատաբանէին իբր պատկերասէր և զոյափոխադաւանս։ Պ. Ցրատարեանցի վարմունքը, որ իրանց մէջ եղած միսիոնարաց ձեռամբ կատարված վայելքից մեզ չէ հաղորդում, ստիպում է կարծել, որ այդ մարդը տակաւին մեզ չէ ճանաչում և կամ դէպի աւելի նիւթական օժանդակող կողմն է միտում։ Աբիսողոմին [2]) մէկ ամիս պահել եմ մեր տան. բոլոր մեր պաշտօնը տեսել է անձամբ և յանձնել որ հաղորդէ ամեն եղբարց, բայց մեր եղբայրասիրական ջանքը դորանց մօտ 'ի զուր է գնացել. դորանք նման են Ասորիներին, որ միշտ ակնկալութիւն ունին ստանալու քան թէ տալու։

Եւ Սարգիս վարժապետի հետ բոլորովին համաձայն եմ. մեր գաղափարները չեն, որ այդ եղբարց խրատնեցնում են, այլ նիւթական կողմն է, որ դորանք ակնկալում են։ Եւ դա սխալ է. մենք չենք կարող մեր աչքերը բաց բաց փողով այդ տեղի մի քանի առաջնորդներին կշտացնել, որ յետոյ դորանք իրանց հետևողներին ուրիշ ընթացք

---

[1]) Միստր Քոլ՝ կարնոյ բողոքականաց մէջ գործող Ամերիկացի միսիոնար է և բնակւում է այնտեղ։

[2]) Աբիսողոմը երիտասարդ ոմն է, Ալէքսանդրապօլու մօտիկ Ղուլինիղչլաղ գիւղից. սա էլ երբեմն մօտիկ տեղերը շրջում էր և ձեռնտու ժամանակները քարոզչութիւն էլ էր անում։

տան։ Մենք կը խօսենք ուղիղը և ճշմարիտը. եթէ այդ կողմերի եղբարց փափագը Գրիգորոսի թագաւորութիւնն է. միասին կը գործեն և կ'աշխատեն մեզ հետ. իսկ եթէ փոդ ու պատիւ են ուզում և ակնկալութիւն ունին, մենք այդպիսի բան ոչ ունինք, ոչ գիտենք ոչ էլ միտք ունինք իմանալու (?!) Մխիթարը ուզում են հաւատացնել, որ առաքելական սկզբունքով են գործում. մեր առ փոդը միջիցը. և յետոյ կը տեսնես գործերը փոդապետութիւն է։ Լաւ հասկաց. ես չեմ ասում գործոց քարոզածը, որ ճշմարիտ է և մենք ասելիք չ'ունինք, այդ գործոց իշխելը եկեղեցուց վերայ որ փոդով է լինում, և դա ես կոչում եմ արծաթասիրութիւն։ Ամեն տեղ սիրով բարեւիր։

(Գր. Ա. Ա.)

---

## ԻԱ.

*Շամախու բողոքականների ներկայ կացութիւնը.— Պատարագ.— Ասումնարան — Ասանողներ.— Բարոյական փոփոխութիւն. — Հասարակական յարաբերութիւնք։*

—

Մինչ այժմ պատմածներիցս ընթերցողը տեսաւ, թէ ինչպէս բողոքականութիւնը հաստատուեցաւ Շամախում և մի քանի շրջակայ տեղերում. տեսաւ թէ ինչպէս հայ բողոքական հասարակութիւնն այդտեղ գաղութեցաւ Հայոց եկեղեցուց և մասաւ Աստուածաբանական-Լուսերական եկեղեցու ծոցը։ Այժմ մի քանի խօսք էլ համառօտակի այդ հասարակութեան ներկայ կառավարութեան վրա-

յոր։—Կրոնապէս նա կառավարվում է ինչպէս Աւետարանական-Լուտերական եկեղեցուն պատկանող որևէ այլ հասարակութիւն, ըստ ամենայնի ենթակայ Ռուսաստանի մէջ նոցա համար սահմանած օրէնքներին։ Նոցա ծայրագոյն հոգևոր իշխանութիւնն է Մոսկվայի Աւետ.—Լուտ. կենտրոնական, իսկ իշխանաւորը՝ գոյն այդ կենտրոնական գեներալ սուպեր-ինտենդենտը։ Հօտը հովում է Բաքուի մէջ բնակուող գերմանացի պաստորն, որ իւր օրինակաւորութեանց համար Շամախու միաբանութիւնից ստանում է տարեկան 500 ռ. ռոճիկ։ Վերջին ժամանակներս ոմանց մէջ միտք է յղացեր հարկաւոր միջոցներով աշխատել իրանց միաբանութիւնը բաժանել գերմանական հոգևոր իշխանութեան տնօրութիւնից և կազմել առանձին հայ-աւետարանական վարչութիւն, ինչպէս որ վերջին ժամանակներս մի քանի տեղերում հայ-կաթոլիկ հասարակութիւնը ցանկութիւն էին յայտնում անջատուիլ Սարատովի լատին եպիսկոպոսի տնօրութիւնից և կազմել առանձին հայ-կաթոլիկ վարչութիւն Ռուսաստանի մէջ։ Չը գիտեմ այս վերջիններիս որչափ յաջողեցաւ և առաջիններին էլ որչափ պիտի յաջողի։ Վերոյիշեալ միտքը դեռ ևս չէ ընդհանրացել հայ-լուտերականների մէջ և դեռ ևս ոչինչ ինդիր օրինական կարգով չէ ուղարկուել պատկանաւոր տեղը։

Ռուսմեարանը փոքր տարրական ուսումնարան է և գտնվում է Կոմկաստ Ռուսական Երջանի հոգաբարձուի տեսչութեան տակ։ Փոքրիկ

օրիորդներին տղայոց հետ միասին դաս է տալիս պ. Լ. Ղարախանեանցը, ստանալով տարեկան 480 ռուբլի։ Մեծահասակ օրիորդներին դաս է տալիս Սարգիս վարժապետը. սորա ռոճիկը տարեկան 400 ռուբլի է։ Մեծահասակ տղաները իրանց կրօնական պատրաստութիւնը դարձեալ այդ ուսումնարանումն են ստանում. բայց ընդհանուր զարգացման համար նոքա մանում են տեղական Բազաքային ուսումնարանը, ուր տեսուչ է պ. Լմ. Փիրբուդաղեանց, միաբանութեան «սիւներից» մինը։

Միաբանութիւնը ներկայումս Բազէլեան ճեմարանում պատրաստուող մի երիտասարդ ունի միայն, որի ապրուստը մասամբ իւր հայրն է հոգում, մասամբ Բազէլեան ընկերութիւնը։ Սակայն ուրիշ ուսանող երիտասարդներ ևս ունին թէ արտասահմանում և թէ Ռուսաստանում. սոքա ի հարկէ միաբանութեան հետ ոչինչ պայմաններով կապուած չեն։

Թէ բարձր և թէ միջնակարգ ուսումնարաններում այժմ սովորողների մէջ հազիւ գտնուի մէկը, որ նորահաստատին յատուկ մոլեռանդութիւնը ունենայ. բայց և այնպէս սոցա յարաբերութիւնը բուն հայերի հետ շատ չէ, ըստ որում իրանց մեծերին այդ հաճելի չէ ամենևին։ Միտս է, որ վերջին տարիներս նոցանից ոմանց արգելեցին «միաբանութեան սիւները» Լուսաւորչական երիտասարդների հետ թատրոնական ներկայացմանց մասնակցել, կամենալով իբր թէ անհաղորդ պա-

հել նոցա սովորական կենցաղոյս պիտանիից տեսարաններից։ Եւ սակայն ոչ միայն ներկայ սերնդի, այլ և նորահաւատութեան եռանդը կորուսած հների մէջ՝ էլ չի ծածկուում այժմս անկումն բարոյականութեան, որը թէև ուրիշ ժամանակ էլ երբէք չի պահուել մեր աւետարանականների կողմից աւետարանական մաքրութեամբ, բայց ներկայումս առաւելագոյն գեղծմանց է ենթարկուում կեանքի առօրեայ երևոյթների մէջ։ Ինչ կը վերաբերի կրօնական համոզմանց, չեմ կարծում թէ այդ մասի մէջ էլ նախկին յամառութիւնը մնացած լինի։ Ինձ դէպք եղաւ ծանօթանալ նորերից մէկի կրօնական հայեացքներին։ Նա բողոքականի համոզումներ չ'ունէր, բայց մի կարծէք թէ ուրեմն Լուսաւորչականի հաւատ ունէր . . .»

Հասարակական յարաբերութեանց մէջ հայ-բողոքականներն ու հայ-լուսաւորչականները բաւականին հաշտուած են այժմ, բայց գարձեալ ներքին հարազատութիւն ու արենակցութեան զգացումն չը կայ։ Ընտանեկան ուրախութեան և տրտմութեան դէպքերի փոխադարձաբար մասնակցում են յաճախ, սակայն ոչ մէկ բողոքականի երբէք չէք տեսնիլ Հայոց եկեղեցում, այն ինչ բազմաթիւ լուսաւորչականների միշտ կը տեսնէք բողոքականների ժողովարանում։ Սրբա գնում են քարոզ լսելու...»

Այսքանս համառօտակի բաւական եմ համարում Շամախու հայ-բողոքականների ներկայի մա-

սին. որանից աւելին իմ ընտրած նիւթիս սահմանից դուրս կը լինէր։ Եւ առհասարակ այստեղ վերջացնելով խօսքս բողոքականութեան գործի մասին Շամախում՝ կ'աշխատեմ մի քանի համառօտ տեղեկութիւններ էլ տալ ուրիշ տեղերում եղեւեցած բողոքականութեան մասին։ որչափ որ ինձ յայտնի են նոքա։

## ԻԲ.

Բողոքականութեան սկիզբն Վաղարշապատում.— Մի ձեռագիր տետրակի մասին.— Հեղինակի նախադասութիւնը։ — Մարտիրոս «եղբօր» մշակութիւնը։— Յուզումն և հարցափորձ 1864 թուականին.—Կնոջ զղջումն և մեղայական.— «Սուրբ հրդեհի բորբոքումն». Նոր յուզմունք։ — Բողոքականաց ջանքերն ազատ լինելու։ — Մկրտութեան և թաղման առթիւ դէպքեր։

—

Ռուսից Հայոց մէջ տարածուած բողոքականութեան կենտրոնը ներկայումս Շամախին է։ բայց փոքր-փոքր խմբերով և տակաւին վարչական կազմակերպութիւն չունեցող բողոքական հայեր կան ուրիշ զանազան տեղերում էլ։ սոցանից նշանաւորներն են Վաղարշապատը, որտեղ մօտիկ Սամարայ գիւղը, Ալէքսանդրապոլը և Կարսի նահանգում Ղարաղալա գիւղը։ Կարող եմ ասել, թէ այս ամէն տեղերումն էլ բողոքականութիւնը յառաջացել է նոյն ճանապարհներով և նոյնպիսի երևոյթներով, ինչպէս և Շամախում. ուստի և այդ

անդերի մասին առանձին ուշադրութեան արժանի չատ բան չը կայ պատմելու. այսու ամենայնիւ անհոգուտ չի լինիլ փոքր ի չատէ ծանօթանալ և գոցա հետ։

Սկսենք Վաղարշապատից. որովհետև հնագիտներն առաջ առաջ այստեղ են ճանաչել «լուսոյ համբաւոյ» Տեղեկութիւններիս մեծ մասը քաղել եմ մի ձեռագիր տետրակից, որը բարեկամներիցս մէկի շնորհիւ ձեռքս անցաւ՝ ներկայ գրուածքիս համար նիւթեր որոնելու ժամանակ։ Ցիշեալ տետրակի մէջ պատմուած է և Վաղարշապատում բողոքականութեան տարածման հանգամանքները։ Շատ տեղ գործածած գարձուածներից երևում է, որ նորա հեղինակը Վաղարշապատցի բողոքական պ. Մար. Ցրատատարեանցն է, բայց որովհետև նա գրուած է արևմտեան Հայոց բարբառով՝ կարելի է կարծել թէ յիշեալ Ցրատատարեանցի պատմութեամբ գրել է Ցաճկատառանցի քարոզիչներից մինը, թերևս շրջիկ քարոզիչ պ. Գրիգոր Գէորգեանը որ 1881—2 թուականներին գործում էր Վաղարշապատում։ Ով և է հեղինակը՝ տետրակի մէջ նա ցոյց է տուել անհաշտ հոգի դէպի Հայոց եկեղեցին և գանհիկ ատելութիւն թէպէտև այս տետրակն անհմուտ և յաճախ իմաստակութիւններով լի մի աշխատութիւն է, այսու ամենայնիւ մէջը պարունակում է մեզ համար կարևոր տեղեկութիւններ ևս, որոնք ըստ պատշաճին յառաջ եմ բերում այն այսուհետև։

— Տետրակի խորագիրն է «Աբուբ Բանդրիլ»։

դորանից յետոյ գրած է Աւետարանից հետեւեալ հատուածը. «Բնաւ մի վախնար ան բաներէն, որ պիտի կրես. ահա բանտարկուն ձեզմէ մէկ քանիները բանտը պիտի ձգէ, որ փորձուիք, և տասը օր նեղութիւն պիտի ունենաք. մինչև ի մահ հաւատարիմ եղիր, ու քեզի կենաց պսակը պիտի տամ» (Յայտ. Բ. 10)։ Յետոյ գալիս է նախապատնուիրելը, որ հեղինակի բուն բառերով և ուղղագրութեամբ այսպէս է ասուում։

«Որովհետև բոլոր աշխարհիս ծիսական քրիստոնեայք նայելու էին Հռովմայ պապին, և հպատակուելու էին անոր, վասն որոյ իրենց կրօնները ըստ մեծի մասին նոյն բարիքներն և նեռին յարելու կը պարտաւորուէին իրենց կրօնական և քաղաքական վարչութի սահմանադրութեանցը համար, և նոյն նեռն ճշմարիտ քրիստոնէութեան պարզ և յստակ գետին մէջ անանկ թիւն խառնած էր, որ խմողքն անշուշտ յաւիտենական մահուան կը ենթարկուէին։ Ինչպէս Եւրոպան և գերմանիան շինիայակապ կու գային բռնաւոր նեռին ոտքերուն տակի ջուրեն կը խմէին, Սակայն նախախնամողն Աստուած՝ Սաքսոնիայէն մէկ ընտիր մշակ մը պատրաստեց որ իրեն ձեռքին մէջ գործածէ և մոլորեալ հոտն անոր ձեռքովն Աւետարանին ճշմարտութեան մաքուր գետեն առաջնորդուին որ յաւիտեան Աստուծոյ բանին հետ ապրին։ բայց և այնպէս նոյն վարչութի թիւնաւորուած գետին ճիւղերը, ինչպէս տակաւին մասնաւոր եկեղեցիներ կոչուին, նոյնպէս ալ ան ճիւղերէն մէկ

փրփրալի գետ մալ Հայաստանին Արարատ կետրոնին մէջը կը ռռոդէ, և թէպէտ այս դարուս մէջ շատ անհատ անձինքներ իրենց մահաբեր հրանգութիւններն կը զդան, սակայն երկրորդ նեռէն կը սարսին, բայց այսու ամենայնիւ՝ Աստուծոյ մեծ գործը երբէք չի դադարիր։ Սաքսոնիայի Վիտոնբուրկ քաղաքին համար Օգոստինեան միաբանութենէն աղքատիկ հանգաբանին տղան նոյն երկրին բարեկարգութեանը համար արթնցնող Աստուածը՝ Հայաստանի մէջն ալ կը գործէ։ այս ակար և ցածազգի մարդոց ձեռքով։ Այս բարձր Արարատ լեռան նահանգին մէջն է Հայաստանի վաղարշապատ թագաւորանիստ քաղաքը։ Որանից յետոյ հեղինակը Էջմիածնի վանքի, վեհարանի և կաթուղիկոսի՝ եկեղեցի իջնելու ու ելնելու նկարագիրներ է անում, վերջացնելով այսպէս. «ալ բաւական է սա Էջմիածնական կամ կաթուղիկոսական նախապաշարուած ծիսական արարողութեանցը և գրութեանցը վրայ ժամանակնիս վատնենքը։

Պատմութիւնն այսպէս է սկսում տետրակի մէջ.— «1850 ին 'ի ժամանակի կաթուղիկոսութեան Յ. Ներսէսի և 'ի կայսերութեան Բուսիյոյ Ա. Նիկոլայի, տաճկաստանցի մէկ Հայոց վարդապետ գաղթուած Էջմիածնայ միաբանաց կարգը անցաւ [1]։ սա մարդը թէպէտ տեղեակ էր

[1]) Այս վարդապետն մասին տետրակի մի ուրիշ տեղում ասուած է, իբր թէ սա էր ոմն Ցարօնեցի Ղազար վարդապետ, որ Ներսէս կաթուղիկոսի ժամանակը փախել էր Ցաճկաստան և

փրքը ի շատ ուեստրանական վարդապետութեան, բայց բոլորովին յամառուած էր կաթոլիկական մոլորութեանց. սակայն գիտութեան մասին շատ յառաջադիմէր. իր ճամբորդութեան առնելը Կալկաթայէն մէկ ուեստրական քրիստոնական վարդապետութեան գիրքը բերած էր և որովհետև Վաղարշապատաբնակ Մարտիրոսն վրատոհ էր առ Ներսէս միաբանին հետ ուստի երբեմն երբեմն ժամանակ կանցնէր ատոր քով մինչև որ փրքը ի շատ ազնիկ տեղեկութիւն ունեցաւ ուեստրական ճշմարիտ կրօնքին վերայ. և վարդապետը որ շինութենց Էջմիածնայ միաբանից հետ, Մարտիրոս եղբայրը ալ ուրիշ առնուն պէս երթեւեկութիւն չրաւ վարդապետին քով, բայց այսու ամենայնիւ Նախախնամութեան ձեռքը որ ամեն օր կը գործէ, առ միաբանին ձեռքէն ան ազնիւ տղանդը առնելով դրաւ 2 աղքատիկ մարդոց որոնց գանձարանը որոնք էին Սարգիս և Մարտիրոս. թէպէտ Սարգիսը երկչոտ էր բայց պատճառը ան չէր որ թաքուտա և ծածուկ կը մնար ուեստրանին գործը, հապա պատճառը ան էր որ Նիկոլայ Կայսրին դեմ կուգար այս կրոնքը Բուսաստան մտնել. ուստի ամենագուշութեամբ լռութեամբ պահուած էր 4 անձանց մէջ. 1851-ին Սարգիս եղբայրը դեպի Պոլիս գը նաց վասն ուեստրականութեան ուսանելուն ու

---

առաջ եղել էր Սինոդի անդամ. Գուցէ առ եղած լինի յայտնի «Գեղաս Ղազար վարդապետ» անուանուածը։

բերաւ։ Սուրբ մատեանները բնագրէն թարգմանած, քրիստոնեական վարդապետութեան գիրքեր և զանազան տեսակներ աւետարանական վարդապետութեանց. աս միջոցներով՝ ցոբեկ կամ գիշեր աւելն ծածկարար ժողովք կլլար։ և որոշեան մերիններէն ուխտաւորութիւն՝ զոհ մատաղութիւն՝ պատարագաց և մեռելի գերեզման օրհնելէն և այլն առանց բաներէն հեռու էին. վասն որոյ ասոնք անտիկն զանազաններ եղան՝ նախատիներներ հայհոյութիւններ և վատ անուններ էր որ մեզի կենէին. սակայն աւետարանին հրդեհը տեղ տեղ կը բռնէր. Աղէքսանդրապոլ քաղաքն ալ ունեցանք մեզմէ համոզուած 4 եղբայր։ 1857-ին մեռաւ կոյր Շերին մականուանեալ եղբայրը և 1860-ին 1 յունվարի վերը յիշուած Սարգիս եղբայրը։ 1857-ին այցելութեան գացի Սամարար գիւղը նոր և անծանօթ փեսայիս հետ ծանոթութիւն ընելու։ այս Սամարար գիւղը մէկ ու կէս մղոն ճամբայ հեռու է Վաղարշապատէն գեղի արևմուտք։ և որոշեան այս բարեկամիս ընթերցասէր ըլալը գիտէի և բուն անոր փրայ ճանապարհին կը մտնայի թէ արդեօք Տէրը ինձի պիտի օգնէր որ աս մարդուն գեղի լուսոյ ճամբան համոզեմ...։ Ցեռոյ պատմելով, որ ինքը տեղ հասաւ և փեսայի տանը սչատ մարդասիրութիւններ ցուցին իրան՝ ասում է. «երբ որ սուրբ գրոց վկայութեանքը աւելորդապաշտութիւնները և ծիսականութեան ունայնութիւնները ջրուեց, աս տեղը մարդը ամչցաւ ու բորբոքուեցաւ սուրբ գրոց հե-

տեսանելը, և այս մարդուն տաղանդը օրէ օր կաւելնար և շատերին ալ դեպի լուսոյ ճամբան բերաւ։ 1856-ին Նիկոլայ կայսրը մեռաւ։ բայց դեռ ևս խղճմտանքի ազատութեան լուրը չըկար Ռուսիայի մէջ, ուստի Մատթէոս կաթուղիկոսն (որ երբեմն պատրիարգ էր Կ. Պոլիս) իր շար յամառութիւնը գործ կը դներ բարեկարգութիւնը խանգարելու համար, ինչպէս որ Կ. Պոլսոյ աւետարանական եկեղեցոյ տեսարակին առաջարանութիւնը։

Տեսարակի շարունակութիւնից երևում է ապա, որ 1864 թ. Վաղարշապատի մէջ Մարտիրոսի (Ցրտատարեանցի) խմբակն, որ այդ ժամանակ կազմուած էր 10 տղամարդից իրանց գերդաստաններով ենթարկուեցաւ խուզարկութեան ու քննութեան տեղւոյն շորս քահանաների և ժողովրդի ներկայացուցչաց կողմից. մոլորուածների կողմից պատասխանում էր Մ. Ցրտատարեանց, որ և բացայայտ ցոյց տուաւ իրանց հնատեալ լինելը Հայոց եկեղեցու դաւանութիւնից։ Ժողովուրդը չափազանց զայրացած էր. բայց ամենայն խռովութիւն հանդարտեցուցին, մինչև որ Վենատիկ կաթուղիկոսը Թիֆլիսից գայ, ուր այդ ժամանակ գտանում էր նա։ Նոյն թուի օգոստոս ամսին Մատթէոս կաթուղիկոսը դարձաւ Թիֆլիսից։ Մի քանի օրից յետոյ նորահաւատների շորս ներկայացուցիչները կանչուեցան 'ի ներկայութիւն Վե-

հափառի. ուր ներկայ էին նաև Ղուկաս արքեպիսկոպոսն և Սարգիս արքեպիսկոպոսն Ջաղաղեանց։ Այսուհետև նոքա իրարք իրանց մեղաւոր ճանաչեցին և սաստագրութիւն տուին այլ ևս մոլորութեան չհետևիլ։ Ցնարակի հեղինակն ասում է. «Կաթուղիկոսը իրեն կանչելով զմեզ ամեն մէկիս զոյք զոյք նախապաշարեալ դիրքեր ընծայեց, օրհնեց զմեզ՝ ու արձակեց։ Բայց այնու ամենայնիւ, երբեք չը թուլացաւ մեր աւետարանական ընկերութիւնը, հապա՝ այս սուրբ հրդեհը օր ըստ օրէ կը բորբոքեր...» Ուրեմն վերոյիշեալ մեղայականը կեղծաւորութեամբ ու խաբդախութեամբ եղաւ։ Մինչ կաթուղիկոսն և այլք կարծում էին թէ գայթակղուածները դարձի եկան՝ նոքա ծածկապէս աշխատում էին իրանց թիւը շատացնել։ Ցանկաստանից նոցա մօտ գալիս էին աւետարանական այցելուներ և մխիթարում էին նոցա ու զօրացնում. այդպիսիներից մէկն էր և Կարնեցի Համբարձումն Պալլասեանցը։ Նոցա մօտ եկաւ հիւրասիրուելու մինչև անգամ Պարսկաստանցի մի Ատրի աւետարանական թամբաղ անունով, և «մէկ տարիի չափ, պատմում է տեսարակը, մեր մէջը կեցաւ՝ ծածկարար Աստուծոյ գործին համար կը պարապեր» թէ Վաղարշապատում թէ Սամադար գիւղում հեղինակը չի ասում թէ քանի կը պարապէին այդ միջոցին Էջմիածնի սուրբ հարք...։ Եկաւ այստեղ քարոզելու աւետարանական Ատրի Մոմսէս ծերունին ևս։ Թէ սա, թէ միւս ատրին տաճկերէն էին քարոզում

1867 թուականին բողոքականութիւնը Վաղարշապատից անցաւ և Երևան, ուր այդ ժամանակ դեռ ևս երկու եղբայրներ և երկու քոյրեր կային. այսպէս օրստօրէ Լութերի աշակերտների թիւը մեծանում էր Լուսաւորչի աթոռի շուրջը, այնպէս որ 1871 թուի փետրուարին մի կիրակի օր տեսրակի ասելով՝ աժողովքի առնն 80 արու անդամք հաւաքուած էին, քանի որ Մարտիրոս եղբայրը Կաթուղիկոսին պալատը կը քննուէր։ Եւ այդ խնդն գայթակղուած մարդկանց ուղղութեան բերելու համար բաւական էին համարում միայն հարցուփորձի առնաններ, թոյլ յորդորներ, սպառնալիքներ և այլն, ինչպէս Մատթէոս Նոյնպէս և Գէորգ Կաթուղիկոսների օրով. իսկ տեղական Հայ ժողովուրդը գայրոյթից ասասմներն էր միայն կրճատացնում, երբեմն երբեմն հալածում էր գայթակղութեան անխոնջ սերմանողներին և . . . ուրիշ ոչինչ։ Քաղաքային իշխանութիւնը նոյնպէս զանազան միջոցներ էր գործ դնում, որ արգելէ բողոքականութեան զօրացումն։

Ամենայն տեսակ հետամտութիւններից զերծ լինելու համար Վաղարշապատու բողոքականք, աչքի առաջ ունելով Շամախեցւոց օրինակն և քաջալերուելով իրանց ծածուկ հրահանգիչներից՝ 1871 թուին որոշեցին դիմել կառավարութեան և առանձին բողոքական հասարակութիւն ճանաչուելու իրաւունք խնդրել. սորա համար դիմեցին Կովկասում գտնուող Աւետարանական-Լուտերական եկեղեցիների վերատեսուչ պատուոր Ֆոն-Լիւ-

զեղումն, որ բնակումէր Թիֆլիսում։ Պատօրը նոցա խնդիրը թարգմանեց և ներկայացրեց փոխարքայի գլխաւոր կառավարութեանը, և այս մասին իսկոյն հեռագրելով խնդրարկուներին՝ քաջալերեց նոցա, յուսադրեց և իւր օգնութիւնը խոստացաւ։ Երբ որ այս բանի լուրը տարածուեցաւ՝ հանգուցեալ Գէորգ Կաթուղիկոսի եպիսկոպոսն, Սրբազան Վահրամ Մանկունի, Վաղարշապատցի ա. Ստ. Աստուածածնի միջնորդութեամբ բերել տուաւ նոցա իւր մօտ, որպէս զի համոզէ նոցա իրանց արածի վերայ զղջալու և Կաթուղիկոսի օրհնութիւնն առնելու։ սակայն ոչ Սրբազանի վարած կրօնական վիճաբանութիւնն և ոչ այլ յորդորներն արդիւնք չունեցան, և «եղբայրները» դուրս եկան Մանկունու սենեկից միմեանց սիրտ տալով և միմեանց հաւատքի հաստատութիւնը գովելով։ Սրանից յետոյ Վաղարշապատցուց առելութիւնը քանի գնում մեծանումէր դէպի իրանց հետեալ դրացիները։ Վերջինքս չարունակեցին խնդիրներ տալ կառավարութեան զանազան առեաններին՝ Հայ եկեղեցուց բաժանուելու համար, բայց բաւականութիւն չստացան։ Զանազան քարոզիչներ, այցելուներ, հեռաւոր ու մօտաւոր օգնականներն ու խրատիչներն էլ չը կարողացան իրանց խոստումները կատարել։ Վերջապէս, տեսում է տեսարակի հեղինակը, մոռացելք և տեսանք, որ Ամերիկացոցմէ և Անկղիացոցմէ մեզի ազատութեան օգնութիւնը անկարելի է։ ուստի 1875-ին օգոստոսին առանձին առանձին աղեր-

սագրութիւններ ուղարկեցինք Մեծ Իշխան Փոխարքային Կովկասու սուրհանդակով, ի քաղաքն Թիֆլիս, և մէկ մէկ աղերսագիր ալ փաստոր Հիւզմանին։ Բայց Փոխարքայն պատասխանեց թէ՝ դուք արտաքին ազդեցութենէ է որ կը շեղուիք Գրիգորական եկեղեցիէն, և ոչ թէ ներքին համոզմամբ։

Սակայն պաստոր Հիւզիմանն շտապեց եկաւ Վաղարշապատ, որ ծանօթանայ մեր հօտին վիճակին և շատ ուրախացաւ, երբ տեսաւ սրբակարգեալ և պատրաստ ընկերութիւնը. ամենքին սիրաշահեց, քաջալերեց, մխիթարեց, քարոզեց և պատրաստուեցաւ, որ գնայ նոյն մխիթարութիւնն ու քաջալերութիւնը տայ Ալեքսանդրապոլի և սորան մօտիկ Ղուլիճան գիւղի սեղրայրներին։ Երբ Հիւզիմանը գնալու վրայ էր՝ Վաղարշապատի և Սամաղարի եղբարք խնդրեցին, որ իրանց անկընունք երեխաները մկրտէ. բայց նա պատասխանեց, որ դորա համար ինքն իրաւունք չ'ունի, ըստ որում գնա ես նոքա պաշտօնապէս չեն ճանաչուել իբրև լուտերական հասարակութիւն. միայն խորհուրդ տուաւ. որ իրանց միջից ընտրեն մէկ սրանագէտ մարդ, որ այդ սրբազան պաշտօնները մատակարարէ. և երբ, ասաց, լիակատար ազատութիւն ստանաք՝ և ազատ եկեղեցի կազմուիք, ան ատենք ձեռնադրուած հովիւ ալ կունենաք՝ և հաստատ ժողովարան և ուսումնարան ալ։ Ասաց ժիր հովիւը՝ և թռաւ ի խնդիր այլոց եկամտից։

Ներահաւատ եղբայրները մտածելով, որ և-

թէ տղայք առանց մկրտելու թողուն՝ մեծ գայթակղութիւն կլլայ, ոչ թէ միայն տկար եղողները յետ կը սահին, այլ թէ դրսիններէն դէպի իրենց յարելու անկարող կլլար։ Մարտիրոս եղբօրը մկրտիչ ընտրեցին, որ և մի քանի օրից յետոյ մկրտեց շորս Սամաղարցի և մէկ Վաղարշապատցի երեխայք։ Այսպիսի անօրինակ արարմունքի պատճառով ոչ միայն բողոքականք նոր հալածման ենթարկուեցան, այլ և Մ. Ցրատարեանցը դատի տակ ձգուեցաւ իբրև անկոչ և ինքնագլուխ հովիւ։ Գործը հասաւ Երևանու նահանգական դատարանը։ Այստեղ գործի ամերջաբանութիւնը այս եղաւ թէ՝ Մարտիրոս Ցրատարեանցը այդ բանի համար արդար է՝ և ազատ է իւր տուգանքից՝ որ էր 50 ռուբլի։ (.՞.՛)։

Այս անցքից յետոյ Վաղարշապատում էլ ծագեցաւ գերեզմանատան ու մեռելաթաղի խնդիրը, մինչև որ վերջապէս թոյլ տրուեցաւ բողոքականներին թաղել իրանց ննջեցեալները Հայոց գերեզմանատան մօտ մի որոշ տեղում։

Այժմս Վաղարշապատի, Սամաղարի և Երևանի բողոքականների գործը դեռ մնում է անորոշ. նորա օրէնքով ճանաչուած բողոքական հասարակութիւն դեռ չեն կազմում, թէպէտ իրանք իրանց մէջ բողոքականի պաշտամունք ունին և նոցա յաճախ յաճախ այցելում են զանազան քարոզիչներ ու հրահանգիչներ։

## ԻԳ.

Բողոքականութիւնն Ալէքսանդրապոլում. — Աշոչ Մայիլի վկայութիւնները. — Ցուցմունք 1860 թ. — Յայտնի մեղայական և ծածուկ գործունէութիւն, — Անկարգ յարձակումն բողոքականաց վերայ. — Ոմանց բողոքականաց չոմիլը. — Ղարաղալա գիւղի անաւրէնչ հատը. — Արբ. Ամիրխանեանցի գործունէութիւնը.

—

Մի քանի տեղեկութիւններ էլ Ալէքսանդրապոլում յառաջացած հայ-բողոքականութեան մասին.

Ալէքսանդրապոլում բողոքականութիւնն սկիզբն է առել յիսնական թուականներին կոյր աշոչ Շիրինից, որ իրրև երգիչ յաճախ գալիս էր այստեղ թէ դրամ թէ աշակերտ ստանալու իսկ սա ինքն, ինչպէս ասեցինք, Ղազարշապատում «Պարտիրոս եղբօր» խմբակիցն ու գործակիցը էր. Ալէքսանդրապոլում նորա հետևողներից առաջինն եղաւ մի ոմն Գալուստ Սարգսեան Պարտիզպան, որ միևնոյն ժամանակ աշոչութիւն էր անում. ինչպէս Յրատարակչանցը Ղազարշապատում, այնպէս էլ սա այստեղ ծածուկ «Տիրոջ այգու» ցանքի համար էր աշխատում. ինքը Սարգսեանն՝ աշոչ Մայիլ մականուանեալ՝ իւր մի երկար աշոչական ոտանաւորի մէջ ասում է.

«Գալով ես պարտիզպան գործէի երկիր,
Խօսակցութեան միջոցով լինէի խնդիր.
Շարունակ եղբայրներ գտայ ժիրաժիր.
Մեր իրար տեսնելը էր մխիթարանք.

Ըստ տեղին ոմանց հետ վիճաբանէինք,
Գատն աւետարանի կը պաշտպանէինք.
Թէպէտ կանարգէին, բայց կը տանէինք,
Հանեցին մեր վերայ քիչ քիչ բամբասանք։

Քրիստոնէական վարդապետութիւն (Լուտերի),
Գոանք և կառնէինք հետազօտութիւն,
Կը վախենայինք, սակայն միամտութիւն
Ունենալով չը գիտէինք թէ կուգայ փորձանք։
և այլն.

Այսպէս անա՞երգիչ Մարիլը «ժիրամիր» աշխատելով հետզհետէ աւելացրեց եղբայրների թիւը հասարակութեան առջին դասակարգից։ Սրբազան սկզբներում դեռ ծածուկ քաշքաշուելով հաւաքւումէին իրար մօտ, կարդումէին Լուտերի քրիստոնէականը. Զմիւռնիայում Կուլիէլմոս Կրիֆֆիթի տպարանում տպած աշխարհարար զանազան գրքեր՝ բողոքականների հրատարակած, ի թիւս որոյ և Աստուածաշունչը։ Դէպք և յարմարութիւն եղած տեղն եղբայրներից իւրաքանչիւրն աշխատում էր նոր եղբայր գրաւել։ Այսպէս շարունակուեցաւ գործը մինչև որ 1860 թ. ապրիլ ամսին Ալէքսանդրապոլ քաղաքի ժողովրդից մի խումբ մարդիկ, գլխաւորապէս արհեստապետներ, գնացին առաջնորդական փոխանորդ Վարդան եպիսկոպոսի մօտ և պահանջեցին, որ գայթակղութեան առաջն առնէ և հոգ տանէ, որ բողոքական ճանաչուած անձինք պատժուին, որպէս զի ուրիշ-

ներին էլ չը խմբեին։ Գողոմբին հանդարտեցնելու համար Վարդան Արարատանը հարկաւոր կարգադրութիւնն արաւ, և բողոքականութեան յարեալները բանտարկուեցան մինչև որ գործը քննուի։ Քննութիւնն եղաւ Հայոց հոգևոր կառավարութեան առնեում, ուր ոստիկանապետի կողմից իբրև դեղուտաս ներկայ էր լինում թաղի վերակացու (кварт. надзиратель) Տէր-Անտոնին։ Քննութեան ենթարկուողները քսան հոգի էին, որոնցից երկուսը կանայք։ Սոցանից ոմանք աւելի՝ ոմանք պակաս յանձն առան իրանց յանցանքը բողոքական վարդապետութեանց յարելու մէջ և վերջ ի վերջոյ ամենքն էլ մեղայական տալով ազատ համարուեցան։ Եպիսկոպոսն այրել տուաւ նոցա ձեռքը դտնուած բոլոր գրքերը։ յետոյ յանձնարարեց չորս քահանաների, որ նոցա վերայ հսկեն և խրատեն, որոնք և կարճ ժամանակից յետոյ յայտնեցին հոգ. կառավարութեանն, որ այլ ևս ոչինչ մոլորական չեն նշմարում նոցա վերայ։ Գողոմբի յուզմունքն, որ շատ մեծ էր, այնպէս որ վեց արհեստապետներ իրանք էին յանձն առնում տալ բանտարկուողների անունդը, վերոյիշեալ կարգադրութեամբ հանդարտուեցաւ։

Սակայն այստեղ էլ ինչպէս և Վաղարշապատում բողոքականութեան գործը չը մարեցաւ խաղաղ։ ընդհակառակն միևնոյն անձինք, որք ըստ երևութին զղջացին, մեղայ եկան և որոնց վերայ «այլ ևս ոչինչ չէր նշմարվում» — Գալուստ Արգսեան, Աղապապ Շաքարեան, Աւետիս Կիրակոս-

եան, Թ. Թադէոս մն. Յովհաննիսեան (աշրգ Հաւէսի), Էլբաց Այվազեան և այլք—նորէն շարունակեցին «Ցիրոջ այգին» մշակել։ Քաջալերողներ, օգնողներ, հրահանգիչներ՝ այստեղ էլ չը պակասեցան։ Մալիշն ասում է իւր վերոյիշեալ երգի մէջ։

«Խնդրեցինք գերծանել ըստ հրամանին,
Այսինքն աթոռին ծանուցուած բանին,
Այժ դէմ գործեցինք աւետարանին,
(այսինքն որ մեզայական տուինք)...,
Կը խոստովանիմ, որ արինք սխալանք...։

Զգացինք չեմ մոռնար սրգալիր անկում,
Բայց Տէրը յաւիտեան չթողաւ տրտում։
Նորէն գիրք գտնելով էինք նորոգվում։
Կանէինք ժողով ու աղօթք աղաչանք։

Կուգային տեսութեան մեզ բարեկամներ
(Ղրղրումից)
Խօսելու կազդուրիչ բարի պատգամներ,
Ունելով ճշմարիտ սիրոյ խնամներ,

Կարդացին մեզ համար Աստուծոյ մաղթանքներ։

Այսպէս բողոքականութիւնը ծածկաբար շարունակուեցաւ և փոքր առ փոքր տարածուեցաւ ոչ միայն Ալէքսանդրապոլ քաղաքում, այլ և մօտիկ գիւղերից մի քանիսում, ինչպիսիք են՝ Ղուլիման, Դիւզքեանդ, Ղութնի-Ղըշլաղ, Եգեանլար և այլք։

Այս ամենը Հայ ժողովրդից ի հարկէ ծածուկ չէր մնում, վասն զի բողոքական եղբայրները շատ

անգամ յայտնի խստակցութիւն էին բաց անում Հայց եկեղեցւոյ զանազան արարողութեանց ու վարդապետութեանց մասին և յաճախ կոպիտ լեզուով վիրաւորում էին Լուսաւորչականների կրօնական զգացումները։ Այսուհետև և օր աւուր զօրանում էր վերջիններիս դրդիռն ու գայրոյթը դէպի ինքնակոչ առաքեալները, որոնք ըստ մեծի մասին անկիրթ ու ոգէտ մարդիկ էին։

1881 թուականի չը գիտեմ որ ամսին, մի կիւրակի օր, երբ Մալաթիացի շրջիկ քարոզիչ Գրիգոր Գէորգեանը բողոքական հայերին գլխին հաւաքած՝ Գրիգոր Սարի-Գեավուրեանցի տանը քարոզ էր խօսում նոցա՝ Ալէքսանդրապոլցի մի խումբ խաժամուժ, մեծ մասով անգործ պատանիներ, յարձակուեցան այդ տան վերայ և ուզում էին յիշեալ քարոզչին ձեռք ձգել ու հալածել քաղաքից։ Ունկնդիրք շուտով նորան թաղցրին և դռները կողպեցին։ երբ յարձակում գործողները դռները կոտրեցին և ներս մտան՝ չը գտան քարոզչին։ Մի քիչ անցած Գրիգոր պատուելին Սարի Գեավուրեանցի տանից երկրագործի շորերով ծրարուած դուրս եկաւ փախաւ Ղուլինան գիւղ՝ հաւատացեալց մօտ, որտեղից և զանազան տեղեր անցնելով՝ վերջը հասաւ Տաճարուտ։ Տաճարուտ՝ իբրև նոցա քարոզիչ։ Տեղական ոստիկանապետը յիշեալ անկարգութեան առաջն առաւ և այս անխոհեմ գործի առաջնորդներին սպառնացին պատուէրներով զգուշանալ պատուիրեց։

Սրանից յետոյ Ալէքսանդրապոլու մէջ գը-

նուած բոզքական երկրագործները հող ունենալու ցանկութիւնից աւելի գրգռուած քան հալածանքներից ստիպուած՝ թախանձագին խնդրեցին կառավարութիւնից Կարսի նահանգում գատարկ մնացած գիւղերից մինն իւր հողերով հանդերձ տալ իրանց՝ յաղագս բնակութիւն։ Այս խնդրարկուների հետ միացան և ուրիշ անձինք մօտակայ գիւղերից, որոնք իրանք իրանց բոզքական էին ցոյց տալիս։ Սոցա խնդիրը յարգուեցաւ, և տրուեցաւ նոցա Ղարաղալա գիւղը։ 1882 թուականից ի վեր մինչև այժմ այստեղ եկած հաւաքուած են 48 տուն Հայ ժողովուրդ Ալէքսանդրապօլից, Կարսից և գիւղերից։ Սոքա ժողովուած են այդ տեղ իրրև ապահովութեան վայրում՝ բոզքական այսինքն աւետարանական-լուտերական հայերի անուամբ. բայց իրօք իրանց չնորհուած գիւղը գարձրել են մի տեսակ կրօնական Արշակաւան, որովհետև այդ 48 տուն ժողովրդի մէջ կան զանազան գաւանութեանց և ազանդների ձգտող և ծառայող մարդիկ. այդտեղ կը գտնէք և՝ աւետարանական, և՝ յունադաւան, և՝ սուրբօտնիկ, և՝ պրիգուն, և՝ բապտիստ։ Խեղճ անտէրունչ հօտ։... Ասումեն, որ մէջները գժտութիւններ ու անհամաձայնութիւններ կան. ոմանք զղջացած են և իրանց մայրենի եկեղեցուց գիրկն են ուզում գառնալ։ Այժմ սոքա տակաւին օրինական հոմիլ չ'ունին։ սակայն, ինչպէս կսմկասու զանազան անկիւններում գտնուող ուրիշ նկատուած բոզքականներ, սոքա էլ չեն մը նում. բոլորովին անինամ ու անայցելու ժիր և ար

թուն քարոզիչներ ու հովիներ երբեմն երբեմն գալիս են սոցա մօտ ևս մխիթարելու, կազդուրելու և օգնելու։

Ի դէպ և ի վերջ բանիս ասէ՛ք է ասեմ, որ այս տեսակ այցելուներին ու խնամարկուներին թըւում պատուաւոր տեղ է բռնում պ. Աբրահամ Ամիրխանեանցը։ Այս պարոնը վերին աստիճանի գործունեայ մարդ է. սա պաշտօնով թէև միայն «Աստուածաշնչի Բրիտանական ընկերութեան» կողմից ներկայացուցիչ է Թիֆլիս քաղաքում, այսինքն այդ ընկերութեան գլխաւոր գրավաճառը մեր կողմերում և մանր շրջիկ գրածախների ղեկավարը, բայց նա միևնոյն ժամանակ է և՛ թարգմանիչ [1]), և՛ քարոզիչ, և՛ այցելու, և՛ ղեկավար Անդրկովկասում գտնուած մանաւանդ հայ-բողոքականների համար։ Ամեն տեղ թղթակցութիւն ունի, ամեն տեղ խորհուրդներ է տալիս, ամեն տեղ ճգնում է աշակերտել։ Մէկ էլ տեսար Ամիրխանեացը Շուշի է, մէկ էլ տեսար Վաղարշապատ, Շամախի, Բագու, Ախտաբադ, Գեարքանջ գիւղում, Սազամար գիւղում, և այլն և այլն։ Թիֆլիսումն էլ սա է տեղացի հայ ու ասորի բողոքականների և բարեխառ մալականների քարոզիչը։ Մեր աշխարհն եկող գանազան քարոզիչներն ու գործիչ-

---

[1]) Աստուածաշնչի վերջին թարգմանութիւնը Հայերէն արևելեան աշխարհաբարով, որ տպագրել է վերոյիշեալ ընկերութիւնը, պ. Ամիրխանեանցի աշխատութիւնն է։

ներն ըստ մեծի մասին նորան են գիմում հարկաւոր տեղեկութեանց ու խորհուրդների համար, փաստն զի նա շատ լաւ է ճանաչում մեր ներքին ու արտաքին կեանքը։ Ընթերցող հայերին յայտնի են նորա առաքելական նամակներն առ աւետարանական եղբարս «Մշակ» լրագրի 1880 թուականի մի քանի համարներում։ Վերջապէս պ. Աբրահամ Ամիրխանեանցն իւր սահմանած գործը կատարում է ըստ ամենայնի ժրութեամբ և սրտով։ Խօսքս այս գործունէութեան օգտակար կամ վնասակար լինելու մասին չէ։ Եթէ չեմ սխալւում սորան է պատկանում և առանձին հայ-աւետարանական եկեղեցու վարչութիւն կազմելու միտքը։

ՎԵՐՋ։

# ՎՐԻՊԱԿՆԵՐ

| ԷՋ. | ՏՈՂ. | ՍԽԱԼ. | ՈՒՂԻՂ. |
|---|---|---|---|
| 1 | 12 | լինեն | լինին |
| 4 | 27 | » | » |
| 5 | 23 | 'ի թիւ | ի թիւս |
| 6 | 4 | գալուց | գալոց |
| 8 | 6 | գործունէութիւն | գործունէութիւնը |
| 9 | 26 | Շէքի | Շէքիի |
| 10 | 27 | նրա | նորա (այսպէս և բոլոր միւս տեղերում) |
| 11 | 14,24 | Ղարաբաղցի | Ղաբաղաղցի |
| » | 16 | Սկզբներում ոչ-միայն | Սկզբներում սա ևս ոչ միայն |
| 13 | 20 | չէ գիտէր | չգիտէր (այսպէս և միւս դէպքերում) |
| 15 | 6 | պարագայներին | պարագաներին |
| 17 | 19 | Ս. | Տ. |
| 19 | 23 | ուղարկվեցան | ուղարկո-եցան (այսպէս և միւս դէպքերում)։ |
| 20 | 24 | ժամանակվայ | ժամանակուան |
| 23 | 12 | չ'ուղարկին | չուղարկեն |
| » | 13 | ականջ չէ դրին | ականջ դրին |
| » | 23 | փոփոխվումէ | փոփոխ-ումէ (այսպէս և միւս դէպքերում) |
| 25 | 8 | Պ Ֆանտէր | Պ Ֆանդէր |
| » | 9 | Ֆիլիցիան | Ֆելիցիան |
| 24 | 27 | Շդրեմբերգ | Շպրեմբերգ |
| » | 28 | Կարգաս | Կարբաս |
| 20 | 1 | Վ իրդներ | Վ երտներ |
| 38 | 7 | կարճ ժամանակվայ | կարճամամանակվայ |

| | | | |
|---|---|---|---|
| 39 | 27 | մորմուտ | մորմոտ |
| 40 | 27 | Ղարաբաղցի | Ղարադաղցի |
| 42 | 28 | Հաուէր | Հաուէր |
| 45 | 6 | կովկասու ուսումնարան | կովկասու Ուսումնական վարչութեան թոյլատրութեամբ մի ուսումնարան |
| 46 | 23 | 140 տարի | 110 տարի |
| 47 | 27 | Մանդանեանց | Մարդանեանց |
| 44 | 6 | չէ մնում | չէր մնում |
| 50 | 15 | եկել | և եկել |
| 55 | 9 | կամիցեն | կամիցին |
| 56 | 5 | պռոտելով | պռատելով |
| » | 23 | Գիրքեցի | Գիւրդեցի |
| » | 28 | բարեհաջող | բարեյաջող |
| 64 | 10 | Պետունվ | Պիտունվ |
| 65 | 8 | » | » |
| 66 | 9 | բարուք | բարուք |
| 68 | 17 | Հաշ-Գեասան | Դաշ-Գեասան |
| 74 | 16 | աւետարանում | աւետարանում |
| 75 | 31 | պարապոյ | պարապոյ |
| 80 | 20 | Մաղաքեանին | առաջնորդին |
| 81 | 7 | Պոզոսի | Պօղոսի |
| 85 | 14 | դանդաղեն | դանդաչեն |
| 88 | 7 | Թառանեանց | Թառահեանց |
| 89 | 22 | և այլն | և այլ |
| 95 | 18 | Վորոյիշնալ | Վերոյիշնալ |
| 98 | 18 | Թարխանը | Թարխանովը |
| 99 | 10 | որ գրեալն | որ գրեալն է |
| » | 26 | Միննոյ | Միննոյն |
| 108 | 18 | խնդրել | խնդրեց |
| 122 | 2 | կարդացուելից | կարդացուելուց |
| » | 11 | առնում | անում |
| » | 21 | աղօթթ | աղօթք |
| 127 | 27 | հօրէն | հօրը |
| 128 | 4 | թողնել, որ | թողնել զաւակին, որ |

| | | | |
|---|---|---|---|
| 124 | 21 | պ. Ս. | պ. Ա. |
| 130 | 21 | Ֆ-Ներէ | Ֆ-Ներէ |
| 133 | 6 | Իշխանովի | Դիմանովի |
| » | 16 | Խ.—ին | Իս.—ին |
| 334 | 29 | երդերն | երգերն |
| 140 | 2 | բաշխուեցաւ | բաշխուեցաւ |
| » | 11 | Բառ.—եանց | Թառ.—եանց |
| 142 | 13 | Աղնաւորեանց | Աղնաւուրեանց |
| » | 16 | ուր | որ |
| » | 21 | գէպ | պիտի |
| 144 | 4 | պէտք | գէպք |
| » | 18 | Ղարադուլա | Ղարադաղլա |
| 155 | 28 | բերում այն այստեղ | բերում այստեղ |
| 162 | 29 | Լիւզեդովին | Լեզեդովին |
| 163 | 9 | Ամուէլեանցի | Սամուէլեանցի |
| 170 | 2 | Հայց | Հայոց |

Զանցառութեանց տուած մանր վրիպակները ինքնին կը հասկացուին։